ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱՏՉԵԼԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան 2016

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

unicef

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

unicef
յուրաքանչյուր երեխայի համար

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մատչելի արդարադատություն երեխաների համար

Երևան, 2016

Սույն տեղեկագիրը կազմվել է 2016 թվականին ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) աջակցությամբ իրականացվող «Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման» ծրագրի շրջանակում, որն իրականացվել է ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

Տեղեկագրում ներկայացված են ՀՀ արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված 2015թ.-ին *«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում»* և 2016թ.-ին «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման»* ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները:

Աշխատանքային խումբ

Կազմեց՝ Անահիտ Խաչատրյան
Խմբագրեց՝ Գայանե Հովակիմյան

Փորձագետներ

Դանիել Օ՛Դոնելլ, Արման Ալոյան, Նարինե Ալեքսանյան, Արթուր Հովհաննիսյան
Գլուխ 2, Բաժին 2.1, 2. 2,
Արման Խաչատրյան: Գլուխ 2 , Բաժին 2.3
Դանիել Օ՛Դոնելլ, Արշակ Գասպարյան: Գլուխ 3

Փաստաթղթում օգտագործված հապավումներ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՀՀ ԱՆ – Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

ՀՀ ԿԱ – Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր

ՏԿ կամ ՈՏԿ – ՀՀ ԿԱ ոստիկանության տեղեկատվական կենտրոն

ԱՎԾ – Ազգային վիճակագրական ծառայություն

ՔԿ – ՀՀ Քննչական Կոմիտե

ՔԿՎ – ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն

ՔԿԾ – ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն

ՔԿՀ – Քրեակատարողական հիմնարկ

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՅՈՒՆԻՍԵՖ – ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

ՔԴՕ – Քրեական դատավարության օրենսգիրք

Քր.Օր. - Քրեական օրենսգիրք

ԱԳԲ – Անչափահասների գործերով բաժանմունք

ՀՈԲ – Համայնքային ոստիկանության բաժանմունք

Բովանդակություն

1. Ներածություն ---------- 5

2. Օրենսդրության վերլուծություն և առաջարկներ---------- 8
2.1 Հայաստանի Հանրապետության Քրեական, Քրեական դատավարության օրենսգրքերի և նախագծերի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին---------- 9
2.2 Հայաստանի Հանրապետության Քրեակատարողական օրենսգրքի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին---------- 40
2.3 «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման դեպքում օրենսդրական և ընթացակարգային հարցերի համապատասխանեցումը միջազգային և Եվրոպական չափորոշիչներին--------- 54

3. Հայաստանում անչափահասների արդարադատության տեղեկատվական շտեմարանի ցուցիչներ ----------67

4. Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեություն ---------- 81
4.1 Անչափահասների արդարադատության խորհրդի նիստեր ---------- 81
4.2 Երեխաների մասնակցությամբ միջոցառումներ ---------- 88
4.3 Կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ ---------- 89
4.4 Հանրային իրազեկում ---------- 90

5. Կարիքների գնահատում և գործողությունների ծրագիր ---------- 93

6. Հավելված ---------- 99

Ներածություն

Սույն տեղեկագրի նպատակն է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված 2015թ.-ին *«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում»* և 2016թ.-ին «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման»* ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները՝ նպաստելով ոլորտի շարունակական բարեփոխումների ապահովմանը և ոլորտի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Հաշվի առնելով այն, որ համակարգում առկա է իրավունքների իրացման ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտություն՝ սույն ծրագրերն ուղղված էին Հայաստանում մատչելի արդարադատության հայեցակարգի զարգացմանը, երեխայամետ և զգայուն մոտեցումների ներդրմանը, կրկնազոհացման նվազեցմանը, շահերի պաշտպանությանը:

Երեխաների համար մատչելի արդարադատության մոտեցումը և հայեցակարգը բավականին նոր ձևավորված պրակտիկա է, որը հատկապես զարգացում է ստացել 1990-ական թվականներից: Այս մոտեցման անհրաժեշտությունը ծագել է տարբեր իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունից՝ որպես երեխայի հիմնարար իրավունքների ապահովման երաշխիք: Մի կողմից պրակտիկ հետազոտությունները, որոնք կատարվել են դատական մարմիններում, ցույց են տվել երեխաների խնդիրները, որոնք առնչվում են արդարադատությանը, մյուս կողմից՝ այդ խնդիրներին արձագանքելու անհրաժեշտությունը: Ընդ որում, խոսելով այս մոտեցման մասին՝ պետք է նշել, որ այն իր մեջ ներառում է քաղաքացիական, վարչական, քրեական արդարադատությունը և դրանց կողմից երեխաների համար մատչելի, զգայուն ընթացակարգերի և կառուցակարգերի ապահովումը: Մատչելի արդարադատությունը և արդարադատության իրավունքը հիմնարար իրավունք է, որն ապահովում է այլ իրավունքների իրացում տարբեր ոլորտներում: Այս մոտեցումն առաջ է եկել նաև լրացնելու երեխաների իրավունքների «պաշտպանություն» հասկացությանը՝ դառնալով որպես առավել լայն սահմանում՝ հատկապես հավասար հնարավորությունների և միջոցների առումով: Այն ընդգծում է բոլոր երեխաների համար հավասար և անհրաժեշտ միջոցների ստեղծումը, խտրականության բացառումը, իրավունքի վրա հիմնված հնարավորության ստեղծումը: Երեխաներն առնչվում են արդարադատության համակարգին որպես գործընթացի մասնակից՝ վկա, տուժող, կասկածյալ՝ ունենալով օրենքի հետ խնդիր. արդարադատությունը պետք է ուղղված լինի նրանց շահերի պաշտպանությանը՝ ապահովելով պաշտպանվածությունը և արձագանքելով նրանց կարիքներին:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում անչափահասների արդարադատության համակարգի զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը 2015թ.-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ նախաձեռնել է «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագիրը, որը բխում է նաև ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրից և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-ն որոշումն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N 1694-Ն որոշման, ՀՀ կառավարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի միջև համաձայնագրի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության միջազգային տարբեր կառույցների առաջարկների կատարման պահանջներից: Ծրագրի հեռահար նպատակն է օրենքի հետ առնչվող երեխայի շահերի պաշտպանության օրենսդրական, գործնական երաշխիքների ստեղծումը:

2015 թվականին *«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում»* ծրագիրը ներառում էր օրենսդրության միջազգային փորձաքննություն՝ երեխայի իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության տեսանկյունից, անչափահասների արդարադատության միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման համար գործողությունների պլանի մշակում, օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա և տուժող երեխաների հետ առնչվող անձնակազմի կարողությունների զարգացում: Այդ նպատակով երեխաների իրավունքների պաշտպանության բարելավման և երեխայամետ արդարադատության զարգացման տեսանկյունից իրականացվել է օրենսդրության վերլուծություն և ներկայացվել է առաջարկությունների համապատասխան փաթեթ, կազմվել են օրենքին առնչվող անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ցուցիչներ, երեխաների հետ առնչվող քննչական ծառայողների կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, ինչպես նաև ստեղծվել է Անչափահասների արդարադատության խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի գլխավոր նպատակն է երեխաների համար մատչելի դարձնել արդարադատությունը, խթանել համակարգի ներսում միջգերատեսչական համագործակցությունը: Խորհուրդը հարթակ է տարբեր կառույցների և կազմակերպությունների միջև արդարադատության մատչելիության ոլորտի բարելավմանը վերաբերվող հարցերի քննարկման և խնդիրների լուծման համար՝ ապահովելու դրանց կայունությունը և արդյունքների ամրապնդումը:

Խորհուրդը, որպես միջգերատեսչական մարմին, ներկայացնում է ոլորտի կառույցների խնդիրները և ոլորտում առկա հարցերը՝ նպաստելով միջգերատեսչական համագործակցությանը, տեղեկատվության փոխանակմանը, ինչպես նաև, հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, մշակում է համապարփակ ռազմավարություններ և համատեղ գործողություններ՝ ուղղված երեխաների արդարադատության մատչելիությանը:

Կարևոր է նաև շեշտադրել խորհրդի դերն օրենսդրական բարեփոխումների խթանման, մասնավորապես քրեական, քրեադատավարական, քրեակատարողական օրենսգրքերում և առկա նախագծերում երեխաների արդարադատությանն առնչվող համապատասխան առաջարկությունների ներկայացման առումով:

Խորհուրդը կազմված է պետական, միջազգային և հասարակական կառույցների ներկայացուցիչներից (Տես՝ Հավելված 1, Խորհրդի կազմ)

Խորհրդի համակարգումն իրականացվում է Արդարադատության նախարարության կողմից:

2016 թվականին աշխատանքները շարունակվել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ իրականացվող «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման»* ծրագրի շրջանակում՝ ուղղված քրեական, քաղաքացիական և վարչական վարույթներում երեխաների մասնակցությունը կարգավորող օրենսդրական և ընթացակարգային հարցերի միջազգային և եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցմանը, արդարադատության մատչելիության բարելավման

վերաբերյալ գործողությունների ծրագրի մշակմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը, երեխաների մասնակցությամբ միջոցառումների կազմակերպմանը, խորհրդի գործունեության շարունակականության ապահովմանը:

Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հինադրամի հետ 2015 թվականին *«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում»* և 2016 թվականին «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման»* ծրագրերն իրականացվել են ՀՀ ԱՆ «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

2. Օրենսդրության վերլուծություն և առաջարկություններ

Քրեական արդարադատության համակարգում երեխաների պաշտպանությանը վերաբերող միջազգային չափանիշները.

- Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա,
- Անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներ,
- Անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոններ,
- Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կանոններ,
- Միավորված ազգերի կազմակերպության նվազագույն ստանդարտ կանոններն ազատազրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ,
- Քրեական արդարադատության համակարգում ի շահ երեխաների իրականացվող գործողությունների վերաբերյալ հիմնարար սկզբունքներ,
- Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքները քրեական արդարադատության գործընթացում վերականգնողական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ,
- Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաների նկատմամբ արդարադատության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքեր:

2015 թվականին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության և ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակում Անչափահասների գործերով արդարադատության համակարգում օրենսդրության բարելավման նպատակով իրականացվել է Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարություն, քրեակատարողական օրենսգրքերի վերլուծություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության տեսանկյունից: Նախապես կազմվել է տեղացի և միջազգային փորձագետների խումբ, ովքեր համատեղ աշխատանքի արդյունքում իրականացրել են վերլուծություն և մշակել համապատասխան առաջարկություններ և մեկնաբանություններ: Այդ նպատակով միջազգային փորձագետ Դանիել Մայքլ Օ՛Դոննելլի և ազգային փորձագետների՝ Արման Ալոյանի և Նարինե Ալեքսանյանի մասնակցությամբ կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ Քննչական կոմիտեում, ԱՆ քրեակատարողական վարչությունում, Ոստիկանությունում, Դատական դեպարտամենտում, Դատախազությունում, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության տեսանկյունից օրենսդրական բացերի և դրանց միջազգային ստանդարտներին համապատասխանության հարցը:

Ստորև ներկայացվում են փորձագետների կողմից տրված առաջարկությունները և մեկնաբանությունները.

2.1 Հայաստանի Հանրապետության Քրեական, Քրեական դատավարության օրենսգրքերի և նախագծերի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին

1. Երեխաների վերաբերյալ քրեաբանական նորմերը
2. Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ նորմերը
3. Պատժի հասկացությունը

Հարկավոր է Քրեական օրենսգրքի նախագծում և Քրեական դատավարության օրենսգրքի նախագծում վերանայել *«պատիժ»* տերմինի գործածությունը, առնվազն՝ իրավախախտում կատարած անչափահասների մասով: Մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանվում է, որ բանտարկյալների *«վերափոխումը և սոցիալական վերականգնումը պետք է ցանկացած ուղղիչ համակարգի հիմնական նպատակը լինեն»*[1]: Կրկնահանցավորության կանխումը և իրավախախտում կատարած անձանց հասարակությունում վերաինտեգրելը պետք է նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների հիմնական նպատակը լինի[2]: Այս սկզբունքը կիրառվում է իրավախախտում կատարած բոլոր անձանց վրա, լինեն դրանք անչափահասներ, թե չափահասներ: Դա հատկապես տեղին է հանցագործություն կատարած անչափահասների պարագայում, որովհետև անչափահասները դեռևս գտնվում են սոցիալական և հոգեբանական զարգացման ընթացքում, ուստի, ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք դրական կարձագանքեն կրկնահանցավորության կանխմանն ուղղված միջոցառումներին և ծրագրերին: Երեխայի իրավունքների պաշտպանության կոնվենցիայի (ԵԻԿ) 40.1 հոդվածը սահմանում է.

Մասնակից պետություններն ընդունում են քրեական օրենսդրությունը խախտած համարվող, մեղադրվող կամ մեղավոր ճանաչված յուրաքանչյուր երեխայի իրավունքը՝ արժանանալու այնպիսի վերաբերմունքի, որը նպաստում է նրա արժանապատվության և նշանակալիության զգացումի զարգացմանը, երեխայի մեջ ամրապնդում է հարգանքը մարդու իրավունքների և այլոց հիմնական ազատությունների նկատմամբ, և որի դեպքում հաշվի են առնվում երեխայի տարիքը և հասարակության մեջ նրա վերաինտեգրման և հետագա դրական դերակատարությանը նպաստելու ցանկալիությունը: Թեև այլոց իրավունքները խախտող գործողությունների համար պատժելուն անչափահասների գործերով արդարադատության շրջանակներում որոշակի տեղ հատկացված է, դա չպետք է անչափահասների գործերով արդարադատության հիմնական նպատակը լինի, ինչը դրսևորվում է պատժի մասին հաճախակի հիշատակումներով: *«Պատիժ»* բառի փոխարեն հոդվածների մեծամասնությունում հարկավոր է գործածել *«պատժամիջոցներ»* տերմինը:

Ա. Քրեական օրենսգրքի Ընդհանուր մասը և իրավախախտում կատարած անչափահասները

Քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ տասնչորս տարին լրացած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության որոշակի հանցագործությունների, ներառյալ՝ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, մարդուն առևանգելու, բռնաբարության և սեռական բնույթի այլ լուրջ հանցագործությունների, կողոպուտի և սեփականության դեմ ուղղված այլ

[1] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված10.3
[2] Տես Ազատությունից զրկելու հետ չկապված Տոկիոյի նվազագույն ստանդարտները, կանոն 10.1

հանցագործությունների, ինչպես նաև խուլիգանության համար[3]: 16-ից 18 տարեկան անձինք ենթակա են քրեական պատասխանատվության մնացած բոլոր հանցագործությունների համար, բացառությամբ նրանց, որոնց դեպքում չափահասությունը հանցագործության տարրերից է հանդիսանում[4]: Դա չի նշանակում, որ 18 տարին չլրացած բոլոր անձանց ցուցաբերվում է նույն վերաբերմունքը, ինչ չափահասների նկատմամբ: Նրանց նկատմամբ չեն նշանակվում չափահասների նկատմամբ նշանակվող որոշ պատժամիջոցներ, իսկ պատժամիջոցների նշանակման և կատարման կանոնները տարբեր են (տես ստորև):

Քրեական օրենսգրքի՝ ռեցիդիվի մասին 22-րդ հոդվածը սահմանում է, որ այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, հաշվի չեն առնվում[5]: Օրենսգրքի 62-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանքը կատարելիս տասնութ տարին լրացած չլինելը հանդիսանում է մեղմացնող հանգամանք[6]: Հանցանքը կատարելիս հղի լինելը ևս հանդիսանում է մեղմացնող հանգամանք, ինչպես և պատիժ նշանակելու պահին հղիությունը կամ խնամքի տակ մինչև տասնչորս տարեկան երեխայի առկայությունը[7]: Բացի այդ, 78-րդ հոդվածը մանրամասն նորմեր է պարունակում հղի կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կանանց նկատմամբ պատիժ նշանակելու վերաբերյալ: Եթե կատարվածը ծանր հանցագործություն չէ, նման կանայք կարող են *«ազատվել պատիժը կրելուց»* կամ հետաձգել պատիժը կրելը: 57-րդ հոդվածը, որը վերաբերում է *«խիստ մեկուսացման պայմաններում պահելու»* ձևով կարճատև բանտարկությանը, և որը կոչվում է «կալանք», չի նշանակվում դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած անձանց կամ հղի կանանց կամ «խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց» նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, Օրենսգրքի այս դրույթները ներդաշնակ են երեխաների և կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային ստանդարտներին: Բազմաթիվ միջազգային փաստաթղթեր սահմանում են, որ հարկավոր է սահմանել տարիքային շեմ, որից ցած գտնվող երեխաները չեն կարող քրեական հետապնդման ենթարկվել հանցագործությունների համար[8]: Որևէ փաստաթղթով սահմանված չէ, թե որը պետք է լինի այդ շեմը, սակայն Երեխայի իրավունքների կոմիտեն (ԵԻԿոմ) սահմանել է, որ *«խորհուրդ է տրվում»* 14 կամ 16 տարեկանը[9]: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները ևս սահմանում են, որ *«14 կամ 15 տարեկանը այն ստանդարտն է, որը պետք է պահպանվի Եվրոպայում»*[10]: Սույն օրենսգրքի 24-րդ հոդվածը լիովին համապատասխանում է վերոհիշյալ սկզբունքի տվյալ մեկնաբանությանը: Օրենսգրքի 22-րդ հոդվածը անչափահասներին ռեցիդիվիզմի սահմանումից դուրս թողնելու շնորհիվ համահունչ է Կոմիտեի այն հանձնարարականին, որ «իրավախախտում կատարած երեխաների անձնական գործերը չպետք է կիրառվեն

[3]104-109, 112-116, 131, 138, 139, 176, 177, 179, 182, 183, 185.2-3, 238, 246, 258 և 269 հոդվածներ.

[4]Հոդված 24.1.

[5] Մաս 4

[6]1-ին մասի 2-րդ կետ.

[7]1-ին մասի 3-րդ կետ և 1-ին մասի 4-րդ կետ.

[8] Տես, օրինակ, ԵԻԿ 40.3(ա) հոդվածը, Իրավախախտումներ կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները, Եվրոպայի խորհուրդ, փաստաթուղթ թիվ CM(2008) 128, հիմնական սկզբունք թիվ 4.

[9]Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, Երեխաների իրավունքները անչափահասների գործերով արդարադատությունում, ՄԱԿ, փաստաթուղթ թիվ CRC/C/GC/10, 2007, պարբերություն 30.

[10] Եվրոպայի խորհուրդ, փաստաթուղթ թիվ CM(2008) 128, հավելված 1.

իրավախախտում կատարած միևնույն անձի հետ կապված հետագա գործերով չափահասների համար նախատեսված վարույթի ընթացքում… կամ ծանրացնեն այդ գործերով կայացվող դատավճիռները»[11]:

Հղիությունը որպես մեղմացնող հանգամանք, իսկ դատապարտված կանանց պարագայում՝ *«պատժից»* ազատելու կամ պատժամիջոցների կրումը հետաձգելու հիմնավոր պատճառ սահմանող նորմերը դրական են՝ հաշվի առնելով դեռևս չծնված երեխաների առողջության և զարգացման վրա դրանց դրական ազդեցությունը: Դրական են նաև խնամքի տակ երեխաներ ունեցող անձանց նկատմամբ առավել բարենպաստ վերաբերմունքը թույլատրող դրույթները, քանի որ դրանք օգնում են կանխել երեխաներին ծնողներից բաժանելը: Այս դրույթներից երկուսը, որոնք տեղ են գտել 57-րդ և 62-րդ հոդվածներում, կիրառվում են խնամքին երեխա ունեցող անձանց նկատմամբ: Դա համահունչ է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 18-րդ հոդվածով ընդունված «երեխայի դաստիարակության և զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր և հավասար պատասխանատվության սկզբունքին»: Սակայն 57-րդ և 62-րդ հոդվածները վերաբերում են այն անձանց, ովքեր իրենց խնամքի տակ ունեն, համապատասխանաբար, 8 և 14 տարին չլրացած երեխաներ, իսկ 78-րդ հոդվածը վերաբերում է խնամքի տակ 2 տարին չլրացած երեխաներ ունեցող կանանց: Նորածին երեխաների և նրանց մայրերի միջև առանձնահատուկ կապվածությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ կարող է դիտվել որպես խտրականություն երեխաներին խնամող արական սեռի անձանց նկատմամբ, թեև խնամակալների համար բարենպաստ պայմաններ տրամադրող դրույթներից որևէ մեկը չի սահմանում՝ խնամակալը պետք է լինի երեխայի մա՞յրը, թե՝ հայրը:

Բ. Քրեական օրենսգրքի 5-րդ բաժնի և Քրեական օրենսգրքի նախագծի համեմատությունը

Օրենսգրքի Ընդհանուր մասի 5-րդ բաժնի 14-րդ գլուխը պարունակում է անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի վերաբերյալ տասներկու հոդված (85-96-րդ հոդվածներ): Քրեական օրենսգրքի 5-րդ բաժինը բաղկացած է 3 գլխից (15-ից 18-րդ), որոնք պարունակում են տասնութ հոդված (104-ից 121-րդ)՝ անչափահասների (դեռահասների) և 18-21 տարեկան երիտասարդների քրեական պատասխանատվության և պատժի վերաբերյալ: Երիտասարդների վերաբերյալ լրացուցիչ հատուկ կանոններ սահմանելը համահունչ է միջազգային ստանդարտներին: Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի կանոններով (Պեկինյան կանոններ) խրախուսվում է անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ նորմերը երիտասարդների վրա տարածելը[12]: Այդուհանդերձ, հետևյալ մեկնաբանությունները սահմանափակվում են անչափահասների վերաբերյալ դրույթներով, քանի որ 18 տարին չլրացած անձինք միջազգային համապատասխան նորմերով օժտված են բազմաթիվ առանձնահատուկ իրավունքներով: Քրեական օրենսգիրքը չի սահմանում անչափահասների գործերով արդարադատության նպատակները: Օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է իր խնդիրները, այն է՝ քաղաքացու և այլ անձանց և իրավաբանական անձանց իրավունքները, սեփականությունը, շրջակա միջավայրը, սահմանադրական կարգը, հասարակական

[11] Նույն տեղում, պարբերություն 66.

[12] Կանոն 3.3.տես նաև Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն 17.

կարգը և անվտանգությունը պաշտպանելը՝ հանցագործության սահմանումը, քրեական պատասխանատվության հիմքերը և հանցագործությունների համար նախատեսված պատիժները և այլ միջոցները սահմանելու միջոցով: Իրավախախտում կատարած անձանց վերականգնումը և կրկնահանցավորության կանխարգելումը հիշատակված չեն:

Օրենսգրքի նախագծի 104-րդ հոդվածը սահմանում է. *«Պատժի ընդհանուր նպատակներից բացի, հանցագործություն կատարած անչափահասի նկատմամբ նշանակված պատիժը նպատակ ունի ապահովել անչափահասի նորմալ ֆիզիկական և հոգեկան զարգացումը, դաստիարակությունը և անչափահասին այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը»:* Սա դրական զարգացում է, թեև այս պարբերությունն առավել ներդաշնակ կլիներ միջազգային սկզբունքներին, եթե նշվեր, որ անչափահասի դաստիարակությունը, պաշտպանությունը և նորմալ զարգացումն ապահովելը նշանակված պատժամիջոցի *հիմնական նպատակն է*: Այս պարբերությունն առավել կներդաշնակեցվեր միջազգային սկզբունքներին, եթե տրվեր զարգացման առավել լայն նկարագրությունը: ԵԻԿ 27.1 հոդվածը խոսում է ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման մասին: Նախագծի 105 հոդվածով ընդունվում են Օրենսգրքով չսահմանված երեք պատժամիջոցներ. որոշակի գործողություններ կատարելու իրավունքից զրկելը, ծնողական իրավունքներից զրկելը և ազատության սահմանափակումը: Բացի այդ, նախագծի 121-րդ հոդվածով առաջարկվում են պայմանական պատժամիջոցներ: Գործող օրենսգիրքն անչափահասների համար նախատեսված պայմանական պատժամիջոցների վերաբերյալ նման հոդված չունի: Օրենսգրքի նախագծի 5-րդ հոդվածը չի տալիս որոշակի գործունեությամբ զբաղվելու, ծնողական իրավունքներից զրկելու և ազատության սահմանափակման սահմանումները: Գործող օրենսրքի 87-ից 89-րդ հոդվածները սահմանում են ընդունված չորս պատժամիջոցներից երեքը, սակայն չեն սահմանում հանրային աշխատանքները: Հանրային աշխատանքները սահմանված են նախագծի 107-րդ հոդվածով: Առաջարկություններ. ազատության սահմանափակման ձևով պատժատեսակի և պայմանական պատժատեսակների սահմանումը ևս դրական զարգացում կլիներ: Առաջարկություններ. օգտակար կլիներ տալ ազատության սահմանափակման սահմանումը, որը գործող Օրենսգրքով նախատեսված չէ: Որոշակի գործունեությամբ զբաղվելու և ծնողական իրավունքներից զրկելու սահմանումներն ավելացնելն առանձնապես կարևոր է, քանի որ ինքնին պարզ չէ, թե դրանք ինչպես են անդրադառնալու 18 տարին չբոլորած, իրավախախտում կատարած անձանց վրա: Քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածը սահմանում է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, որը կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ անձն իր մասնագիտական գործունեության ընթացքում կատարել է իր մասնագիտական գործունեության հետ անհամատեղելի հանցագործություն[13]: Մի կողմից, կարող է թվալ, թե դա հազվադեպ կարող է պատահել 18 տարին չբոլորած, իրավախախտում կատարած անձանց հետ: Մյուս կողմից, երեխաների իրավունքների վերաբերյալ միջազգային օրենսդրությամբ պահանջվում է, որ երեխաների դեմ սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց պետք է արգելել զբաղեցնել երեխաների հետ շփում ենթադրող մասնագիտական պաշտոններ, անկախ այն բանից՝ նրանք այդ հանցանքը կատարել են իրենց մասնագիտական գործունեության

[13] 52.3 հոդված.

համատեքստո՞ւմ, թե՝ ոչ[14]: Օրինակ, երեխայի նկատմամբ սեռական չարաշահում թույլ տված անձը չպետք է կարողանա ուսուցիչ դառնալ, եթե անգամ կատարված հանցագործության ժամանակ տուժողի հետ ուսուցիչ-աշակերտ հարաբերություն չի եղել: Առաջարկություն. այս նորմը պետք է ընդունվի նոր Քրեական օրենսգրքով: Այդուհանդերձ, իրավախախտում կատարած անչափահասների նկատմամբ դրա կիրառումը չպետք է լինի նույն կերպ, ինչ չափահասների պարագայում: Տարեկից դեռահասների միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական շփումները չպետք է որևէ գործունեությամբ զբաղվելու արգելքի պատճառ դառնան, սակայն ավելի փոքր տարիքի երեխայի նկատմամբ սեռական չարաշահումը նման արգելք սահմանելու հիմնավոր պատճառ է: Ծնողական իրավունքներից զրկելու ձևով պատժամիջոցների մասին դրույթը պետք է համապատասխանի ընտանիքի միասնականության և երեխաների ինքնության վերաբերյալ միջազգային նորմերին: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ երեխաներն իրավունք ունեն խնամվելու իրենց ծնողների կողմից, իսկ 8-րդ հոդվածով սեփական ընտանիքի հետ շփվելը համարվում է ինքնության իրավունքի մի մասը: Ծնողական իրավունքներից զրկելը, անշուշտ, երբեմն անհրաժեշտ է երեխաներին պաշտպանելու համար: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է, որ ծնողներից երեխաների ցանկացած բաժանում, անգամ՝ ժամանակավոր, պետք է հիմնված լինի այն եզրակացության վրա, որ բաժանումը *«անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի լավագույն շահերից»:* Նման քայլ ձեռնարկելը կարող է անհրաժեշտ լինել այնպիսի դեպքերում, երբ ծնողը երեխայի դեմ հանցագործություն է կատարել, այն էլ այն դեպքում, երբ դա կատարվում է երեխային պաշտպանելու նպատակով, այլ ոչ որպես պատիժ՝ հանցագործության դիմաց: Անհրաժեշտության սկզբունքը նշանակում է, որ խնդրի առարկա անձանց իրավունքների վրա նվազ ազդեցություն ունեցող որևէ այլ միջոց չէր կարող արդյունավետ լինել: Միջազգային նորմերը սահմանում են, որ հարկավոր է ձեռնարկել ծրագրեր՝ երեխաների դեմ հանցագործություններ կատարած անձանց օգնելու համար, ինչպես նաև գնահատել կրկնահանցավորության ռիսկը, իսկ Երեխայի իրավունքների կոմիտեն հայտարարել է, որ երբ ծնողը բռնության ձևով հանցագործություն է կատարում երեխայի դեմ, ապա *«սոցիալական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցները և վերականգնողական մոտեցումը հաճախ նախընտրելի են զուտ պատժիչ դատական միջամտությունից»*[15]: Առաջարկություն. կամ Օրենսգրքի նախագծից հանել որպես պատժամիջոց ծնողական պատասխանատվությունից զրկելու մասին հիշատակումը, կամ վերաձևակերպել այս միջոցի կիրառման պայմանները՝ վերոհիշյալ սկզբունքների պահպանման առումով:Նախագծի 108-րդ և 109-րդ հոդվածները, որոնք համապատասխանաբար վերաբերում են կարճատև արգելանքին և բանտային պատժամիջոցներին, հիշատակում են ծայրահեղ միջոցի սկզբունքը: Սա դրական զարգացում է, թեև պատժամիջոցների վերաբերյալ Օրենսգրքի նախագծի այլ դրույթները ոչ ամբողջությամբ են համապատասխանում այս սկզբունքին: Նախագծի 110.1 հոդվածը, ինչպես և գործող

---

[14] Տե՛ս, Երեխաներին սեռական շահագործումից և սեռական չարաշահումներից պաշտպանելու մասին Լանցարոտեի կոնվենցիան (Լանցարոտեի կոնվենցիա). Հայաստանը ստորագրել է այս փաստաթուղթը:

[15] Տե՛ս, Լանցարոտեի կոնվեցիայի 15-րդ և 16-րդ հոդվածները, որոնք հատկապես վերաբերում են սեռական բնույթի հանցագործություններին: Ընդհանուր մեկնաբանություն թիվ 13 (2011) Բռնության բոլոր ձևերից զերծ մնալու՝ երեխայի իրավունքը, ՄԱԿ-ի փաստաթուղթ թիվ CRC/C/GC/13, 56-րդ պարբերություն (Կոմիտեն անկախ փորձագետներից կազմված անկախ մարմին է, որը պատասխանատու է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային պետությունների համապատասխանության մոնիթորինգի և Կոնվենցիային համապատասխանելու եղանակների վերաբերյալ պետություններին խորհրդատվություն տրամադրելու համար:

օրենսգրքի 90.1 հոդվածը, թվարկում է այն գործոնները, որոնք պետք է հաշվի առնվեն՝ մեղավոր ճանաչված անչափահասների նկատմամբ դատավճիռ կայացնելիս: Սա նաև համահունչ է երեխաների իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերին[16]: Թեև 108-րդ հոդվածով ծայրահեղ միջոցի սկզբունքի ճանաչումը դրական զարգացում է, այս հոդվածը հնարավոր կդարձնի 14-18 տարեկան դատապարտված անչափահասների նկատմամբ կալանքի վերաբերյալ դառավճիռ կայացնելը: Գործող քրեական օրենսգրքով այն կարող է կիրառվել միայն 16 տարին լրացած անչափահասների նկատմամբ[17]: Այս պատժամիջոցի տևողությունը (15 օրից մինչև 2 ամիս) անչափահասների և չափահասների համար նույնն է: Քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն, այս պատժամիջոցը կրող բանտարկյալները պահվում են մենախցերում, նրանց չի թույլատրվում նամակներ կամ ծանրոցներ ստանալ, և նրանց միայն թույլատրվում է ամիսը մեկ անգամ տեսակցել ծնողների հետ, իսկ կրթական ծրագրերին նրանք չեն մասնակցում: Նման պայմաններում մեկուսացումը չի համապատասխանում անչափահաս բանտարկյալների իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերին[18]: Հետևաբար, այս պատժամիջոցը միջազգային ստանդարտներին չի համապատասխանի այնքան ժամանակ, քանի դեռ մեկուսացման պայմանների հետ կապված նշանակալի փոփոխություններ չեն կատարվել, իսկ Քրեական օրենսգրքի նախագծով նման պատժատեսակների տարածումն ավելի փոքր տարիքի անչափահասների վրա՝ կվատթարացնի միջազգային ստանդարտների այդ հակասությունը: Առաջարկություն. Օրենսգրքի նախագիծը հարկավոր է վերանայել՝ անչափահասների նկատմամբ կալանքի ձևով պատժամիջոցի նշանակումը բացառելու նպատակով:Թեև նախագծի 109-րդ հոդվածով *«ծայրահեղ միջոցի»* սկզբունքի ճանաչումը դրական զարգացում է, այս հոդվածի առաջին մասը հնարավոր է դարձնում անչափահասների կողմից ոչ մեծ ծանրության հանցանքների կատարման համար մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում նախատեսող դատավճիռ կայացնելը: Սա, թերևս, համահունչ չէ միջազգային ստանդարտներին: Ծայրահեղ միջոցի սկզբնաղբյուրը՝ Պեկինյան կանոնները, նշում է, որ անչափահասների նկատմամբ չպետք է ազատազրկում ենթադրող դատավճիռ կայացվի, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք կատարել են *«մեկ այլ անձի նկատմամբ բռնությամբ զուգորդված լուրջ արարք կամ շարունակաբար կատարել են այլ ծանր հանցագործություններ, և եթե այլ միջոց կիրառելը նպատակահարմար չէ»*[19]: Նույն կերպ, Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների մեկնաբանություններում սահմանված է, որ *«Ազատությունից զրկելը պետք է կիրառվի միայն բարձր տարիքի անչափահասների նկատմամբ՝ բռնությամբ զուգորդված հանցագործության կամ շարունակական հանցավոր գործունեության համար»*[20]: Առաջարկություն. օրենսգրքի նախագիծը պետք է փոփոխվի՝ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար ազատազրկում ենթադրող պատժամիջոցների կիրառումը բացառելու նպատակով: Քրեական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածը նշում է, որ ազատությունից զրկելու հետ կապված պատիժները չպետք է կիրառվեն ոչ ծանր կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասների նկատմամբ, եթե նրանք այդ հանցագործությունները կատարել են

[16] Տե՛ս, Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները, թիվ 5 հիմնական սկզբունքը.Պեկինյան կանոնների թիվ 16.1 և 17.1ա կանոնները.

[17] 57-րդ և 88-րդ կանոններ.

[18] Տե՛ս, Պեկինյան կանոնների թիվ 32, 38, 42, 59-61 կանոնները և Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 53.3, 78.3-78.4, 80.1 և 83 կանոնները.

[19] Կանոն 17.1 (գ).

[20] Թիվ 10 կանոնի մեկնաբանություն, որով վերահաստատվում է *«ծայրահեղ միջոցի»* սկզբունքը.

առաջին անգամ: Ի հակառակ առաջին մասի, այս դրույթը դատավճիռների կայացման վերաբերյալ կանոններն ավելի է մոտեցնում միջազգային ստանդարտներին, մասնավորապես՝ Պեկինյան կանոնների թիվ 17 կանոնին: Նախագծի 111-րդ հոդվածը չավարտված հանցագործության համար որպես նվազագույն պատիժ նախատեսում է երեք ամիս ժամկետով ազատազրկում: Գործող օրենսգրքի 65-րդ հոդվածը, որը վերաբերում է որևէ անձի կողմից չավարտված հանցագործության կատարմանը, պատժամիջոցի նվազագույն չափ չի սահմանում: Նախագծի 111-րդ հոդվածը դժվար է համադրել ծայրահեղ միջոցի, ինչպես նաև այն սկզբունքին, որ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասների նկատմամբ պատշաճ պատժամիջոցը որոշելիս հարկավոր է հաշվի առնել համապատասխան բոլոր գործոնները: Առաջարկություն. հարկավոր է քննարկել չավարտված հանցագործությանը մասնակցած անչափահասների համար ազատազրկման նվազագույն ժամկետ սահմանելը բացառելու նպատակահարմարությունը: Նախագծի 112-րդ հոդվածը վերաբերում է կրկնակի հանցագործությունների համար նախատեսված պատժամիջոցներին: Այս հոդվածի որոշ դրույթներ կրկնում են գործող օրենսգրքի 90-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերի որոշ հատվածները: Միակ տարբերությունն այն է, որ նախագծի այդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը թույլ են տալիս ոչ մեծ ծանրության մի քանի հանցագործությունների համար դատապարտված անչափահասներին դատապարտել 2-ից 3 տարի ազատազրկման՝ կախված տարիքից: Սա բացասական զարգացում է, քանի որ, ինչպես նշվել է վերը, ներկայումս գործող օրենսգրքի համաձայն, ազատազրկման հետ կապված պատժամիջոցներ չեն կարող նշանակվել ոչ մեծ ծանր հանցագործություն կատարած անչափահասների նկատմամբ՝ անկախ վերջիններիս տարիքից: Առաջարկություն. հարկավոր է քննարկել այս դրույթները հանելու հնարավորությունը: Նախագծի 112-րդ հոդվածը, ինչպես և 90-րդ հոդվածի 4-րդ մասը, սահմանում է, որ հանցագործությունների համակցությամբ պատժի առավելագույնը 12 տարին է: Այդուհանդերձ, նախագծի այդ հոդվածը 12 տարի ժամկետով ազատազրկման նշանակման նոր պայման է առաջադրում, այն է՝ կյանքից դիտավորությամբ զրկելու հանցագործության համար դատվածությունը: Բազմաթիվ հանցագործությունների համար դատապարտված անչափահասների նկատմամբ առավելագույն պատժամիջոցի նշանակման հետ կապված այս նոր սահմանափակումը դրական զարգացում է, որը համահունչ է համարժեքության սկզբունքին: Նախագծի 112-րդ հոդվածի չորրորդ մասը ևս դրական է: Նախագծի 113-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ իրավախախտում կատարած 16 տարին չլրացած անձը նախկինում կատարած հանցագործության համար նշանակված պատիժը կրելու ընթացքում նոր հանցագործություն է կատարում, նախորդ պատժի չկրած մասը պետք է գումարվի նոր պատժամիջոցին՝ պայմանով, որ պատժամիջոցի հանրագումարը չգերազանցի 10 տարին: Եթե իրավախախտում կատարած անձի 16 տարեկանը լրացել է, սակայն 18 տարեկանը դեռ չի լրացել, ապա առավելագույն պատիժը կարող է լինել 12 տարին: Այս դրույթները, թերևս, համահունչ չեն *«հնարավոր կարճ ժամկետի»* սկզբունքին, որն ընդունված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 37(բ) հոդվածով: 16 տարեկանը չլրացած անձի նկատմամբ 10 տարի ժամկետով պատիժ նշանակելը կարող է ծառայել պատասխանատվության անխուսափելիության և հանցանքի կատարումից զերծ մնալու նպատակներին, սակայն գրեթե վստահաբար այն բացասական ներգործություն կունենա վերասոցիալականացման հնարավորության վրա: Առաջարկություն. հարկավոր է քննարկել Օրենսգրքի նախագծից այս հոդվածը հանելու հնարավորությունը, որպեսզի նախագծի 109-րդ հոդվածով նախատեսված պատժամիջոցի առավելագույն չափը կիրառվի հանցագործության համար մեղավոր ճանաչված բոլոր անչափահասների նկատմամբ:Նախագծի 114-րդ հոդվածը, ինչպես և գործող օրենսգրքի 91-րդ հոդվածը, իրավախախտում կատարած անչափահասներին թույլ

է տալիս որոշակի հանգամանքների առկայության դեպքում ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնում է, որ *«պատժի նպատակներին կարելի է հասնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ»*: Այս նորմը դրական է և համահունչ է *«ծայրահեղ միջոցի»* սկզբունքին: Այդուհանդերձ, այն լիարժեք չի համապատասխանում սկզբունքին, քանի որ եթե դատարանը համոզված է, որ նման միջոցներով կարող է կանխել կրկնահանցավորությունը, ապա չպետք է նշանակություն ունենա այն, թե որքան ծանր է կատարված հանցագործությունը. նշանակություն պետք է չունենա նաև հանցանքն առաջին կամ ոչ առաջին անգամ կատարելը: Լինում են դեպքեր, երբ թեև կատարված հանցագործությունը խիստ ծանր է, սակայն կրկնահանցավորության հավանականությունը շատ ցածր է[21]: Սկզբունքորեն, նման դեպքերում իրավախախտում կատարած անձը չպետք է քրեական պատասխանատվության ենթարկվի, կամ, առնվազն, նրա նկատմամբ չպետք է ազատությունից զրկելու հետ կապված պատժամիջոց նշանակվի: Առաջարկություն. հարկավոր է քննարկել այս հոդվածը վերանայելու նպատակահարմարությանը՝ այն ծայրահեղ միջոցի սկզբունքին համապատասխանեցնելու համար: Գործող քրեական օրենսգրքի 91.1 և 92.1 հոդվածներով *«նախազգուշացումը»* ընդունվում է որպես միջոց, որը կարող է կիրառվել իրավախախտում կատարած անչափահասների նկատմամբ, եթե դատարանը որոշում է նրանց ազատել քրեական պատասխանատվությունից: Նախագծի 114.2 հոդվածը նման բան չի նախատեսում: Դա լավ չէ, քանի որ որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ նախազգուշացումները կարող են կանխել կրկնահանցավորությունը: Առաջարկություն. հարկավոր է քննարկել նոր Օրենսգրքում նախազգուշացման ձևով միջոցը վերականգնելու հնարավորությունը:Նախագծի 114-րդ հոդվածը թույլ է տալիս անչափահասներին *«ազատել պատժից»,* եթե դատարանը գտնում է, որ *«պատժի նպատակներին կարելի է հասնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների»* կիրառմամբ: Այս հոդվածը որոշ առումներով նման է Քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածին, որով անչափահասն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը գտնում է, որ ուղղումը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ[22]: Գործող օրենսգրքի 91-րդ և նախագծի 114-րդ հոդվածները հիշեցնում են անչափահասների գործերով արդարադատության արդիական համակարգերի հիմնական բաղադրիչը՝ գործերի լուծման արտադատական եղանակը (diversion)[23]: Այդ հոդվածները, այդուհանդերձ, արտադատական եղանակից երկու տարբերություն ունեն. արտադատական լուծման համար պահանջվում է իրավախախտում կատարած անձի համաձայնությունը, և այդ որոշումը պետք է կայացվի նախքան գործի դատական քննությունը[24]: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 423-րդ և 425-րդ հոդվածների շարադրանքն

---

[21] Նման պարադիգմային դեպքի օրինակ է, երբ դեռահասն սպանել կամ ծանր մարմնական վնասվածք է պատճառել՝ իր, կամ իր ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն գործադրող չափահաս անձին:

[22] Նախագծի 114-րդ հոդվածի 6-րդ մասից կարծեք թե բխում է, որ այս հոդվածով անչափահասը ազատվում է քրեական պատասխանատվությունից, և ոչ պարզապես *«պատժից»*:

[23] Արտադատական լուծումը խորհուրդ է տրվում, սակայն չի պահանջվում միջազգային ստանդարտներով. Տե՛ս, ԵԻԿ հոդված 40.3(բ), Պեկինյան կանոնների 11-րդ կանոնը և Երեխայանպաստ արդարադատության վերաբերյալ եվրոպական ուղենիշները, ուղենիշներ 23-26: Այն երկու հիմնական առավելություն ունի. այն նվազեցնում է դատարանների ծանրաբեռնվածությունը, իսկ հանցանքի համար պատասխանատվությունը կամավոր ստանձնելը վերականգնման գործընթացի կարևոր քայլերից է:

[24] Պեկինյան կանոններ, կանոն թիվ 11.

ավելի է հիշեցնում արտադատական լուծման եղանակը: Առաջարկություն. նախագծի 114-րդ հոդվածը հարկավոր է վերանայել՝ այն Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերոհիշյալ հոդվածներին համապատասխանեցնելու նպատակով:Նախագծի 114.2.5 հոդվածով առաջարկվում է ներդնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի նոր միջոց՝ *«հատուկ կրթական, մարզական, մշակութային կամ սոցիալական ծրագրերի կամ միջոցառումների, ինչպես նաև հատուկ վերականգնողական հաստատությունում վերականգնողական ծրագրի մասնակցելը»*: Նման միջոցները կարող են օգնել կանխել կրկնահանցավորությունը, և դրանց ընդունումը դրական զարգացում է: Այդուհանդերձ, 115.5 հոդվածը, որով պետք է սահմանվի այս միջոցը, չի սահմանում այն: Առաջարկություններ. օգտակար կլիներ պարզաբանել՝ հատուկ վերականգնողական հաստատությունում անցկացվող ծրագրի մասնակցելը ենթադրո՞ւմ է արդյոք տեղավորում փակ հաստատությունում, թե՞ այդ ծրագիրը փակ հաստատությունում չի անցկացվելու. եթե առաջինը, ապա կարևոր է նշել, թե այդ տեղավորումը որքան կարող է տևել: Նախագծի 116-րդ հոդվածը վերաբերում է վաղեմության ժամկետներին: Առաջին մասը, որը վերաբերում է անչափահասների կողմից կատարված հանցագործություններին, գործող օրենքի (Քրեական օրենսգրքի 95-րդ հոդված) համեմատ որևէ փոփոխություն չի ենթադրում և միջազգային ստանդարտների կապակցությամբ խնդիրներ չի հարուցում: «Դատվածության մարման» վերաբերյալ նախագծի 117-րդ հոդվածը կարող է կրճատել գործող օրենսգրքի 96-րդ հոդվածով նախատեսված որոշ ժամկետներ, ուստի կարող է համարվել դրական և մարդասիրական զարգացում: Նախագծի 118-րդ հոդվածը թույլ է տալիս *«ազատել պատժից»* ՝տեղավորելով ուսումնական հաստատությունում: Սա հայաստանյան օրենսդրության դրական առանձնահատկություններից է, որը համահունչ է *«ծայրահեղ միջոցի»* սկզբունքին: Ի հակառակ գործող օրենսգրքի 93-րդ հոդվածի, հատուկ բուժական հիմնարկում տեղավորելու մասին հիշատակում չկա, թեև Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 477-րդ հոդվածը հիշատակում է հաստատությունների երկու տեսակներն էլ: 93-րդ հոդվածը սահմանում է, որ տեղավորումը պետք է ավարտվի անչափահասի՝ 18 տարին լրանալուն պես, մինչդեռ նախագծի 118-րդ հոդվածը տարիքային այդ շեմը բարձրացնում է մինչև 21 տարեկան: Սա կարող է այնքան էլ ողջամիտ չթվալ, հաշվի առնելով, որ տեղավորման առավելագույն տևողությունը 3 տարի է, իսկ հոդվածի երրորդ մասը նախատեսում է վաղաժամկետ ազատում՝ տվյալ միջոցի անհրաժեշտությունը վերանալուն պես. մի դրույթ, որ ներդաշնակ է հնարավոր նվազագույն տևողության սկզբունքին: Նախագծի 119-րդ հոդվածը, ինչպես և 94-րդ հոդվածը թույլ է տալիս պայմանական ազատ արձակել բանտարկյալներին՝ բանտարկության ժամկետի որոշ մասը կրելուց հետո: Գործող օրենսգրքի 76.1 հոդվածի համաձայն, պայմանական ազատման հիմնական պահանջը դատարանի կարծիքն է առ այն, որ բանտարկյալի *«ուղղման»* համար պատժի մնացած մասի կրումն անհրաժեշտ չէ: 94-րդ հոդվածով կրելու ենթակա առավելագույն ժամկետը պատժի ժամկետի կեսն է, սակայն նախագծի համապատասխան հոդվածը պարունակում է նոր դրույթ, որը պայմանական ազատումը հնարավոր է դարձնում 10 տարուց ավելի ժամկետով պատժի երկու երրորդը կրելուց հետո: Օրենսգրքի նախագծով 10 տարուց ավելի ժամկետով պատիժները մի քանի հանցագործություն կատարելու համար մեղավոր ճանաչված անչափահասների նկատմամբ կարող են նշանակվել միայն այն դեպքում, երբ կատարված հանցագործություններից մեկը դիտավորյալ սպանություն է: Պատժի երկու երրորդը կրելու վերաբերյալ գործող օրենսգրքի 76.3.3 հոդվածով նախատեսված պահանջը կիրառվում է միայն չափահաս բանտարկյալների նկատմամբ, ինչից կարելի է ենթադրել, որ այդ պահանջը կարելի է ավելացնել նախագծի 119-րդ հոդվածում, քանի որ այն կիրառվում է իրավախախտում կատարած 18-21 տարեկան անձանց, ինչպես նաև

անչափահասների նկատմամբ: Առաջարկություն. քանի որ պայմանական ազատումը հիմնվում է *«նպատակահարմար նվազագույն ժամանակահատվածի»* սկզբունքի վրա, առաջարկվում է հանել նախագծի 119-րդ հոդվածի 4-րդ մասը, կամ թույլատրել դրա կիրառումը միայն իրավախախտում կատարած 18 տարին լրացած անձանց նկատմամբ: Պայմանական պատիժների վերաբերյալ նախագծի 121-րդ հոդվածը շատ դրական զարգացում է, որը համապատասխանում է ծայրահեղ միջոցի սկզբունքին:

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունները Քրեական օրենսգրքում և Քրեական օրենսգրքի նախագծում

Ա. Քրեական օրենսգրքի և Քրեական օրենսգրքի նախագծի համապատասխանությունը՝ որոշակի հանցագործությունները քրեականացնելու ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին:

Մարդու իրավունքների մասին միջազգային օրենսդրությունը պարունակում է մի շարք պարտավորություններ՝ մարդու, հատկապես՝ երեխաների իրավունքների խախտումները քրեականացնելու վերաբերյալ[25]: Խոշտանգումների դեմ կոնվենցիան պետություններին պարտավորեցնում է պատժել խոշտանգումները[26]: Երեխաների առուվաճառքի, մանկական պոռնկության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը (ԵԻԿ կամընտիր արձանագրություն) մասնակից պետություններից պահանջում է քրեականացնել երեխաների առ ու վաճառքը, մանկական պոռնկությունը և մանկական պոռնոգրաֆիան, ինչպես նաև երեխաների ներգրավումը հարկադիր աշխատանքում, ներառյալ՝ միջազգային իրավական ստանդարտների խախտմամբ երեխայի որդեգրման համար համաձայնություն կորզելը, ինչպես նաև շահույթ ստանալու նպատակով երեխաների օրգանների փոխանցումը[27]: Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի մաս կազմող՝ Անձանց, հատկապես՝ կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման, հետապնդման և պատժման մասին Պալերմոյի արձանագրությունը (Պալերմոյի արձանագրություն) մասնակից պետություններին պարտավորեցնում է քրեականացնել մարդկանց թրաֆիքինգը[28]: Երեխաներին սեռական շահագործումից և սեռական չարաշահումներից պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանցարոտեի կոնվենցիա) կողմերին պարտավորեցնում է քրեականացնել երեխաների նկատմամբ սեռական չարաշահումը, երեխային հարկադրաբար պոռնկության ներգրավելը, մանկական պոռնկությունից շահույթ ստանալը և երեխա մարմնավաճառի ծառայություններից օգտվելը և մանկական պոռնոգրաֆիական նյութեր արտադրելը, ձեռք բերելը, պահելը, տարածելը կամ փոխանցելը[29]: Երեխաների նկատմամբ սեռական չարաշահում համարվում են «սեռական գործողությունները»՝ զուգորդված հարկադրմամբ, ուժի գործադրմամբ, սպառնալիքներով, վստահության, տուժողի նկատմամբ իշխանության կամ ազդեցության չարաշահմամբ, հաշմանդամության կամ կախյալ դրության բերումով երեխայի առանձնակի խոցելիության չարաշահմամբ, կամ սեռական գործողությունները՝ ներպետական օրենքով սեռական գործողությունների

[25] Միջազգային մարդասիրական իրավունքը պարունակում է նաև պարտավորություններ՝ կապված «ծանր խախտումների» քրեականացման հետ, սակայն այդ հարցն այս վերլուծության մեջ չի արծարծվում:
[26] Խոշտանգումների դեմ կոնվենցիա, հոդված 4.
[27] Կամընտիր արձանագրություն, հոդված 3.
[28] 3-րդ և 5.1 հոդվածներ.
[29] 18-ից 20-րդ հոդվածներ.

համաձայնության տարիքային շեմից ցած գտնվողների հետ[30]: Կոնվենցիան կողմերից պահանջում է նաև քրեականացնել համաձայնության վերոհիշյալ շեմից ցածր տարիքի անձանց նկատմամբ կատարվող երկու հանցագործություն ևս. Երեխային սեռական չարաշահումների կամ սեռական գործողությունների ականատես դարձնելը՝ առանց դրանց մասնակից դարձնելու, և էլեկտրոնային միջոցներով երեխայի հետ կապ հաստատելը՝ սեռական չարաշահման կամ պոռնոգրաֆիայում ներգրավելու նպատակով երեխային հանդիպելու նպատակով[31]:Հայաստանը Խոշտանգումների դեմ կոնվենցիայի, ԵԻԿ կամընտիր արձանագրության և Պալերմոյի արձանագրության կողմ է և ստորագրել է Լանցարոտեի կոնվենցիան: Գործող քրեական օրենսգիրքը քրեականացնում է այս հանցագործությունների մեծամասնությունը: Խոշտանգումները քրեականացված են 119-րդ հոդվածով, պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը քրեականացված է 261-262-րդ հոդվածներով, իսկ երեխային պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը հատկապես քրեականացված է 166-րդ հոդվածով՝ որպես հակասոցիալական գործունեություն: Երեխաներին պոռնոգրաֆիայում ներգրավելուն հարկադրելը և մանկական պոռնոգրաֆիայի տարածումը քրեականացված է 263.2-րդ հոդվածով: Մարդկանց թրաֆիքինգը քրեականացված է 132-րդ հոդվածով, իսկ 167.2.6-րդ հոդվածը քրեականացնում է երեխաներին ընտանիքից առանձնացնելը՝ *«երեխայի մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելու նպատակով»:* Օրենսգրքի 138-ից 142-րդ հոդվածները քրեականացնում են Լանցարոտեի կոնվենցիայով որպես սեռական չարաշահում սահմանված գործողությունները, երբ դրանցից տուժողները երեխաներ են[32] :

Երեխաների առուվաճառքը, երեխաներին հարկադիր աշխատանքում ներգրավելը, որդեգրման համաձայնություն կորզելը, *«երեխաներին տարհամոզելը»* և սեռական բնույթի գործողությունները գործող Քրեական օրենսգրքով քրեականացված չեն: Ավելին, վերոհիշյալ հանցագործություններից շատերի ձևակերպումը կամ հանցակազմը տարբերվում են դրանք քրեականացնելու պարտավորություն սահմանող համաձայնագրերում սահմանված հանցագործության տարրերից: Օրենսգրքի 261.1 հոդվածով նախատեսված է, որ անձին պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը հանցագործություն է միայն այն դեպքում, երբ այն զուգորդվել է բռնությամբ, սպառնալիքներով, խաբեությամբ կամ տուժողի կախյալ վիճակը չարաշահելով, ընդ որում, անգամ եթե տուժողը երեխա է, իսկ երեխա մարմնավաճառի ծառայություններից օգտվելը քրեականացված չէ: 262.2հոդվածով նախատեսված է, որ երեխաներին պոռնկագրական նյութերի արտադրության մեջ ներգրավելը հանցագործություն համարվում է միայն այն դեպքում, երբ առկա է հարկադրման բաղադրիչ, իսկ մանկական պոռնկագրական նյութեր պահելը հանցանք չի համարվում: Օրենսգրքի 132-րդ հոդվածով թրաֆիքինգը հանցագործություն համարվում է միայն այն դեպքում, երբ այն կատարվել է բռնությամբ, բռնություն գործադրելու սպառնալիքով, խաբեությամբ կամ տուժողի կախյալ վիճակից օգտվելով: Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածը նշում է, որ նման պահանջները չպետք է հաշվի առնվեն, երբ թրաֆիքինգի զոհը 18 տարեկանից ցածր

[30] Հոդված 18.

[31] Հոդված 22՝ երեխաների այլասերման վերաբերյալ, և հոդված 23՝ սեռական նպատակներով երեխաներին գայթակղելը կամ այլասերելը.

[32] 138-ից 140-րդ հոդվածներով պատժվում են բռնաբարությունը և սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը, անկախ նրանից՝ տուժողը երեխա՞ է, թե՝ չափահաս, արական կամ իգական, իսկ 141-րդ և 142-րդ հոդվածներով քրեականացվում են սեռական և անառակաբարո գործողությունները 16 տարին չլրացած անձանց հետ՝ անկախ բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի գործադրումից:

է[33]: Առաջարկություն. կարևոր է ապահովել, որ Հայաստանի նոր քրեական օրենսգրքով այս հանցագործությունների հանցակազմերը միանգամայն համապատասխանում են Հայաստանի վավերացրած համաձայնագրերով ընդունված հանցակազմին։Օրենսգրքի նախագիծը պարունակում է նաև հոդվածներ, որոնցով քրեականացվում են այս հանցագործությունները: Որքան էլ զարմանալի է, այն խոշտանգումների կամ թրաֆիքինգի վերաբերյալ հոդվածներ չի պարունակում: Առաջարկություններ. սա բացթողում է, որը հարկավոր է շտկել: Ու թեև Հայաստանը դեռևս Լանցարոտեի կոնվենցիայի մաս չի կազմում, հարկավոր է քննարկել նաև սեքսուալ նպատակներով «երեխաների այլասերումը» և էլեկտրոնային եղանակով երեխաներին գայթակղելը՝ այս համաձայնագրի վավերացմանը պատրաստվելու նպատակով: Մյուս կողմից, նախագծի 234-րդ հոդվածը քրեականացնում է երեխաների առուվաճառքը, իսկ նախագծի 236 հոդվածը՝ որդեգրման համաձայնություն ստանալու նպատակով ծնողին կամ խնամակալին հարկադրելը: Դրանց ընդունումը դրական զարգացում կհամարվի: Մանկական պոռնկության կամ պոռնոգրաֆիայի վերաբերյալ նախագծի 231-րդ հոդվածը կքրեականացնի երեխային նման գործողություններ կատարելու նպատակով «խրախուսելը կամ ներգրավելը»՝ անկախ ուժի կամ սպառնալիքի գործադրման հանգամանքից: Դա ևս դրական զարգացում կլիներ, թեև նախագծի այդ հոդվածը լիարժեք չի համապատասխանում Հայաստանի պարտավորություններին, քանի որ երեխա մարմնավաճառի ծառայություններից օգտվելը և մանկական պոռնկագրական նյութեր պահելը քրեականացված չեն: Այս հանցագործությունների համար նախատեսված պատժամիջոցները նկարագրված և վերլուծված են ստորև:

Բ. Հանցագործություններ, որոնց դեպքում տուժողի անչափահասությունը հանցակազմի տարր է

Սույն վերլուծությունը գրելու պահին գործող քրեական օրենսգիրքը պարունակում է տասնմեկ հանցագործություն, որոնց դեպքում տուժողի անչափահասությունը հանցակազմի տարր է հանդիսանում.

- Մանկասպանությունը (Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը) (հոդված 106)
- Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ (հոդված 141)
- Անառակաբարո գործողությունները (հոդված 142)
- Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը (հոդված 165)
- Երեխային հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելը (հոդված 166)
- Երեխային ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման կամ մուրացկանության ներգրավելը (հոդված 166.1)
- Ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը (հոդված 167)
- Երեխաների թրաֆիքինգը (Երեխաների առքուվաճառքը) (հոդված 168)
- Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը (հոդված 170)
- Երեխայի կյանքի անվտանգության ապահովման կամ առողջության պահպանման պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը (հոդված 171)
- Խնամակալի կամ հոգաբարձուի իրավունքները չարաշահելը (հոդված 172)
- Ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելը (հոդված 173)

[33] Հոդված 3(գ)-(դ).

Մանկասպանությունը այս հանցագործություններից միակն է, որի համար սահմանված է պարտադիր ազատազրկում՝ մինչև 4 տարի ժամկետով: Սա ավելի քիչ է, քան առանց ծանրացնող հանգամանքների սպանության՝ (6-ից 12 տարի) և հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության (հոդված 105.1) դեպքում: Դա, թերևս, ընդունելի հանգամանք է:Այս հանցագործություններից չորսը՝ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ, անառակաբարո գործողությունները, անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը և ծնողներից երեխային ապօրինի բաժանելը կամ երեխային փոխելը, ենթադրում են ազատազրկման նվազագույն ժամկետ, երբ առկա են ծանրացնող հանգամանքներ: Երեխաների դեմ ուղղված այլ հանցագործությունների համար նախատեսված առավելագույն ազատազրկումը՝ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, տատանվում է տասնվեց տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու և անառարակաբարո գործողությունների համար նախատեսված 2 տարուց՝ մինչև 5 տարի՝ երեխային հանցագործության կամ հակահասարակական գործողություններ կատարելուն ներգրավելու, երեխային ալկոհոլի կամ թմրանյութերի չարաշահման կամ մուրացկանության ներգրավելու և ծնողներից երեխային ապօրինի բաժանելու կամ երեխային փոխելու համար: Անփութությամբ կատարվող երեք հանցագործությունների համար նախատեսված առավելագույն պատիժը 5 տարի ժամկետով ազատազրկումն է: Առաջարկություն. դժվար է ընկալել, թե ինչու երեխաների նկատմամբ անփութության հետ կապված հանցագործությունների համար նախատեսված է ավելի մեծ պատժամիջոց, քան երեխաների դեմ սեռական բնույթի հանցագործություններ կատարելու համար, և հարկավոր է քննարկել 16 տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո կամ սեքսուալ բնույթի գործողությունների համար նախատեսված պատժի չափն ավելացնելու նպատակահարմարությունը: Քրեական օրենսգրքի նախագիծը մեծամասամբ նախատեսում է միևնույն հանցագործությունները, սակայն մանկասպանության կամ թրաֆիքինգի վերաբերյալ հոդված չի նախատեսում: Այն նաև երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ երկու նոր հոդված է նախատեսում, ինչպես նշվել է վերը. երեխայի առուվաճառքի վերաբերյալ նախագծի 234-րդ հոդվածը և անօրինական որդեգրման վերաբերյալ նախագծի 236-րդ հոդվածը[34]: Այս երկու հանցագործություններից որևէ մեկի համար ազատազրկման նվազագույն ժամկետ չի ենթադրվում: Երեխայի առուվաճառքի համար նախատեսված առավելագույն պատիժը 3 տարի ժամկետով ազատազրկում կլինի, եթե առկա են ծանրացնող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ պաշտոնական լիազորությունների չարաշահումը կամ երեխաներին արտերկիր փոխադրելը[35]: Անօրինական որդեգրման համար առավելագույն պատիժը կկազմի 3 տարի ժամկետով ազատազրկումը, կամ 5 տարի ժամկետով ազատազրկումը, եթե գործադրվել է բռնություն կամ բռնություն գործադրելու սպառնալիք[36]: Առաջարկություն. ԵԻԿ կամընտիր արձանագրությունը կողմերին պարտավորեցնում է ոչ միայն քրեականացնել նախագծի 234-րդ և 236-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունները, այլև «դրանց համար պատիժները սահմանելիս հաշվի առնել դրանց ծանր բնույթը»[37]: Սրանից ենթադրվում է, որ ազատազրկման նվազագույն ժամկետ կսահմանվի անգամ այն դեպքերում, երբ ծանրացնող հանգամանքները բացակայում են: Քրեական օրենսգրքի նախագծով կնվազեցվեն երեխաներին առնչվող որոշ այլ հոդվածների համար նախատեսված պատիժները: 16 տարին չլրացած երեխայի հետ

[34] Նախագծի, համապատասխանաբար, 234-րդ, 236-րդ և 240-րդ հոդվածներ.
[35] Նախագծի 234.2 հոդված.
[36] Նախագծի, համապատասխանաբար, 236.1-236.2 հոդվածներ.
[37] Հոդված 3.3.

սեքսուալ հարաբերությունների համար նախատեսված պատիժը կնվազեցվի: Օրենսգրքի նախագծով ազատազրկում չի նախատեսվում, եթե ծանրացնող հանգամանքներ առկա չեն[38]: Գործող օրենսգրքի համաձայն, 14 տարին չլրացած երեխայի հետ հարաբերությունների համար նախատեսված է 5-ից 12 տարի ժամկետով ազատազրկում, իսկ նախագծով 12-ից 14 տարեկան երեխայի հետ հարաբերությունների համար նախատեսված առավելագույն պատիժը կկազմի 4 տարի[39]: Որքան էլ զարմանալի է, նախագծի այս հոդվածը նույնպիսի դրույթ չի նախատեսում 12 տարին չլրացած երեխայի հետ սեքսուալ հարաբերությունների վերաբերյալ: Եթե անգամ առկա են ծանրացնող այլ հանգամանքներ, ինչպիսիք են՝ հանցավորի կողմից երեխային խնամելու պարտականությունը կամ «ծանր հետևանքները», այս հանցագործության համար առավելագույն պատիժը կկազմի 7 տարի ժամկետով ազատազրկում, իսկ ազատազրկման նվազագույն ժամկետ սահմանված չէ, քանի դեռ այդ հանգամանքներն առկա չեն[40]: Առաջարկություն. հարկավոր է քննարկել Օրենսգրքի նախագծում երեխաների դեմ ուղղված սեռական բնույթի հանցագործությունների համար ավելի թեթև պատիժներ սահմանելու հարցը, մասնավորապես՝ չափահասի կողմից երեխայի դեմ սեռական չարաշահումների հետ կապված հանցագործությունների մեծամասնության, եթե ոչ բոլորի համար ազատազրկման նվազագույն ժամկետի սահմանումը: Անառակաբարո գործողությունների համար նախատեսված պատժամիջոցները կմնան նույնը, երբ տուժողը բարձր տարիքի երեխա է, այսինքն՝ մինչև 2 տարի, սակայն կավելանան փոքրահասակ երեխաների դեպքում, այսինքն՝ մինչև 4 տարի, եթե երեխան 12-14 տարեկան է, և 3-ից 6 տարի ժամկետով ազատազրկում, եթե տուժողը 12 տարեկանից ցածր է: Դա թերևս, դրական զարգացում է, որը կարող է նպաստել նման հանցագործությունների կատարման զսպելուն: Գործող օրենսգրքով 3-6 տարի ժամկետով ազատազրկում կարող է նշանակվել այն դեպքերում, երբ «պոռնկության մեջ ներգրավելու» ձևով հանցագործությունից տուժողը երեխա է, սակայն ազատազրկումը պարտադիր պահանջ չէ[41]: Նմանապես, երեխային պոռնկագրական նյութերի արտադրությանը մասնակցելուն հարկադրելը պատժվում է առավելագույնը 3 տարի ժամկետով ազատազրկմամբ, սակայն ազատազրկումը պարտադիր չէ, եթե հանցագործությունը չի կատարվել կազմակերպված խմբի կողմից[42]: Կամընտիր արձանագրությունը ոչ միայն կողմերին պարտավորեցնում է երեխաների պոռնկությունը, այլև պահանջում է «դրանց համար պատիժները սահմանելիս հաշվի առնել դրանց ծանր բնույթը»[43]: Հազիվ թե տուգանքը համարվի համարժեք պատիժ՝ պոռնկության կամ մանկական պոռնոգրաֆիայում ներգրավվելու պատճառով երեխա տուժողին պատճառված վնասի դիմաց: Թեև Քրեական օրենսգրքի նախագծով երեխաներին պոռնկության մեջ ներգրավելու և մանկական պոռնոգրաֆիայի սահմանումներն առավել համահունչ են միջազգային իրավունքով նման հանցագործությունները քրեականացնելու պարտավորությանը, Օրենսգրքի նախագծով նվազեցվում են երեխաներին պոռնկության ներգրավելու և մանկական պոռնոգրաֆիայի համար նախատեսված պատժամիջոցները: Նախագծի 231.1 հոդվածում երեխային պոռնկության կամ պոռնոգրաֆիայում ներգրավելու համար ազատազրկման նվազագույն ժամկետ նախատեսված չէ, իսկ

[38] Նախագծի 199.1 հոդված.
[39] Նախագծի 199.2.2) հոդված.
[40] Նախագծի 199.3 հոդված.
[41] Հոդված 261.2.
[42] Եթե առկա է այս ծանրացնող հանգամանքը, որպես պատիժ նախատեսվում է 2-ից 4 տարի ժամկետով ազատազրկում:
[43] Հոդված 3.3.

առավելագույն պատիժը, ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, կկազմի 2 տարի ժամկետով ազատազրկում: 3 տարի ժամկետով ազատազրկման ձևով նվազագույն պատիժ նախատեսված կլինի միայն այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվի բռնության կամ բռնության սպառնալիքի գործադրմամբ[44]: Լանցարոտեի կոնվենցիայով պահանջվում է, որ երեխաների նկատմամբ սեռական չարաշահումն ու երեխաների սեռական շահագործումը ոչ միայն քրեականացվի, այլև «պատժվի արդյունավետ, համարժեք և զսպող բնույթի պատժամիջոցներով, որոնք կարող են ներառել ազատազրկումը՝ հաշվի առնելով դրանց լրջությունը…»[45]: ԵԻԿ կամընտիր արձանագրությունը նույնպիսի դրույթ է պարունակում[46]: Դրանից կարելի է ենթադրել, որ երեխաներին պոռնկության ներգրավելը և մանկական պոռնկությունը միշտ պետք է պատժվեն ազատազրկմամբ, եթե անգամ բացակայում են ծանրացնող հանգամանքները: Առաջարկություն. այս հանցագործությունների համար սահմանված պատժամիջոցները պետք է վերանայվեն՝ ապահովելու համար, որ բոլոր այդ հանցագործությունների համար նախատեսվի որոշակի ժամկետով ազատազրկում՝ անգամ ծանրացնող հանգամանքների բացակայության պարագայում: Երեխային հանցագործության կատարման մեջ և հակահասարակական գործողություններում ներգրավելու համար պատժամիջոցները վերանայվում են Օրենսգրքի նախագծում, սակայն փոփոխությունների մեծ մասն էական չէ[47]: Դրական փոփոխություններից մեկն այն է, որ երեխային հակահասարակական գործողություններում ներգրավելը բռնության գործադրմամբ՝ հանգեցնում է նվազագույնը 3 տարի ժամկետով ազատազրկման: Մեկ այլ փոփոխություն է այն, որ երեխային հակահասարակական գործողություններում ներգրավելու սահմանումն այլևս չի ներառելու երեխային պոռնկության մեջ ներգրավելը[48]: Դա կարող է դրական համարվել, քանի որ երեխային պոռնկության մեջ ներգրավելը հակահասարակական վարքագիծ համարելը նվազեցնում է այդ հանցագործության ծանրությունը:Օրենսգրքի նախագծով սահմանվում է երեխաների դեմ ուղղված երեք նոր հանցագործություն. 234-րդ հոդվածը՝ երեխայի առուվաճառքի վերաբերյալ, 236-րդ հոդվածը՝ անօրինական որդեգրման վերաբերյալ, և 240-րդ հոդվածը՝ երեխայի խնամքի համար միջոցներ չտրամադրելը: Այս հանցագործություններից որևէ մեկի համար ազատազրկման նվազագույն ժամկետ սահմանված չէ: Երեխայի առուվաճառքի համար առավելագույն պատիժը 2 տարի ժամկետով ազատազրկումն է, իսկ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ 3 տարի: Անօրինական որդեգրման համար նախատեսված առավելագույն պատիժը 3 տարի ժամկետով ազատազրկումն է, իսկ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ 5 տարի: Հնարավորությունը, որ այս հանցագործությունները կարող են պատժվել տուգանքով կամ հանրային աշխատանքներով՝ թերևս չի արտացոլում հանցանքի ծանրությունը՝ ինչպես պահանջվում է Կամընտիր արձանագրությամբ:

---

[44] Հոդված 231.3.

[45] Հոդված 27.1.

[46] Հոդված 3.3, որը կիրառվում է երեխաներին պոռնկության ներգրավելու, մանկական պոռնոգրաֆիայի, երեխաների առուվաճառքի, երեխաների հարկադիր աշխատանքի և որդեգրման համաձայնությունը հարկադրաբար կորզելու նկատմամբ.

[47] Երեխային հակահասարակական գործողություններում ներգրավելու վերաբերյալ 166-րդ հոդվածով սահմանված է առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկում, իսկ հանցանքը մի քանի տուժողների նկատմամբ կամ բռնությամբ կատարելու դեպքում՝ 6 տարի: 232-րդ հոդվածով առավելագույն պատիժը 2-ից 6 տարի ժամկետով ազատազրկումն է: Երեխային հանցագործության կատարման ներգրավելու վերաբերյալ 165-րդ հոդվածը, ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում նախատեսում է 5-ից 7 տարի ազատազրկում, մինչդեռ նախագծի 230-րդ հոդվածով այն կազմում է 4-ից 8 տարի՝ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում:

[48] Համեմատել նախագծի 232-րդ հոդվածը՝ 166-րդ հոդվածի հետ:

Առաջարկություն. Քրեական օրենսգրքի նախագիծը հարկավոր է վերանայել՝ ապահովելու համար բոլոր այս հանցագործությունների դեպքում ազատազրկման նվազագույն ժամկետի սահմանումը:

Գ. Հանցագործություններ, որոնց պարագայում տուժողի անչափահաս լինելը համարվում է ծանրացնող հանգամանք:

Հայաստանի գործող Քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում առկա է առանձին մաս, որում թվարկված են ծանրացնող հանգամանքները[49]: Ամենաերկար ցանկը, որը ներառված է սպանության վերաբերյալ հոդվածում, ընդգրկում է 15 գործոն (հոդված 104.2): Տուժողի անչափահասությունը ծանրացնող հանգամանք է անձի դեմ բռնությամբ զուգորդված մի շարք հանցագործությունների համար, ներառյալ՝ խոշտանգման (հոդված 119.2.3), վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելու (հոդված 124.2.2), մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելու (հոդված 126.2.3), անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու (հոդված 127.2.3), մարդուն առևանգելու (հոդված 131.2.4), մարդկանց թրաֆիքինգի (Մարդկանց առևտուրը, հոդված 132.3.3), ազատությունից ապօրինի զրկելու (հոդված 133.2.2) և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139.2.3 և 139.3 հոդվածներ). Գործող Քրեական օրենսգրքի ընդհանուր մասը ևս սահմանում է, որ տուժողի անչափահասությունը հանցագործությունները ծանրացնող հանգամանք է՝ ընդհանուր առմամբ (հոդված 63.1.5) Քրեական օրենսգրքի նախագծով կկրճատվեն այս հանցագործությունների մի մասի համար սահմանված պատժամիջոցները, երբ տուժողը երեխա է: Գործող օրենսգրքով երեխային առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար նախատեսված է 1-ից 3 տարի ժամկետով ազատազրկում, իսկ օրենսգրքի նախագծով ազատազրկման ձևով պատիժ նախատեսված չէ, եթե այլ ծանրացնող հանգամանքներ առկա չեն[50]: Ազատությունից ապօրինի զրկելը գործող օրենսգրքով հանգեցնում է 3-5 տարի ժամկետով ազատազրկման, երբ տուժողը երեխա է, իսկ օրենսգրքի նախագծով պատիժը լինելու է մինչև 5 տարի ժամկետով ազատազրկումը, սակայն ազատազրկման նվազագույն ժամկետ սահմանված չէ[51]: Գործող օրենսգրքով երեխային սեռավարակներով վարակելը հանգեցնում է մինչև 2 տարի ժամկետով ազատազրկման, իսկ օրենսգրքի նախագծով առավելագույն պատիժը կկազմի 2 ամիս[52]: Առաջարկություն. սրանք լուրջ հանցագործություններ են, և ազատազրկման նվազագույն ժամկետ չսահմանելը կամ 2 ամսից ավելի տևողությամբ պատիժ չթույլատրելը կարող է անպատժելիությանը նպաստող հանգամանք համարվել. հարկավոր է քննարկել Քրեական օրենսգրքի նախագծի վերանայման նպատակահարմարությունը՝ 2 ամսից ավելի տևողությամբ, ազատությունից զրկելու հետ կապված պատիժը հնարավոր դարձնելու նպատակով: Քրեական օրենսգրքի նախագծով տուժողի անչափահասությունը ծանրացնող հանգամանքների ցանկում կընդգրկվի անձի դեմ բռնությամբ զուգորդված մի շարք այլ հանցագործությունների համար ևս, ներառյալ՝ սպանության, ինքնասպանության հասցնելու, դրդելու կամ հակելու, առանց անձի համաձայնության սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու, առողջությանը վնաս պատճառելու, անձին վտանգի մեջ թողնելու, բռնություն գործադրելու սպառնալիքի և ֆիզիկական կամ հոգեբանական բռնության: Օրենսգրքի նախագծով առանց ծանրացնող հանգամանքների սպանության համար պատիժը կազմում է 8-15 տարի ժամկետով

[49] Սա բնորոշ է նախկին Խորհրդային շատ երկրների Քրեական օրենսգրքերին.
[50] 127.2.3 հոդվածը համեմատեք նախագծի 186.2.1 հոդվածի հետ.
[51] 133.2.2 հոդվածը համեմատեք նախագծի 192.2.1 հոդվածի հետ.
[52] 124.2.2 հոդվածը համեմատել նախագծի 182.4.1 հոդվածի հետ.

ազատազրկումը, մինչդեռ երեխայի սպանությունը կպատժվի 14-20 տարի ժամկետով ազատազրկմամբ[53]: Առանց անձի համաձայնության և առանց բռնություն գործադրելու սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար պատժի նվազագույն չափ սահմանված չէ, եթե տուժողը չափահաս է, սակայն պատիժը կկազմի 4-ից 8 տարի ժամկետով ազատազրկում, եթե տուժողը 12-16 տարեկան է, կամ եթե տուժողը ցանկացած տարիքի երեխա է, իսկ հանցագործությունը կատարվել է երեխայի խնամքի, դաստիարակության կամ բուժման համար պատասխանատու անձի կողմից[54]: Դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու համար պատիժը կկազմի 4-8 տարի ժամկետով ազատազրկում, մինչդեռ երեխային դիտավորությամբ ինքնասպանության հասցնելու համար պատիժը՝ 6-10 տարի[55]: Չափահաս անձի առողջությանը ծանր վնաս պատճառելու համար պատիժը կկազմի 3-ից 8 տարի, իսկ եթե տուժողը երեխա է՝ 5-ից 10 տարի[56]: Անձին վտանգի մեջ թողնելու, բռնության սպառնալիքի կամ մարմնական վնասվածք չպատճառող բռնություն գործադրելու համար դատապարտվելու դեպքում ազատազրկման հետ կապված պատիժ չի նախատեսվում, եթե տուժողը չափահաս է, սակայն կարող է պատժվել ազատազրկման հետ կապված կարճատև պատժամիջոցներով, եթե տուժողը երեխա է[57]: Թեև ծանրացված պատժամիջոցների զսպող ազդեցությունը օբյեկտիվորեն չափելը բարդ է, երեխաների դեմ բռնությամբ զուգորդված հանցագործությունների համար առավել տևական պատժամիջոցներ նախատեսելու մտադրությունը մատնանշում է երեխաների պաշտպանության հարցում դրական պատրաստակամությունը:

Դ. Երեխաների դեմ ուղղված հանցագործությունների համար նշանակվող լրացուցիչ պատժամիջոցները

Լանցարոտեի կոնվենցիան սահմանում է, որ երեխաների դեմ սեքսուալ բնույթի հանցագործություններ կատարած անձանց պետք է արգելվեն երեխաների հետ կանոնավոր շփում ենթադրող մասնագիտությունները[58]: Նմանապես, Կոնվենցիան սահմանում է, որ օրենքը պետք է թույլատրի երեխաների նկատմամբ մասնագիտական կամ կամավոր գործունեության համատեքստում սեքսուալ բնույթի հանցագործություններ կատարած անձանց արգելել հետագայում զբաղվել նման գործունեությամբ[59]: Բացի այդ, օրենքը պետք է թույլ տա ժամանակավորապես կամ մշտապես փակել ցանկացած հաստատություն, որտեղ երեխաների դեմ սեքսուալ բնույթի հանցագործություններ են կատարվել, ինչպես նաև առգրավել և բռնագրավել այդ հանցագործությունների կատարման հետ կապված փաստաթղթերը և գործիքները, հանցագործությունից ստացած եկամուտը կամ այդ եկամտով ձեռք բերված գույքը[60]: Եվ վերջապես, Կոնվենցիան սահմանում է, որ պետությունները «կարող են հանցագործությունը կատարած անձանց նկատմամբ ձեռնարկել այլ միջոցներ, ինչպիսիք են՝ ծնողական իրավունքներից զրկելը, մոնիթորինգը կամ վերահսկողությունը...»[61]:

---

[53] Նախագծի 161.2 հոդված.
[54] Նախագծի 198.1 և 198.3.2 հոդվածներ.
[55] Նախագծի 167.1-2 հոդված.
[56] Նախագծի 171.1-2 հոդված.
[57] Նախագծի 183.1 և 183.2.1, 194.1 և 194.2.1, և 195.1 և 195.3.1 հոդվածներ.
[58] Հոդված 5.3.
[59] Հոդված 27.3.բ.
[60] Հոդված 27.3.ա-բ.
[61] Հոդված 27.4.

Քրեական օրենսգրքով սահմանված են «լրացուցիչ պատիժներ», որոնք կարող են նշանակվել ի լրումն դատապարտյալի նկատմամբ նշանակված հիմնական պատժի[62]: Դրանցից են՝ գույքի բռնագրավումը և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը[63]: Որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելելը կարող է նշանակվել, երբ այդ գործունեությունն առնչվում է կատարված հանցագործությանը, և այն կարող է նշանակվել որոշակի ժամկետով[64]: Այն ավելի շուտ կարող է նշանակվել որպես այլ պատժամիջոցների այլընտրանք, այլ ոչ որպես «լրացուցիչ պատիժ»: Քրեական օրենսգրքի նախագծով որպես լրացուցիչ պատժամիջոց նախատեսված կլինի ծնողական իրավունքներից զրկելը:

Գործող օրենսգրքով երեխաների սեռական շահագործման հետ կապված որևէ հանցագործություն չի պատժվում եկամտի, գույքի, գործիքների բռնագրավմամբ կամ ձեռնարկության փակմամբ: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 131-րդ հոդվածով, կարծեք թե, առավել լայն իմաստով թույլատրվում է հանցագործության հետևանքով ձեռք բերված ապրանքների և գույքի բռնագրավումը, որը դրական զարգացում կլինի: Առաջարկություն. Քրեական օրենսգրքի նախագիծը պետք է վերանայվի՝ հաստատելու համար, որ երեխաների սեռական շահագործումից ստացված եկամուտը, այդ եկամտով ձեռք բերված գույքը, հանցանքի կատարմանն առնչվող գույքը և գործիքները կարող են բռնագրավվել, և որ նման հանցագործություններում գիտակցաբար ներգրավված ցանկացած ձեռնարկություն կարող է փակվել:

Երեխաների դեմ ուղղված որոշ հանցագործություններ կարող են պատժվել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքով, հիմնականում այն դեպքերում, երբ հանցագործություն կատարող անձը երեխայի ծնողն է, ուսուցիչը կամ խնամակալը: Դրանցից են՝ երեխային հանցագործության կամ հակահասարակական գործունեության մեջ ներգրավելը, երեխային պահելու պարտականությունը չկատարելը, խնամակալության կամ հոգաբարձության չարաշահումը, սակայն երեխաների դեմ ուղղված սեքսուալ բնույթի հանցագործությունները դրանց թվում չեն[65]: Գործունեությունն արգելելը կարող է նշանակվել առանց անձի համաձայնության սեքսուալ բնույթի հանցագործությունների համար, սակայն որպես ազատազրկման այլընտրանք, այլ ոչ որպես լրացուցիչ միջոց[66]: Նույնը *չի կարելի ասել* այն դեպքերի մասին, երբ տուժողը երեխա է, իսկ հանցագործությունը կատարողը խնամքի կամ բուժման պարտականություն ունեցող անձ է[67]: Այս պատիժը կարող է նշանակվել նաև որդեգրման համաձայնությունը տալուն հարկադրելու կամ ոչ պատշաճ եղանակով խրախուսելու ձևով հանցագործությունների դեպքում՝ որպես այլ պատժամիջոցների այլընտրանք[68]:

Որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքը կարող է նշանակվել այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր են ճանաչվել երեխային պոռնկության մեջ ներգրավելու կամ մանկական պոռնոգրաֆիայի հետ կապված հանցագործության համար, սակայն այն դեպքում, եթե առկա են որոշակի ծանրացնող հանգամանքներ, այն էլ միայն որպես այլ պատժամիջոցների այլընտրանք, և ոչ թե որպես լրացուցիչ միջոց[69]: Առաջարկություն.

---

[62] Հոդված 50 (որոշակի գործունեությամբ զբաղվելը կարող է նաև նշանակվել որպես հիմնական պատիժ).

[63] 50.5, 52 և 55 հոդվածներ.

[64] Հոդված 50.1-2

[65] 165.2, 166.2, 170, 171 հոդվածներ.

[66] Նախագծի 198.2 հոդված.

[67] Նախագծի 198.3 հոդված.

[68] Նախագծի 236.1-2 հոդված.

[69] Նախագծի 231.2 հոդված.

Քրեական օրենսգրքի նախագիծը հարկավոր է վերանայել, որպեսզի երեխաների դեմ հանցագործություն կատարած անձանց՝ երեխաների դեմ նոր հանցագործություններ կատարելու հավանականություն ենթադրող որոշակի գործողությունները կամ գործունեությունն արգելելը ոչ թե համարվի այլ պատժամիջոցների այլընտրանք, այլ լրացուցիչ պատժամիջոց, ընդ որում, ոչ թե որպես որոշակի ժամկետով նշանակվող պատիժ, այլ մի միջոց, որը կոչված է պաշտպանելու հավանական տուժողներին այնքան ժամանակ, որքան հարկավոր է, անհրաժեշտության դեպքում՝ ընդհուպ մինչև մշտական հիմունքներով[70]:
Օրենսգրքի նախագծով նախատեսվում է, որ երեխաների հետ կապված բազմաթիվ հանցագործություններ պետք է «պատժվեն» ծնողական իրավունքներից զրկելով: Դրանցից են՝ երեխային հանցագործության կատարման կամ հակահասարակական գործունեության, պոռնկության և մանկական պոռնոգրաֆիայում ներգրավելը և երեխայի խնամքի համար միջոցներ չտրամադրելը: Երեխաներին պոռնկության, պոռնոգրաֆիայի, հանցագործության կամ հակահասարակական գործունեության մեջ ներգրավելու ձևով հանցագործությունների համար այս պատժամիջոցը կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ հանցանքը կատարողը տուժողի խնամողն է, կրել է խնամքի կամ բուժման պարտականություն կամ հանցագործությունը կատարելու համար օգտվել է ինտերնետից[71]: Երեխային անտեսելու հետ կապված հանցագործությունների դեպքում այն կիրառելի է միայն ծնողների, խնամակալների կամ խնամքի պարտականություն ունեցող անձանց նկատմամբ: Ինչպես որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելքի պարագայում, այն նախատեսված է որպես այլընտրանքային պատժամիջոց, այլ ոչ որպես միջոց, որը կարող է նշանակվել ի լրումն առաջնային պատժամիջոցի[72]: Որոշ հանցագործությունների դեպքում այս միջոցի տևողությունն ավելին է, երբ առկա են ծանրացնող հանգամանքներ[73]: Այս դրույթները հաստատում են այս պատժամիջոցի խիստ պատժիչ բնույթը:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ճանաչում է ծնողների կողմից խնամք ստանալու՝ երեխաների իրավունքը՝ որպես նրանց ինքնության բաղադրիչ[74]: Այդ իրավունքը կարող է մի կողմ դրվել, եթե դա անհրաժեշտ է երեխայի լավագույն շահերն ապահովելու, մասնավորապես՝ երեխային չարաշահումից և անտեսումից պաշտպանելու համար[75]: Ինչպես նշվել է վերը, Լանցարոտեի կոնվենցիան ծնողական իրավունքներից զրկելը համարում է որպես «միջոց», որը կարող է ձեռնարկվել սեռական բնույթի չարաշահումներ կամ շահագործում կատարած անձանց նկատմամբ: Թեև այս միջոցը որոշ դեպքերում կարող է միանգամայն արդարացված լինել, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային համապատասխանությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ այն չի կարող նշանակվել ծնողներին պատժելու նպատակով, այլ բացառապես տվյալ երեխային կամ երեխաներին պաշտպանելու համար: Առաջարկություն. դրան

---

[70] Լանցարոտեի կոնվենցիայով սահմանված է սեքսուալ բնույթի հանցագործություն կատարած անձանց բուժում տրամադրելու պարտավորություն, ինչպես նաև թույլ է տրվում, որ նշանակվող պատժամիջոցները ներառեն մոնիթորինգ և վերահսկողություն, որոնք կարող են կիրառվել՝ նման սահմանափակումների շարունակության անհրաժեշտությունը պարբերաբար վերանայելու նպատակով: Տես 15-17 և 27.4 հոդվածներ.
[71] Նախագծի 230.2, 231.2, 232.3 և 237.1 հոդվածներ.խնամքի միջոցներ չտրամադրելու համար այն կարող է կիրառվել միայն ծնողի նկատմամբ.
[72] Նախագծի 230.2, 231.2, 232.2, 237.1-2, 238.1-2 և 240 հոդվածներ.
[73] Նախագծի 237.1-2 և 238.1-2 հոդվածներ.
[74] 7-8 հոդվածներ.
[75] 9.1 հոդված.

հասնելու երկու եղանակ կա: Դրանցից մեկի պարագայում ծնողական իրավունքներից զրկելը չպետք է ճանաչվի որպես քրեական իրավունքի մաս, այլ պետք է դիտվի որպես առանձին խնդիր, որը պետք է կարգավորվի ընտանեկան իրավունքի և երեխաների պաշտպանության օրենսդրության շրջանակներում: Մյուսի դեպքում հարկավոր է ապահովել, որ Օրենսգրքի ընդհանուր մասի այն հոդվածը, որով սահմանվում է այս միջոցը, հիմնված լինի լավագույն շահերի և ծայրահեղ միջոցի սկզբունքներին, և որ այդ միջոցի տևողությունը պայմանավորված լինի կրկնահանցավորության ռիսկով, այլ ոչ՝ կատարված հանցանքի ծանրությամբ:

II. Երեխաների վերաբերյալ քրեադատավարական նորմերը

1. Իրավախախտում կատարած անձանց վերաբերյալ նորմերը

Ա. Քրեական դատավարության օրենսգիրքը և իրավախախտում կատարած անչափահասները

Քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլուխը, որը վերաբերում է անչափահասների գործերով վարույթին, ընդամենը հինգ հոդված է պարունակում: Ըստ էության, դրանցում թվարկվում են որոշակի տարրեր, որոնք պետք է հաշվի առնվեն՝ անչափահասներին առնչվող գործերով (տարիքը, զարգացման աստիճանը և այլն), և որոնք կսահմանեն, որ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողները կամ խնամակալը պետք է մասնակցեն քննությանը, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անչափահասները չեն կարող արգելանքի վերցվել մինչև դատաքննությունը, և որ դատապարտված անչափահասները կարող են որոշակի հանգամանքների առկայության դեպքում «ազատվել պատժից»[76]: Կասկածյալների իրավունքներն ու պարտականությունները թվարկված են գործող օրենսգրքի 63-րդ հոդվածում, իսկ մեղադրյալների իրավունքներն ու պարտականությունները՝ 65-րդ հոդվածում: Այս հոդվածներում ներառված իրավունքներն անչափահասների և չափահասների համար նույնն են, և երկու հոդվածներն էլ պարունակում են դրույթ այն մասին, որ անչափահասների իրավունքները պետք է «իրականացվեն օրինական ներկայացուցչի», այսինքն՝ ծնողի կամ խնամակալի կողմից[77]: Եթե ծնողը կամ խնամակալը չեն ներկայանում, ապա քննիչը, դատախազը կամ դատարանը խնամակալության և հոգաբարձության մարմիններին հանձնարարում է ներկայացնել երեխայի շահերը[78]:

77-րդ հոդվածը թվարկում է անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ներկայացուցչի իրավունքներն ու պարտականությունները (այն նաև վերաբերում է քրեական գործում որպես տուժող կամ քաղաքացիական հայցվոր ներգրավված երեխայի ներկայացուցչին և քրեական գործում ներգրավված անմեղսունակ անձանց): Ներկայացուցչի լիազորությունների հետ կապված որոշակի սահմանափակումներ կան: Նրանք չեն կարող մեղադրյալի անունից ընդունել մեղքը, հաշտվել տուժողի կամ հանցագործությունը կատարած անձի հետ, հետ վերցնել դատավճռի դեմ ներկայացված բողոքը, բացարկ հայտնել մեղադրյալ անչափահասի պաշտպանին կամ կատարել այլ գործողություններ, որոնք հակասում են ներկայացվող երեխայի շահերին[79]: Ներկայացուցիչը չի կարող իրականացնել նաև «անձի անքակտելի իրավունքները»:

---

[76] 439-443 հոդվածներ.
[77] 63.7 և 65.5 հոդվածներ.
[78] Հոդված 76.1.
[79] Հոդված 77.4-5.

Անտրամաբանական կլիներ ընդունել, որ 14-18 տարեկան անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել, սակայն իրավասու չէ անձամբ մասնակցել քրեական գործով վարույթին: Քրեական արարքների համար պատասխանատվության համար հոգեպես և սոցիալապես հասուն անձը պետք է նաև բավականաչափ հասուն լինի՝ ընդունելու համար դատավարական որոշումներ՝ հանցագործության համար պատասխանատու լինելու կամ չլինելու վերաբերյալ, կամ, առնվազն, մասնակցելու այդ որոշումների կայացմանը: 77-րդ հոդվածը պարունակում է դրույթ «սահմանափակ գործունակ» կողմերի վերաբերյալ, որում նշված է, որ նման անձի ներկայացուցիչը պետք է «իմանա» որոշակի հարցերի վերաբերյալ իր կողմից ներկայացվող սահմանափակ գործունակ անձի մտադրության մասին՝ նախքան նրանց վերաբերյալ որոշումների կայացումը[80]: Այդ հարցերի թիվը փոքր է, և ներառում է տուժողի և հանցագործությունը կատարած անձի միջև հաշտությունը և բողոք չներկայացնելու որոշումը: Բացի այդ, դա կարծեք թե վերաբերում է միայն հոգեկան հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձանց, այլ ոչ՝ առողջ անչափահասներին: Առաջարկություններ. հարկավոր է քննարկել անչափահաս կասկածյալների և մեղադրյալների ծնողների կամ խնամակալների դերը վերասահմանելու հնարավորությունը, որպեսզի այդ անչափահասները կարողանան ինքնուրույն իրացնել իրենց իրավունքները, այլ ոչ թե այլոք իրացնեն իրենց փոխարեն: Որպես այլընտրանք, նոր օրենքը պետք է փոփոխվի՝ սահմանելով հատուկ դրույթներ այն մասին, որ ծնողները կամ խնամակալներն իրավունք ունեն ստանձնելու անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի շահերի պաշտպանությունը՝ պայմանով, որ իրենց որոշումը հիմնված լինի երեխայի լավագույն շահերի վրա, և որ նրանք հաշվի առնեն խնդրո առարկայի վերաբերյալ երեխայի տեսակետները:

Մի քանի այլ հոդվածներում հստակեցվում են տարբերությունները անչափահասների և չափահասների դատավարական իրավունքների միջև: Բացառություն է 69-րդ հոդվածը, որում նշվում է, որ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է այն քրեական գործերով վարույթում, երբ վերագրվող հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է եղել[81]: Պաշտպանի մասնակցությունը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ դատապարտված անչափահասը բողոքարկել է դատավճիռը կամ նշանակված պատժամիջոցը[82]: Օրենքի այս դրական առանձնահատկությունները ներդաշնակ են միջազգային ստանդարտներին:

Կիրառվող խափանման միջոցների վերաբերյալ 134-րդ հոդվածը միայն մեկ խափանման միջոց է նախատեսում հատկապես մեղադրյալ անչափահասների համար, այն է՝ հսկողության հանձնելը[83]: Խափանման միջոցի տեսակն ընտրելու հիմքերի վերաբերյալ 135-րդ հոդվածը սահմանում է, որ մեղադրյալի տարիքն այն գործոններից մեկն է, որոնք հարկավոր է հաշվի առնել, սակայն չի սահմանում, որ մինչդատական վարույթի ընթացքում կալանավորումը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, եթե մեղադրյալի 18 տարին չի լրացել, այսինքն, այդ միջոցի անհրաժեշտությունը պետք է համադրվի անչափահասի վրա ազատությունից զրկելու հնարավոր բացասական հետևանքների հետ: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են. «Անչափահասին ազատությունից զրկելը պետք է լինի ծայրահեղ միջոց և նշանակվի և կիրառվի հնարավոր նվազագույն ժամկետով: Առանձին

[80] Հոդված 77.3.
[81] Հոդված 69.1.5.
[82] Հոդված 429.
[83] Հոդված 134.3.

ջանքեր պետք է գործադրել մինչդատական կալանքից խուսափելու համար»[84]: Ձերբակալման և մինչդատական կալանքի վերաբերյալ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 421-րդ հոդվածը օրենսդրությունն է՛լ ավելի կներդաշնակեցնի ծայրահեղ միջոցի սկզբունքին (տես ստորև):

Ձերբակալման որոշման վերաբերյալ 130-րդ հոդվածը սահմանում է, որ ձերբակալված անձն արգելանքի տակ կարող է պահվել 72 ժամ: Նմանապես, 62-րդ հոդվածը սահմանում է, որ կասկածյալները չեն կարող արգելանքի տակ պահվել 72 ժամից ավելի[85]: Հոդվածներից որևէ մեկը անչափահասների համար բացառություն չի նախատեսում: Դա անհարիր է նպատակահարմար նվազագույն ժամանակահատվածի սկզբունքին, որը ճանաչված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 37(բ) հոդվածով: Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից այս սկզբունքի մեկնաբանությունից բխում է, որ ձերբակալված երեխաներն արգելանքի տակ չպետք է գտնվեն ավելի քան 24 ժամ՝ առանց դրա երկարաձգման անհրաժեշտության վերաբերյալ իրավասու մարմնի որոշման[86]: Քրեական դատավարության օրենսգրքի 421.3 հոդվածով դատարանից կպահանջվի անչափահասի ձերբակալման մասին 48 ժամվա ընթացքում ծանուցել դատարանին: Դա առաջընթաց կլինի, սակայն օրենքն ամբողջովին չի համապատասխանեցնի միջազգային ստանդարտներին (տես ստորև):

63-րդ հոդվածը սահմանում է, որ կասկածյալն իրավունք ունի արգելանքի վերցվելուց հետո 12 ժամվա ընթացքում տեղեկացնել իր ընտանիքի անդամներին, և որ կասկածյալներն իրավունք ունեն արգելանքի վերցվելու մասին գրավոր որոշումն ստանալու պահից ունենալ պաշտպան[87]: Այս դրույթները, որոնք նույնությամբ կիրառվում են անչափահասների և չափահասների նկատմամբ, չեն համապատասխանում անչափահասների գործերով արդարադատության միջազգային ստանդարտներին: Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն նշել է, որ «ծնողները պետք է հնարավորինս սեղմ ժամկետում տեղեկացվեն իրենց երեխայի արգելանքի մասին»[88]: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 421.2 հոդվածը, որում նշված է, թե ծնողները պետք է տեղեկացվեն անմիջապես, օրենքն է՛լ ավելի կհամապատասխանեցնի այս հարցի շուրջ միջազգային ստանդարտներին:

Պատճառներից մեկը, որ ձերբակալված կասկածյալներն իրավունք ունեն օգտվելու պաշտպանի ծառայություններից, ցուցմունք տալուն հարկադրելուց զերծ մնալու իրավունքի խախտումները կանխելն է: Դա հատկապես կարևոր է անչափահաս կասկածյալների պարագայում, ում տարիքը և հասունության աստիճանը նրանց ավելի խոցելի են դարձնում ֆիզիկական և հոգեբանական ճնշման առումով[89]: Անչափահաս կասկածյալները պետք է արգելանքի վերցվելու պահից իրավական օժանդակության իրավունք ունենան, և այդ իրավունքը չպետք է կասկածի տակ առնվի փաստաբանի բացակայության պատճառաբանությամբ: Երեխայանպաստ արդարադատության վերաբերյալ եվրոպական ուղենիշներում նշված է, որ «Արգելանքի վերցված երեխան չպետք է հարցաքննվի քրեական արարքի առնչությամբ՝ առանց փաստաբանի կամ երեխայի ծնողներից մեկի, իսկ ծնողների բացակայության դեպքում՝ երեխայի համար

[84] Հիմնական սկզբունք 10.
[85] Հոդված 62.2.
[86] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, 83-րդ պարբերություն.
[87] Հոդված 63.
[88] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, 54-րդ պարբերություն.
[89] Ընդհանուր մեկնաբանություն, թիվ 10, 57-58-րդ պարբերություններ.

վստահելի մեկ այլ անձի ներկայության»[90]: Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 419-րդ և 422-րդ հոդվածները, 108.2-րդ հոդվածի հետ միասին, օրենքը կարող են համապատասխանեցնել այս սկզբունքներին (տես ստորև):

Բ. Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը և իրավախախտում կատարած անչափահասները[91]

Ինչպես այս զեկույցը գրելու պահին գործող Քրեական դատավարության օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը ևս առանձին գլուխ ունի իրավախախտում կատարած անչափահասների գործերով վարույթի վերաբերյալ[92]: Այն առավել ընդգրկուն է, քան գործող օրենսգրքի 50-րդ հոդվածը, և պարունակում է 12 հոդված (416-427-րդ), որոնցով բազմաթիվ կարևոր փոփոխություններ կարվեն իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ դատավարական օրենսդրությունում:

Նախագծի 416-րդ հոդվածը սահմանում է, որ իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ վարույթում ընդգրկված մարմինները պետք է «ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ անչափահասի դաստիարակության, բնակության, կրթության կամ աշխատանքի պատշաճ պայմաններ ապահովելու, ինչպես նաև անօրինական ազդեցության հավանականությունը նվազագույնի հասցնելու համար», և որ ձեռնարկված միջոցները «պետք է համարժեք լինեն վերագրվող հանցագործության փաստացի հանգամանքներին և ծանրությանը, ինչպես նաև բխեն անձի անձնական հատկանիշներից և սոցիալական և հոգեբանական պայմաններից»: Այս ընդհանուր ուղենիշները հիմնականում դրական են, թեև որոշակի հանգամանքների առկայության դեպքում այն գաղափարը, որ հանցանքին տրվող արձագանքը պետք է համարժեք լինի թե՛ հանցագործության ծանրությանը, և թե՛ իրավախախտումը կատարած անձի հատկանիշներին, կարող է հանգեցնել ծայրահեղ միջոցի և նվազագույն միջամտության սկզբունքներին հակասող հետևանքների[93]: Առաջարկություն. դրանից կարելի է խուսափել սկզբունքի վերահաստատմամբ՝ նշելով, որ ձեռնարկվող միջոցները չպետք է անհամարժեք լինեն հանցագործության ծանրությանը, ինչպես դա նշված է Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններով պատժամիջոցների կամ միջոցների նշանակումը և իրականացումը պետք է հիմնված լինեն իրավախախտում կատարած անչափահասների լավագույն շահերի վրա, որը պետք է սահմանափակված լինի կատարված հանցագործությունների ծանրությամբ (համարժեքության սկզբունք)…[94] 417-րդ հոդվածը սահմանում է, որ իրավախախտում կատարած անչափահասների դեպքում հաշվի առնվելիք գործոնները ներառում են սոցիալական և ընտանեկան պայմանները, այդ թվում՝ երեխայի խնամքի և դաստիարակության ձևերը, նրա հատկանիշները և հոգեբանական զարգացման մակարդակը, ինչպես նաև ենթադրյալ հանցագործությանը երեխայի մասնակցության

---

[90] Ուղենիշ թիվ 30.

[91] Զեկույցի այս հատվածը հիմնված է Օրենսգրքի անգլերեն թարգմանության վրա, որը 2013թ.հրապարակվել է ԵԱՀԿ կողմից, հասանելի է հետևյալ հղումով. *http://www.osce.org/odihr/101434?download=true*

[92] Գլուխ 51.

[93] Տե՛ս՝ Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 9 հիմնական սկզբունքը. «Պատիժները կամ միջոցները կարող են իրականացվել… միայն անհրաժեշտ ծավալով և խիստ անհրաժեշտ տևողությամբ» (նվազագույն միջամտության սկզբունք).

[94] Նույն տեղում, թիվ 5 հիմնական սկզբունք.

հանգամանքներն ու պատճառները, ներառյալ՝ մեծահասակների ազդեցությունը: Սա մեծապես համապատասխանում է միջազգային ստանդարտներին[95]: Նախագծի 418-րդ հոդվածով ճանաչվում է մի սկզբունք, որը ճանաչված է ներկայումս գործող Օրենսգրքով, մասնավորապես այն, որ անչափահասների գործերով բոլոր վարույթները պետք է «քննվեն արագորեն և առանց անհարկի հապաղման»: Այն նաև ճանաչում է սկզբունքը, որ իրավախախտում կատարած անչափահասներին առնչվող ցուցմունքները պետք է գաղտնի լինեն, իսկ նախագծի 424-րդ հոդվածով պահանջվում է, որ անչափահաս մեղադրյալների վերաբերյալ վարույթները հասարակության համար փակ լինեն: Սրանք դրական քայլեր են, որոնք ներդաշնակ են միջազգային ստանդարտներին: Նախագծի 419-րդ հոդվածը սահմանում է, որ իրավախախտում կատարած անչափահասների գործերով վարույթին պաշտպանի մասնակցությունը պետք է պարտադիր լինի վերջինիս ձերբակալման կամ մեղադրանքի առաջադրման պահից, իսկ նախագծի 422-րդ հոդվածը սահմանում է, որ մեղադրյալ անչափահասը պետք է տեղեկացվի ցուցմունք չտալու իրավունքի մասին, և որ նա կարող է հարցաքննվել իր պաշտպանի և հոգեբանի ներկայությամբ[96]: Վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը դրական քայլ է, որը համապատասխանում է միջազգային ստանդարտներին: Հարցաքննության ժամանակ պաշտպանի ներկայությունը կարևորագույն երաշխիք է, որը պետք է պահպանվի անչափահաս կասկածյալների և հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահասների պարագայում: Նախագծի 108.2 հոդվածը սահմանում է, որ «Անձը ձերբակալված համարվում է ազատությունից փաստացի զրկվելու պահից», որը կարող է նշանակել, որ հարցաքննության նպատակով արգելանքի վերցված կասկածյալները պաշտպանի իրավունք ունեն: Եթե այդպես է, դա կարող է միջազգային ստանդարտներին լիարժեք համապատասխանության ուղղությամբ խոշոր քայլ լինել:Նախագծի 420-րդ հոդվածը նախատեսում է վարույթին անչափահասի օրինական ներկայացուցիչների պարտադիր մասնակցություն[97]: Սա մեծապես համահունչ է միջազգային ստանդարտներին: Պեկինյան կանոնների 7-րդ կանոնը, օրինակ, «ծնողի կամ խնամակալի ներկայության իրավունքը» ներկայացնում է որպես անչափահասի իրավունք, իսկ Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են. «Անչափահասների հետ գործ ունեցող արդարադատության ցանկացած համակարգ պետք է հավուր պատշաճի հաշվի առնի ծնողների և օրինական ներկայացուցիչների իրավունքներն ու պարտականությունները և նրանց հնարավորինս ներգրավի վարույթի ընթացքում… բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի բխում անչափահասի լավագույն շահերից»[98]: Նախագծի 421-րդ հոդվածի 2-րդ մասը ևս սահմանում է, որ երեխայի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը պետք է «անմիջապես» ծանուցվի անչափահասի ձերբակալման կամ կալանավորման մասին: Սա ևս շատ դրական զարգացում կլինի՝ միջազգային ստանդարտներին համապատասխանության առումով: Նախագծի 421-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ «Անչափահասի ազատությունը սահմանափակելու վերաբերյալ ցանկացած որոշում պետք է կայացվի վարույթի բոլոր հանգամանքների մանրակրկիտ ուսումնասիրման հիման վրա՝ այդ սահմանափակումները հնարավորինս նվազեցնելու

[95] Տե՛ս՝ Պեկինյան կանոնների 16-րդ կանոնը և Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 5 հիմնական սկզբունքը.

[96] Նախագծի 419.1 և 422.1 հոդվածներ. տես նաև նախագծի 46.2.3 հոդվածը.

[97] 6.30 հոդվածի համաձայն, օրինական ներկայացուցիչ է համարվում երեխայի ծնողը կամ որդեգիր ծնողը, խնամակալը կամ հոգաբարձուն կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցը:

[98] Հիմնական սկզբունք թիվ 14.

նպատակով»: Սա Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և միջազգային այլ փաստաթղթերով ճանաչված ծայրահեղ միջոցի սկզբունքի մեկ այլ տարբերակ է[99]: Ընդունվելու դեպքում հոդվածի այս մասը կընդլայնի ծայրահեղ միջոցի կանոնը, քանի որ այն կկիրառվի ոչ միայն ազատազրկման, այլև ազատությունից զրկելու այլ եղանակների վրա: Կալանավորման մասին հինգերորդ մասը միանշանակ վերահաստատում է ծայրահեղ միջոցի սկզբունքը և, ինչպես 4-րդ մասը, լրացուցիչ հատուկ պայմաններ է հավելում: Վեցերորդ և յոթերորդ մասերը սահմանափակում են մինչդատական կալանքի տևողությունը[100]: Այս ամենը դրական զարգացում է: Ի հակառակ դրա, 421-րդ հոդվածի 3-րդ մասը թույլ է տալիս նախքան անչափահասներին դատարան ներկայացնելն արգելանքի տակ պահել մինչև 48 ժամ, և ըստ էության դատարանին տրամադրում է ևս 12 ժամ՝ անչափահասին ազատ արձակելու հարցը վճռելու համար: Սա համահունչ չէ միջազգային ստանդարտներին՝ ըստ Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանության, որով խորհուրդ է տրվում, որ ձերբակալված անչափահասները դատարան ներկայացվեն 24 ժամվա ընթացքում՝ որոշելու համար ազատությունից զրկելու անհրաժեշտությունը որոշելու համար[101]: *Առաջարկություն.* նախագծի այս հոդվածը հարկավոր է վերանայել՝ պահանջելով, որ ոստիկանությունում պահվող անչափահասները դատարան ներկայացվեն 24 ժամվա ընթացքում՝ պարզելու համար արգելանքը շարունակելու անհրաժեշտությունը: Նախագծի 423-րդ և 425-րդ հոդվածներով ընդունվում է քրեական գործով վարույթը կարճելու ընթացակարգ, երբ համապատասխան մարմինները համարում են, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվողը կարող է «ուղղվել»՝ առանց քրեական հետապնդման ենթարկվելու[102]: Որոշումը կայացնում է դատարանը՝ դատախազի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, և ենթադրում է այլընտրանքային «դաստիարակչական» միջոցների նշանակում, ինչպիսիք են՝ պատճառված վնասի հարթումը կամ անչափահասի վարքագծի նկատմամբ հսկողություն սահմանելը[103]: Մեղադրյալը և նրա ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը պետք է տան իրենց համաձայնությունը[104]: Սա, ըստ էության, գործի արտադատական լուծման եղանակ է, որը միջազգային ստանդարտներով համարվում է անչափահասների գործերով արդարադատության արդի համակարգերի հիմնական բաղադրիչներից մեկը[105]: Նախագծի 426-րդ հոդվածը դատարանից պահանջում է անչափահասների նկատմամբ դատավճիռ կայացնելիս «քննարկել» կատարված հանցագործության պատճառները, հանցանքի կատարմանը դրդող հանգամանքները և այն միջոցները, որոնք կարող են օգնել հաղթահարել այդ հանգամանքները, և «լուծել» իրավախախտումը կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու կամ պայմանական դատապարտման հարցը: Սա շատ դրական զարգացում կլինի, որը կնպաստի ծայրահեղ միջոցի սկզբունքին համապատասխանությանը: Նախագծի 427-րդ հոդվածը դատարանին թույլ է տալիս դատաքննությունից հետո պատիժ նշանակելու փոխարեն անչափահասին տեղավորել

---

[99] ԵԻԿ37(բ) հոդված, Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, հիմնական սկզբունք թիվ 10.

[100] *Անչափահաս մեղադրյալների դեպքում տևողություններն ավելի կարճ են, քան 194-րդ հոդվածով չափահասների համար սահմանվածները, բացառությամբ ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար սահմանված 2 ամիս տևողության:*

[101] Ընդհանուր մեկնաբանություն թիվ 10, 83-րդ պարբերություն.

[102] Նախագծի 423.1 և 425.1 հոդվածներ.

[103] Նախագծի 423.3 and 425.1 հոդվածներ.

[104] Նախագծի 423.2 հոդված.

[105] Տե՛ս, օրինակ, ԵԻԿ 40.3(բ) հոդված, Պեկինյան կանոններ, 11-րդ կանոն.

հատուկ կրթական հաստատությունում կամ բուժ-դաստիարակչական հաստատությունում: Այս դրույթը, ինչպես և 422-րդ և 425-րդ հոդվածներով նախատեսված արտադատական լուծման եղանակը, կիրառվում է միայն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձանց նկատմամբ: Գործող քրեական օրենսգիրքն ունի նույն դրույթը՝ առանց հանցանքն առաջին անգամ կատարելու հետ կապված սահմանափակման[106]: Նախագծի 427-րդ հոդվածը, հետևաբար, հետընթաց քայլ կլինի. եթե դատարանը եզրակացնի, որ ուղղումը հնարավոր է առանց պատիժ նշանակելու, ապա քրեական պատասխանատվությունից ազատելու հետ կապված հայեցողության մնացած սահմանափակումներն անհրաժեշտ չեն լինի և կհակասեն տվյալ երեխայի լավագույն շահերին: Առաջարկություն. հարկավոր է հանել անչափահասի կողմից հանցանքն առաջին անգամ կատարելու հետ կապված սահմանափակումը:Օրենսգրքի նախագծի այլ գլուխներում տեղ գտած որոշ հոդվածներ ևս անդրադառնում են անչափահաս կասկածյալների հետ կապված հարցերին: Մեղադրյալների օրինական ներկայացուցչի վերաբերյալ նախագծի 44-րդ հոդվածը սահմանում է, որ խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցը պետք է նշանակվի որպես «առանց խնամքի մնացած» անչափահաս մեղադրյալի օրինական ներկայացուցիչ: Վարույթին մասնակցող չափահասի պարագայում կարևոր է, որ նա վայելի անչափահասի վստահությունը, հատկապես, եթե չափահասն օժտված է մեղադրյալի իրավունքների «իրացման» լայն իրավասություններով, ինչպես սահմանված է գործող օրենսգրքով և օրենսգրքի նախագծով[107]: Միջազգային ստանդարտներով սահմանված է, որ իրավական ընթացակարգերում ներգրավված երեխան, անկախ մեղադրյալի կամ այլ կարգավիճակ ունենալուց, պետք է ուղեկցվի ծնողի կամ երեխայի ընտրությամբ՝ այլ չափահասի կողմից[108]: Նախագծի 69-րդ հոդվածը սահմանում է, որ երեխայի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե «նրա վարքագիծն ակնհայտորեն վնասում է իր իսկ կողմից ներկայացվող անձի շահերին» [բառացի մեջբերում][109]: Հարկավոր է քննարկել շեմը նվազեցնելու հարցը, քանի որ որոշ դեպքերում հեշտ է ի հայտ բերել շահերի հավանական բախումները, որոնք կարող են հանգեցնել երեխայի ներկայացուցչի փոխարինման: Առաջարկություններ. այս հոդվածը հարկավոր է վերանայել՝ սահմանելու համար ծնողից կամ խնամակալից ներկայացուցչի դերը վերցնելու հնարավորությունը՝ շահերի հավանական բախման դեպքում, և սահմանել, որ ծնողի կամ խնամակալի կողմից ներկայացուցչի պատասխանատվությունն ստանձնելու անկարողության դեպքում առաջնահերթություն պետք է տրվի երեխայի ընտրությամբ մեկ այլ ազգականի կամ այլ չափահաս անձի ներկայացուցչի նշանակելուն: Նախագծի 219-րդ հոդվածը սահմանում է, որ երեխայի մասնակցությամբ «քննչական գործողություններ կատարելիս պետք է ներգրավվի հոգեբան»: Քննչական գործողություններից են՝ հարցաքննությունը, հակառակ ցուցմունք տվող վկայի հետ առերեսումը, մեղադրյալի, տուժողի կամ այլ վկայի հետ հանցագործության վայր այցելելը, տուժողի կամ մեղադրյալի անձնական խուզարկությունը, իրեղեն ապացույցները տուժողի, մեղադրյալի կամ վկայի ճանաչմանը ներկայացնելը[110]:

---

[106] Հոդված 93.

[107] 63.7, 65.5 և 77 հոդվածները համեմատել նախագծի 44.4-5 հոդվածի հետ.

[108] Երեխայանպաստ արդարադատության եվրոպական ուղենիշներ, ուղենիշ 58: Տե՛ս, նաև Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, հիմնական սկզբունք 14.

[109] Նախագծի այս հոդվածը կիրառվում է տուժող երեխաների և իրավախախտում կատարած անչափահասների նկատմամբ.

[110] Նախագծի 215, 224-225, 227-229, 231-232, 234, 236 հոդվածներ.

Միջազգային ստանդարտներով ընդունված է, որ դա խոցելի երեխա տուժողների պաշտպանության և քրեական վարույթին և ընթացակարգերին նրանց առավել լիարժեք մասնակցությունն ապահովելու արժեքավոր միջոց է, սակայն այդ ստանդարտներում նշված չէ մեղադրյալ անչափահասների հարցաքննությանը հոգեբանի մասնակցության նշանակության մասին[111]: Հոգեբանի դերը և նրա ներկայության նպատակը նախագծի 219-րդ հոդվածում հստակ սահմանված չէ. հոդվածում ընդամենը նշված է քննիչի թույլտվությամբ մեկնաբանություններ անելու և հարցերին պատասխանելու մասին: Ի հակառակ նախագծի 229-րդ հոդվածի, հիշատակում չկա նախքան հարցաքննությունը հոգեբանի և անչափահասի միջև հանդիպման, ինչպես նաև հարցաքննվող երեխային խորհուրդներ տալու հնարավորության մասին[112]: Առաջարկություններ. օրենսգրքի նախագիծը պետք է վերանայվի՝ երեխա տուժողների և իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ քննչական գործողություններում և քրեական վարույթում հոգեբանների դերակատարությանն անդրադառնալու նպատակով: Ինչ վերաբերում է իրավախախտում կատարած անչափահասներին, օրենսգրքի նախագիծը պետք է սահմանի, որ հոգեբանը պետք է նախքան քննչական գործողությունը հանդիպի կասկածյալին կամ մեղադրյալին՝ անչափահասի հոգեկան և հուզական վիճակը գնահատելու նպատակով, ինչը թույլ կտա պարզել, թե նա որքանով է ի վիճակի մասնակցելու տվյալ գործողությանը՝ առանց այդ գործողությանը հոգեբանի անձնական մասնակցության (ստորև տե՛ս առաջարկություն՝ տուժող երեխաների վերաբերյալ ընթացակարգերի մասին):

2. Նորմեր հանցագործությունից տուժած (կամ վկա) երեխաների վերաբերյալ

Ա. Քրեական դատավարության օրենսգիրքը և տուժող երեխաները

Քրեական դատավարության օրենսգրքում տեղ է գտել հանցագործությունից տուժած անչափահասների վերաբերյալ երեք խաչվող հասկացություն.տուժող կողմ, քաղաքացիական հայցվոր և վկա: 58-րդ հոդվածը տուժող կողմ է համարում այն անձին, ով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է կրել հանցագործության հետևանքով: Քաղաքացիական հայցվորն այն անձն է, ով քրեական վարույթի համատեքստում ակնկալում է հանցագործության հետևանքով կրած նյութական վնասների փոխհատուցում[113]: Վկան այն անձն է, ով քրեական հետապնդման մարմնի կամ պաշտպանության կողմի պահանջով կանչվել է ցուցմունք տալու[114]:

Օրենսգրքում մի քանի հոդված է նախատեսված հատկապես վկա երեխաների համար: 207-րդ հոդվածը, սկզբունքորեն, սահմանում է, որ կարող է հարցաքննվել ցանկացած երեխա, որ ի վիճակի է տրամադրել քրեական գործին առնչվող տեղեկատվություն: Եթե երեխայի տարիքը 14 տարեկանից ցածր է, ապա նրա «օրինական ներկայացուցիչը» (ծնողը կամ խնամակալը) պետք է ներկա գտնվեն: Քննիչն իր հայեցողությամբ կարող է թույլ տալ ներկա գտնվել 14 կամ 15 տարեկան երեխայի ծնողին: 87-րդ հոդվածն ընդունում է վարույթի ընթացքում 14 տարին չլրացած երեխաներին ուղեկցելու, միջնորդություններ և առարկություններ ներկայացնելու, իր մասնակցությամբ անցկացված ընթացակարգերի արձանագրություններին ծանոթանալու և ուղղումներ

[111] Տեղեկություններ կան այն մասին, որ որոշ ոստիկանների կարծիքով հոգեբանի դերը կայանում է նրանում, որ նա օգնի քննիչին՝ հասկանալ, թե հարցաքննվող երեխան երբ է ճիշտ խոսում:

[112] Փաստաբանի հետ նախապես հանդիպելու իրավունքի մասին նախագծի 229.3 հոդվածը, ինչպես նաև հարցաքննվող անձին քննիչի ներկայությամբ համառոտ խորհրդատվություն տրամադրելու՝ լիազոր ներկայացուցիչների կամ պաշտպանների իրավունքի վերաբերյալ 225.4, 227.3 հոդվածները:

[113] Հոդված 60.

[114] Հոդված 86.

պահանջելու՝ երեխայի ներկայացուցչի իրավունքը: Այն նաև վարույթն իրականացնող մարմնին իրավունք է վերապահում հոդվածը կիրառելու նաև 14 տարին լրացած երեխաների ծնողների կամ ներկայացուցիչների նկատմամբ: 341-րդ հոդվածը վերաբերում է դատաքննության ընթացքում վկա երեխայի տված ցուցմունքներին: Այն սահմանում է, որ վկա երեխան կարող է հարցաքննվել ամբաստանյալի բացակայությամբ, «եթե նրանց ցուցմունքն անհրաժեշտ է գործի հանգամանքների լիարժեք, համակողմանի և օբյեկտիվ քննության համար»: Այն նաև սահմանում է, որ 16 տարին չլրացած վկան ցուցմունք տալուց հետո սովորաբար հեռացվում է դատարանի դահլիճից: Ցուցմունք տալու համար սահմանված տարիքային նվազագույն շեմի բացակայությունը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, ինչպես և այն նորմը, որ ամբաստանյալը չպետք է ներկա գտնվի երեխայի կողմից ցուցմունք տալու ժամանակ[115]: Իրենց երեխայի հարցաքննությանը կամ ցուցմունք տալուն ներկա գտնվելու՝ փոքրահասակ երեխաների ծնողների իրավունքը մասամբ է համապատասխանում միջազգային ստանդարտներին, որոնցով խորհուրդ է տրվում, որ ծնողները պետք է իրավասու լինեն ներկա գտնվելու՝ անկախ իրենց երեխայի տարիքից, քանի որ նրանց ներկայությունը չի հակասի երեխայի լավագույն շահերին[116]:

Վկա երեխաների վերաբերյալ նորմերը հեռու են միջազգային ստանդարտներից: Օրինակ, Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության վերաբերյալ ուղենիշները նշում են, որ քրեական վարույթին իրենց մասնակցության վերաբերյալ վկա (և տուժող) երեխաների կարծիքը պետք է հաշվի առնվի[117]: Դա ենթադրում է, որ եթե վկա երեխան ցանկանում է ցուցմունք տալ, նրան հարկավոր է թույլատրել այդ, քանի որ նրա ցուցմունքը կարող է տեղին և ընդունելի լինել՝ անկախ նրա ցուցմունքի խիստ անհրաժեշտության հանգամանքից[118]: Օրենսգրքի և միջազգային ուղենիշների միջև առկա էական այլ հակասություններից է՝ վկա երեխային վարույթին մասնակցելուն նախապատրաստելու և մասնակցության հարցում նրանց աջակցելու որևէ պարտավորություն չսահմանելը[119]: Քրեական վարույթի մինչդատական փուլում տուժող կողմի իրավունքներն ու պարտականությունները թվարկված են Քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածում, իսկ քաղաքացիական հայցվորների իրավունքներն ու պարտականությունները՝ 61-րդ հոդվածում: Երկու հոդվածներն էլ պարունակում են դրույթ այն մասին, որ երեխայի իրավունքներն ու պարտականությունները «իրացվում են նրանց օրինական ներկայացուցչի կողմից», որը, սովորաբար, ծնողը կամ խնամակալն է[120]: Եթե ծնողը կամ խնամակալը չեն ներկայանում, ապա քննիչը, դատախազը կամ դատավորը խնամակալության և հոգաբարձության մարմնին հանձնարարում են ներկայացնել երեխայի շահերը[121]: Ինչպես նշվել է վերը, 77-րդ հոդվածում նկարագրվում են քրեական վարույթի կողմերի, ներառյալ՝ տուժողների և քաղաքացիական կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Ընդհանուր առմամբ, տուժող կամ քաղաքացիական հայցվոր երեխայի ներկայացուցիչն իրականացնում է երեխայի բոլոր իրավունքները, բացառությամբ հանցանքը կատարած

[115] Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի թիվ 18 և 31(բ) ուղենիշները, Եվրոպական թիվ 69 ուղենիշը.
[116] Տե՛ս, օրինակ, Եվրոպական թիվ 58 ուղենիշը.
[117] Ուղենիշ թիվ 21 (այս ուղենիշը, թերևս, հիմնված է ԵԻԿ 12-րդ հոդվածի վրա).
[118] Երեխայանպաստ արդարադատության վերաբերյալ եվրոպական ուղենիշներով ընդունվում է «…իրենց մասնակցությամբ և իրենց առնչվող ընթացակարգերի ժամանակ կարծիք հայտնելու և լսվելու՝ բոլոր երեխաների իրավունքը».Հիմնարար սկզբունք թիվ A.1.
[119] Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի թիվ 19, 24 և 25 ուղենիշները և Եվրոպական թիվ IV.A/1, 55 ուղենիշները.
[120] Հոդված 59.4 և 61.6.
[121] Հոդված 76.1.

անձի հետ հաշտվելու[122]: 77-րդ հոդվածը նաև սահմանում է, որ ներկայացուցիչը չի կարող ձեռնարկել որևէ գործողություն՝ ի վնաս իր ներկայացրած երեխայի շահերի[123]: 79.5.1 հոդվածը նշում է, որ տուժող որևէ կողմի կամ քաղաքացիական հայցվորի ներկայացուցիչը պետք է հետևի ներկայացվող անձի ցուցումներին, սակայն դա ակնհայտորեն չի վերաբերում այն դեպքերին, երբ ներկայացվող անձը երեխա է: Ընդհանուր առմամբ, տուժող երեխաների վերաբերյալ Օրենսգրքի դրույթներում պակասում են միջազգային ստանդարտները: Այն փաստը, որ երեխաների՝ որպես տուժողների դերը կարգավորված է այդ աստիճան մակերեսայնությամբ, տեղ չի թողնում տարակուսելու, թե ինչու երեխաների վերաբերյալ առանձին բաժին նախատեսված չէ: Ծնողների՝ որպես երեխաների ներկայացուցիչների դերի վերաբերյալ նորմերը, որոնք կիրառելի են նաև անմեղսունակ անձանց ներկայացուցչության վերաբերյալ, խոսում են այն նվազ կարևորության մասին, որ տրվում է երեխաների հետ կապված հարցերին: Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը նշանակալի բարելավումներ կմտցնի տուժող երեխաների վերաբերյալ դրույթներում, և այդ պատճառով ստորև ներկայացված առաջարկությունները տեղին են համարվում:

Բ. Քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը և տուժող երեխաները

Ինչպես նշվել է վերը, նախագծի 51-րդ գլուխը դատավարական օրենսդրությունը շատ ավելի մեծ չափով կհամապատասխանեցնի իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ միջազգային ստանդարտներին: Ցավոք, նույնպիսի գլուխ նախատեսված չէ հանցագործություններից տուժած երեխաների վերաբերյալ: Նախագծի 50-րդ հոդվածը թվարկում է քրեական վարույթում ներգրավված տուժողի իրավունքներն ու պարտականությունները: 4-րդ մասը սահմանում է, որ «Փոքրահասակ տուժողի իրավունքները… սույն օրենսգրքով սահմանված կարգով պետք է իր փոխարեն իրացվեն օրինական ներկայացուցչի կողմից»: Նախագծի 53-րդ հոդվածը նշում է, որ քրեական վարույթում որպես տուժող ճանաչված երեխաների ծնողները և խնամակալները «պետք է իրավունք ունենան ճանաչվելու երեխայի օրինական ներկայացուցիչ», և, որպես այդպիսիք, պետք է օժտված լինեն տուժող երեխայի բոլոր իրավունքներով և իրացնեն դրանք, բացառությամբ տուժողի անքակտելի իրավունքների[124]: Օրենսգրքի նախագիծը, նույն կերպ, ինչ գործող օրենսգիրքը, երեխայի ներկայացուցչին արգելում է իրականացնել գործողություններ՝ ի վնաս երեխայի լավագույն շահերի[125]: Նախագծի 69-րդ հոդվածը սահմանում է, որ տուժող (կամ իրավախախտում կատարած) երեխայի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե նրա վարքագիծը «ակնհայտորեն վնասում է» ներկայացվող երեխայի շահերին: Այս ստանդարտը, ինչպես նշվել է վերը, բավարար չափով չի ապահովում քրեական վարույթում որևէ կարգավիճակով ներգրավված երեխայի շահերի պաշտպանությունը: Առաջարկություն. հարկավոր է քննարկել շահերի հավանական նշանակալի բախում ի հայտ բերելու դեպքում տուժող երեխայի պոտենցիալ ներկայացուցչի մասնակցությունն արգելելու հարցը:Օրենսգրքի նախագծի 9-րդ հոդվածը վերաբերում է քրեական վարույթում ընգրկված անձանց, մասնավորապես՝ տուժողների և այլ վկաների «հատուկ պաշտպանությանը»: Նախագծի այս գլխի որևէ հոդվածում երեխաները հատուկ չեն հիշատակվում: Ընդհանրապես, տուժող երեխաների դեպքում խորհուրդ են տրվում քրեական վարույթի կողմ հանդիսացող անձի կամ նրա ընտանիքի անդամի կյանքին, առողջությանը կամ

[122] Հոդված 76.4.3.
[123] Հոդված 76.5.
[124] 1, 4 և 7-րդ մասեր.
[125] Նախագծի 53.6 հոդված.

օրինաչափ շահերին «իրական վտանգ» սպառնալու դեպքում ձեռնարկվելիք միջոցներից մի քանիսը, օրինակ՝ «հատուկ միջոցառումների» կիրառումը, որոնք տուժողին թույլ են տալիս ցուցմունք տալ, որոնցով դատական նիստերը փակ են լինում հասարակության համար[126]: Բացի այդ, թեև «հատուկ միջոցառումներից» մի քանիսը, ասենք՝ ինքնության հետ կապված տվյալների փոփոխումը, կարող են էական հետևանքներ ունենալ տվյալ անձի ընտանիքի համար, սահմանված չէ պահանջ առ այն, որ հարկավոր է հաշվի առնել այդ միջոցին առնչություն ունեցող երեխաների շահերը: Առաջարկություններ. Ճիշտ կլիներ վերանայել օրենսգրքի նախագիծը՝ «պաշտպանության հատուկ միջոցներից» մի քանիսը հանցագործություններից կամ, առնվազն՝ բռնությամբ զուգորդված հանցագործություններից տուժած երեխաների նկատմամբ սովորական հիմունքներով կիրառելի դարձնելու նպատակով: Հարկավոր է քննարկել պաշտպանության հատուկ միջոցներ կիրառելու նպատակահարմարությանը կամ միջոցների տեսակի ընտրությունը որոշելիս երեխաների իրավունքներն ու շահերը հաշվի առնելու եղանակների վերաբերյալ հոդված ներառելու հարցը: Ինչպես նշվել է վերը, նախագծի 418-րդ հոդվածը սահմանում է, որ անչափահասների դեմ իրականացվող քրեական բոլոր վարույթները պետք է «քննվեն արագ և առանց անհարկի հապաղումների», և որ իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ ցուցմունքները պետք է գաղտնի պահվեն, իսկ 424-րդ հոդվածը պահանջում է, որ անչափահաս մեղադրյալների գործերով վարույթը պետք է լինի դռնփակ: Առաջարկություն. նույնանման դրույթներ պետք է կիրառվեն հանցագործություններից տուժած երեխաների վերաբերյալ գործերում: 260-րդ հոդվածը սահմանում է, որ «փորձաքննությունները», ինչպիսիք են՝ արյան, սերմնահեղուկի, թքի և մաշկի նմուշներ վերցնելը, կարող են իրականացվել քննիչի որոշմամբ: Առաջարկություններ. հարկավոր է հատուկ նորմեր սահմանել տուժող երեխաների առնչությամբ նման փորձաքննություններ իրականացնելու վերաբերյալ՝ պահանջելով հաշվի առնել երեխայի լավագույն շահերը և ջանքեր գործադրել երեխայի հոգեվիճակի վրա նման փորձաքննությունների ներգործությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Հարկավոր է քննարկել համապատասխան դեպքերում նման փորձաքննություններին հոգեբանի և/կամ երեխայի ծնողի կամ այլ ներկայացուցչի մասնակցություն պահանջելու հարցը[127]: Նախագծի 227-րդ հոդվածը վերաբերում է քրեական գործով քննության ընթացքում տուժողների հարցաքննությանը: Երրորդ մասը սահմանում է, որ եթե տուժողը ներկայանում է ծնողի կամ այլ ներկայացուցչի հետ, ապա վերջինս կարող է «մասնակցել հարցաքննությանը և քննիչի թույլտվությամբ կարճատև խորհրդատվություն տրամադրել տուժողին՝ նրա կարգավիճակին առնչվող հարցերի շուրջ»: Տուժողի ներկայացուցիչը ևս կարող է քննիչի թույլտվությամբ հարցեր ուղղել տուժողին, սակայն չի կարող մեկնաբանություններ անել տուժողի պատասխանների կապակցությամբ: Նախագծի 219-րդ հոդվածը, որը ևս հիշատակված է վերը, պահանջում է հոգեբանի ներկայություն երեխայի մասնակցությամբ «քննչական գործողությունների» ժամանակ, ինչպիսիք են՝ երեխայի հարցաքննությունը, տուժողի անձնական զննությունը, տուժողի կամ այլ վկայի հետ հանցանքի կատարման վայր այցելելը, իրեղեն ապացույցները տուժողի կամ վկայի ճանաչմանը ներկայացնելը և վկաների հետ առերեսումը[128]: Հոգեբանի դերը և նրա ներկայության նպատակը հստակ սահմանված չեն նախագծի այդ հոդվածում, որն ընդամենը հիշատակում է քննիչի թույլտվությամբ

[126] Նախագծի 73.1 և 74.1.8-9 հոդվածներ.

[127] Համապատասխան գործոններից են՝ երեխայի տարիքը, տուժող կամ կասկածյալ լինելու հանգամանքը, հանցանքի կատարման մեջ կասկածվող անձի ինքնությունը և փորձաքննության առանձնահատուկ բնույթը:

[128] Նախագծի 215, 224-225, 227-229, 231-232, 234, 236 հոդվածներ.

մեկնաբանություններ անելը և հարցեր ուղղելը: Փաստը, որ այս հոդվածը նույն չափով կիրառվում է անչափահաս մեղադրյալների և տուժող երեխաների նկատմամբ, ընդգծում է հոգեբանի պատշաճ դերը, հոգեբանի, երեխայի և հարցաքննության այլ մասնակիցների առնչությունը և քննչական այլ գործողությունները հստակեցնելու անհրաժեշտությունը: Տուժող երեխաների մասով ուղեցույց կարելի է գտնել Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների վերաբերյալ ՄԱԿ-ի ուղենիշներում, որում նշված է, որ «Տուժող և վկա երեխաները պետք է օժանդակություն ստանան աջակցող անձանցից, ինչպիսիք են՝ տուժող/վկա երեխաների գծով մասնագետները, և այդ օժանդակությունը պետք է սկսվի հանցագործության մասին նախնական հայտարարությունից մինչև այդ ծառայությունների անհրաժեշտության վերանալը»[129]: Նրանց գործառույթներից մեկը երեխաներին վարույթի ընթացքում սպասվող զարգացումներին պատրաստելն է[130]: Աջակցող անձինք պարտադիր չէ, որ հոգեբաններ լինեն, սակայն Ուղենիշներում հստակ նշված է, որ կարող են ներգրավվել հոգեբանության ոլորտի մասնագետներ, որպեսզի երեխաները «հարցաքննվեն երեխաների առանձնահատկությունների հանդեպ զգայուն եղանակով…, հոգեբանները նպաստեն ցուցմունքները տալուն և նվազեցնեն հնարավոր ահաբեկումը»[131]: Առաջարկություն. օրենքի նախագիծը պետք է վերանայվի այնպես, որ ներկայացնի տուժող կամ վկա երեխաների հարցաքննության ժամանակ հոգեբանի ներկայության նպատակը՝ ՄԱԿ-ի ուղենիշներով առաջարկվող ձևով: Դատաքննության ընթացքում տուժող կամ վկա երեխաների հարցաքննության վերաբերյալ 335-րդ հոդվածը պահանջում է երեխայի ծնողի կամ այլ ներկայացուցչի ներկայություն, ինչպես նաև ընդունում է դատարանի թույլտվությամբ երեխային հարցեր ուղղելու նրանց իրավունքը: Թեև օրենսգրքի նախագիծը պահանջում է հոգեբանի ներկայություն քրեական գործի քննության ժամանակ կատարվող հարցաքննությունների ընթացքում, նման պահանջ սահմանված չէ դատաքննության ժամանակ կատարվող հարցաքննությունների պարագայում: Առաջարկություններ. հարկավոր է քննարկել հոգեբանի ներկայությունը պահանջելու հարցն այն դեպքերի առնչությամբ, երբ հիմքեր կան ենթադրելու, որ երեխան կարող է դժվարություններ ունենալ ցուցմունք տալիս, իսկ հոգեբանի դերը կնվազեցնի երեխայի հոգեվիճակի հետ կապված ռիսկերը և երեխային կօգնի առավել արդյունավետ մասնակցել քննությանը: Նաև ցանկալի կլինի նշել, որ հնարավորության սահմաններում հոգեբանը պետք է լինի նույնը անձը, ով երեխային օգնել է մինչդատական փուլում: Նախագծի 343-րդ հոդվածն ընդունում է քրեական գործով դատաքննության ավարտին ամփոփիչ խոսքով հանդես գալու՝ տուժողի կամ նրա ծնողի կամ այլ ներկայացուցչի իրավունքը: Սա համահունչ է երեխային առնչվող իրավական գործընթացների ժամանակ լսվելու և իրենց կարծիքը հաշվի առնելու՝ երեխաների իրավունքին, որն ընդունված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12.2 հոդվածով: Նախագծի 131-րդ հոդվածը սահմանում է, որ գույքը կարող է առգրավվել նախքան դատաքննությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այն ձեռք է բերվել մեղադրյալին մեղսագրվող հանցագործության արդյունքում կամ օգտագործվել է որպես որևէ հանցանքի գործիք: Քրեական գործերով դատավճիռներում հարկավոր է կարգավորել նախքան դատաքննությունն առգրավված գույքը մեղադրյալին վերադարձնելու կամ այդ գույքը բռնագրավելու հարցը[132]: Սա, թերևս, դրական զարգացում է, քանի որ ներկայումս գործող Քրեական օրենսգրքով առգրավումն ու բռնագրավումը թույլատրվում են միայն որոշակի հանցագործությունների դեպքում, իսկ երեխաների սեռական շահագործումը դրանց թվին չի դասվում:

---

[129] Ուղենիշ թիվ 24.
[130] Ուղենիշ թիվ 30(բ).
[131] Ուղենիշ թիվ 31(գ).
[132] Նախագծի 354.1.12 հոդված.

2.2 Հայաստանի Հանրապետության Քրեակատարողական օրենսգրքի համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին

Մեկնաբանություններ և առաջարկություններ

1. Հոդված 17

Օրենսգրքի 17-րդ հոդվածը անչափահաս բանտարկյալներին վերաբերող առաջին հոդվածն է: Այս հոդվածի առաջին մասում ասվում է. «Դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը»: Հաջորդ նախադասությունում ավելացվում է. «Ուղղման միջոցների առանձին տեսակներ անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ»: Հոդվածը նշում չի պարունակում այն մասին, թե ուղղման որ միջոցներն են պարտադիր անչափահասների համար:

Բանտարկյալների վրա վերականգնողական որոշ միջոցառումների կամ ծրագրերի մասնակցելու պարտականություն դնելը համապատասխանում է միջազգային ստանդարտներին, անկախ նրանից՝ բանտարկյալներն անչափահա՞ս են, թե՝ չափահաս: Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտները, օրինակ, սահմանում են, որ «Անտառաճանաչ բանտարկյալների և երիտասարդ բանտարկյալների համար կրթությունը պարտադիր է…»[133]: Այդուհանդերձ, միջազգային ստանդարտներն ընդհանուր առմամբ առաջարկում են, որ վերականգնողական միջոցառումներին կամ ծրագրերին մասնակցությունը լինի կամավոր, հատկապես՝ անչափահաս բանտարկյալների պարագայում: Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս իրավախախտների վերաբերյալ եվրոպական կանոնների 50.1 կանոնը սահմանում է, որ «Ազատությունից զրկված անչափահասները պետք է ապահովվեն իմաստալից գործունեության և միջամտության զանազան տեսակներով … որոնց նպատակն է … պատրաստել ազատմանը և հասարակությունում վերաինտեգրվելուն…», իսկ 50.2 կանոնը հավելում է, որ «Նման գործունեությանը և միջամտություններին անչափահասների մասնակցությունը պետք է խրախուսվի», որից ենթադրվում է, որ մասնակցությունը պետք է լինի կամավոր հիմունքներով[134]:

Դա կարող է զարմանալի թվալ՝ հաշվի առնելով, որ վերականգնելն ուղղիչ համակարգի հիմնական նպատակն է[135]: Վերականգնողական ծրագրերին մասնակցություն կամավոր դարձնելու պատճառը, անկասկած, այն է, որ դրանք ավելի

---

[133] Կանոն 104.1, 104, Մաս 1, Նելսոն Մանդելայի կանոններ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 17/175 բանաձև, որն ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 17-ին: Ի հակառակ դրա, կրոնական միջոցառումներին մասնակցությունը պետք է լինի կամավոր հիմունքներով. Եվրոպական վերանայված բանտային կանոնների թիվ 29.3 կանոն, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (2006) 2 հանձնարարական:

[134] Հանձնարարական թիվ CM/Rec(2008)11: Տես նաև Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 76.1կանոնը. «Բոլոր միջամտությունները պետք է նախատեսված լինեն անչափահասների զարգացումը խթանելու համար, և վերջիններիս ակտիվ մասնակցությունը պետք է խրախուսվի»:

[135] Պեկինյան կանոնների 26.*3* կանոնը սահմանում է. «Փակ հիմնարկներում պահվող անչափահասների վերապատրաստման և նրանց հետ տարվող աշխատանքի նպատակը, խնամք, պաշտպանություն, կրթություն և մասնագիտական ուսուցում ապահովելն է՝ հանրօգուտ և արդյունավետ դեր ստանձնելու հարցում նրանց օգնելու համար»: Նմանապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Քրեակատարողական համակարգը բանտարկյալների հանդեպ պետք է դրսևորի այնպիսի վերաբերմունք, որի հիմնական նպատակը նրանց ուղղումն է և սոցիալական վերականգնումը»:

արդյունավետ են, երբ բանտարկյալն ազատորեն որոշում է մասնակցել դրանց: Մասնակցությունը կամավոր դարձնելու համար բանտային համակարգից պահանջվում է վերականգնողական ծրագրերը դարձնել առավել գրավիչ, այդ թվում՝ խրախուսական այնպիսի միջոցներով, ինչպիսիք են առավել ցանկալի ռեժիմի փոխադրելը կամ պայմանական ազատումը:

Միջոցառումներին մասնակցությունը կամավոր դարձնելը միշտ չէ, որ նշանակում է, թե բանտարկյալներին թույլատրվում է մասնակցել դրանց՝ երբ կամենան: Միջազգային ստանդարտներն ընդգծում են, որ յուրաքանչյուր անչափահաս բանտարկյալի վրա ներգործության համար հարկավոր է մշակել անհատական պլաններ, որոնցում նշված կլինեն, թե ինչ միջոցառումների է նա մասնակցելու, և թե որոնք են այդ միջոցառումների նպատակները[136]: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են.

Ընդունվելուց հետո հնարավորինս վաղ … մշակել կրթական և վերապատրաստման ծրագրերի ընդհանուր պլան՝ ելնելով անչափահասի անհատական բնութագրից, և սկսել նման ծրագրերի իրականացումը, իսկ … *նման ծրագրեր մշակելիս հարկավոր է հաշվի առնել անչափահասի տեսակետները*[137]:

Հետևաբար, վերականգնողական պլանում ներառվող միջոցառումներին մասնակցությունը կազմակերպվում է համաձայնության հիման վրա՝ այնքանով, որքանով բանտարկյալն ակտիվորեն մասնակցել է պլանի մշակմանը:

Միջազգային ստանդարտներով ընդունելի միակ բացառությունը վերաբերում է կրթությանը. միջազգային ստանդարտները սահմանում են, որ կրթական ծրագրերը պետք է պարտադիր լինեն այն տարիքի բանտարկյալների համար, որ տարիքում կրթությունը պարտադիր է երեխաների համար[138]: Այլ բացառություններ (օրինակ՝ բուժումը թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահումից) կարող են ընդունելի համարվել, եթե այդ մասնակցությունը պարտադիր համարելու հիմնավոր պատճառներ կան[139]: Ցանկացած պարագայում, հարկավոր է նկատի առնել Օրենսգիրքը փոփոխելու նպատակահարմարությունը՝ սահմանելու համար, թե որ միջոցառումներն են պարտադիր անչափահաս բանտարկյալների համար:

2. Հոդված 56

56 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «Անչափահաս դատապարտյալին ամսվա ընթացքում մեկ անգամ տրամադրվում է մինչև չորս ժամ տևողությամբ կարճատև տեսակցություն ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հետ»:

Միջազգային ստանդարտների առումով ընտանիքի անդամների հետ անչափահաս բանտարկյալների շփումների իրավունքն ընդունված է մասամբ, քանի որ, սկզբունքորեն, նման շփումներն օգնում են խթանել ընտանիքում և հասարակությունում

---

[136] Մանդելայի կանոն թիվ 94,Հավանայի կանոն թիվ 27 և Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, թիվ 50.1, 77 և 79 կանոններ.

[137] Կանոն թիվ 62.6.գև դ. [շեղատառերով ընդգծումը՝ հեղինակի կողմից].տես նաև թիվ 79.4 կանոնը.

[138] Եվրոպական վերանայված բանտային կանոնների թիվ 35.2 կանոն և Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 78.4 կանոն. «Անչափահասները պետք է հնարավորություն ունենան բանտարկության ընթացքում շարունակելու իրենց դպրոցական կրթությունը կամ մասնագիտական ուսուցումը, իսկ նրանց նկատմամբ, ովքեր չեն ավարտել պարտադիր դպրոցական կրթությունը, կարող են նման պահանջներ սահմանվել»:

[139] Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ թիվ 72.1 կանոնը սահմանում է. «Բանտերը պետք է ղեկավարվեն էթիկական այնպիսի սկզբունքներով, որոնց պայմաններում ընդունվում է բոլոր բանտարկյալների հանդեպ մարդ արարածի արժանապատվությանը հարիր մարդասիրական և հարգալից վերաբերմունք ցուցաբերելու պարտավորությունը»:

վերաինտեգրումը[140]: Եվրոպական ստանդարտները չեն մանրամասնում, թե անչափահաս բանտարկյալներն ինչ հաճախականությամբ պետք է իրավունք ունենան տեսակցելու ընտանիքի անդամների հետ, սակայն ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության մասին Հավանայի կանոնները նշում են, որ. «Յուրաքանչյուր անչափահաս պետք է մերձավորների կողմից պարբերական և հաճախակի այցելությունների իրավունք ունենա, որպես կանոն՝ շաբաթական մեկ անգամ, սակայն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ…»[141]: Օրենսգրքի 56 հոդվածի 3-րդ մասը բավարարում է Հավանայի կանոններով առաջարկվող նվազագույն ստանդարտին, սակայն չի բավարարում շաբաթական տեսակցությունների առաջարկվող նորմը: Հարկավոր է քննարկել օրենքն այս բարձր ստանդարտին համապատասխանեցնելու հարցը, բացառությամբ այն դեպքերի, երբ կան հիմնավոր պատճառներ՝ ընտանեկան տեսակցություններն ամիսը մեկ անգամով սահմանափակելու համար:

56.4 հոդվածը սահմանում է, որ «Դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից»:

Հավանայի կանոնները սահմանում են.

Յուրաքանչյուր անչափահաս պետք է ունենա բավականաչափ ազատ ժամանակի իրավունք՝ ամենօրյա ֆիզիկական վարժանքի համար, ընդ որում, եթե եղանակային պայմանները թույլ են տալիս, դրանք պետք է լինեն բացօթյա: Այդ ժամանակի ընթացքում հարկավոր է ապահովել համապատասխան լիցքաթափող կամ ֆիզիկական վարժությունների անցկացումը: Այդ միջոցառումների համար պետք է ապահովել համապատասխան շենք, պարագաներ ու սարքավորում[142]:

Մանդելայի կանոնները նույնաբովանդակ են և սահմանում են հետևյալը. «Երիտասարդ բանտարկյալները… պետք է զբոսանքի ընթացքում ֆիզիկական և լիցքաթափող վարժանքների հնարավորություն ունենան: Դրա համար պետք է տրամադրվեն համապատասխան տարածք, պարագաներ և սարքավորում»: Այդ կանոններով նաև սահմանված է, որ առողջապահության ոլորտի ծառայողները պետք է մոնիթորինգի ենթարկեն «վարժանքների և սպորտի հետ կապված կանոնների պահպանումը»[143]:

Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 81 կանոնն ավելի բարձր ստանդարտ է սահմանում. «Ազատությունից զրկված բոլոր անչափահասներին անհրաժեշտ է թույլատրել, որպեսզի նրանք *ամեն օր առնվազն երկու ժամ* [շեղատառերով ընդգծումը՝ հեղինակի կողմից] մարմնավարժանքով զբաղվեն, որից առնվազն մեկ ժամը՝ բացօթյա, եթե եղանակը թույլ է տալիս»: 52.4 հոդվածը համապատասխանում է զբոսանքի հաճախականության և տևողության հետ կապված ստանդարտներին: Այդուհանդերձ, «քայլելու» իրավունքը չի բավարարում Հավանայի կանոններով և Մանդելայի կանոններով սահմանված ֆիզիկական և լիցքաթափող վարժանքի իրավունքի հետ կապված պահանջները: Օրենսգիրքը հարկավոր է փոփոխել՝ այս իրավունքը միանշանակ ընդունելու նպատակով:

---

[140] Տե՛ս, օրինակ, Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Հավանայի կանոններ), Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 84, տես նաև Պեկինյան կանոնների թիվ 26.5 կանոնը.

[141] Կանոն թիվ 60.

[142] Կանոն թիվ 47.

[143] Կանոն թիվ 35.1(ե).

3. Հոդված 67

Քրեակատարողական օրենսգրքի՝ պատիժը կրելու վայրի մասին հայտնելու վերաբերյալ 67-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Ուղղիչ հիմնարկի վարչակազմը պարտավոր է դատապարտյալի՝ ուղղիչ հիմնարկ ընդունվելու կամ մեկ հիմնարկից մյուսը փոխադրվելու մասին անհապաղ տեղեկացնել դատապարտյալի մերձավոր ազգականներին կամ դատապարտյալի նշած անձանց»: Երկրորդ մասը բացառություն է նախատեսում չափահաս այն բանտարկյալների պարագայում, ովքեր գրավոր դիմումով խնդրել են չհայտնել իրենց ընտանիքներին:

Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնների թիվ 62.4 կանոնը սահմանում է, որ «Անչափահասի ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին պետք է անհապաղ տեղեկատվություն տրամադրվի անչափահասի տեղավորման, հաստատությունում ընդունված կանոնների, ինչպես նաև՝ ցանկացած այլ կանոնների մասին»: Հավանայի կանոնների թիվ 22 կանոնը սահմանում է. «Հիմնարկ ընդունելու, դրա գտնվելու վայրի, փոխադրման և ազատման մասին վերոհիշյալ տեղեկատվությունը պետք է անհապաղ փոխանցվի տվյալ անչափահասի ծնողներին, խնամակալներին կամ մերձավոր ազգականներին», իսկ Հավանայի կանոնների թիվ 56 կանոնը սահմանում է, որ անչափահաս բանտարկյալի ծնողները կամ խնամակալը պետք է տեղեկացվեն «բանտարկյալի առողջական վիճակի էական փոփոխությունների», այդ թվում՝ այնպիսի հիվանդությունների մասին, որոնց դեպքում պահանջվում է բուժում՝ ուղղիչ հիմնարկից դուրս, կամ այնպիսի իրավիճակի մասին, որի կարգավորման համար պահանջվում է ավելի քան 48 ժամ՝ հիմնարկի ներսում:

67-րդ հոդվածը բավարարում է Հավանայի կանոնների թիվ 22 կանոնի պահանջները և առավել հուսալի է պաշտպանում ծնողների իրավունքները, քան պահանջվում է Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններով: Այն, այդուհանդերձ, չի սահմանում ծնողներին կամ խնամակալներին անչափահաս բանտարկյալի առողջական վիճակի էական փոփոխության մասին տեղեկացնելու պարտավորություն: Հարկավոր է քննարկել օրենքը վերանայելու հարցը՝ դրանում Հավանայի կանոնների թիվ 56 կանոնի բովանդակությանը նման հոդված ներառելու նպատակով:

4. 68-րդ և 109-րդ հոդվածներ.

Քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է.

Ուղղիչ հիմնարկում անջատ են պահվում՝

1) տղամարդիկ՝ կանանցից.

2) անչափահասները՝ չափահասներից, բացառությամբ սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի.

109-րդ հոդվածը վերաբերում է պատիժը կրելու ընթացքում 18 տարին լրացած բանտարկյալներին: Այն սահմանում է.

1. Որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասը մինչև պատժի ժամկետը լրանալը պատիժը կրում է միևնույն ուղղիչ հիմնարկում, բայց ոչ ավելի, քան նրա քսանմեկ տարեկան դառնալը[144]:

2. Տասնութ տարին լրացած դատապարտյալի՝ բացասական վարքագիծ դրսևորելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առանձնահատկությունը չի գործում:

3. Արգելվում է որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անչափահասի պատիժը կրելու նպատակով փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելը:

---

[144] Անչափահասների համար գործում է միայն մեկ բանտ՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը: Արդարադատության նախարարի 2012թ. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրաման, կետ 2, ենթակետ 6.

Անչափահաս և չափահաս, ինչպես նաև արական և իգական սեռի բանտարկյալներին անջատ պահելու սկզբունքը երկար ժամանակ է, ինչ ընդունված է մարդու իրավունքների միջազգային իրավունքով[145]: Վերանայված եվրոպական բանտային կանոնները սահմանում են, որ. «18 տարին չլրացած երեխաները պետք է պահվեն ոչ թե չափահասների համար նախատեսված բանտում, այլ հատուկ այդ նպատակով ստեղծված հաստատությունում»[146]: Կանոններն այնուհետ հավելում են. «Եթե երեխաներն այդուհանդերձ բացառության կարգով պահվում են նման բանտում, անհրաժեշտ է ունենալ այնպիսի կանոնակարգեր, որոնք թույլ կտան հաշվի առնել նրանց կարգավիճակն ու կարիքները»[147]: Իրավախախտում կատարած անչափահասի վերաբերյալ եվրոպական կանոնները նույնաբովանդակ դրույթ են պարունակում, որում ասվում է. «Անչափահասները պետք է պահվեն ոչ թե չափահասների, այլ հատկապես անչափահասների համար նախատեսված հաստատություններում: Եթե անչափահասները բացառիկ դեպքերում այդուհանդերձ պահվում են չափահասների համար նախատեսված հաստատությունում, նրանք պետք է տեղավորվեն առանձին, եթե որոշ դեպքերում նրանց շահերից հակառակը չի բխում»[148]: Այս կանոնները հատկապես կարևոր են ազատազրկման դատապարտված դեռահաս աղջիկների համար, քանի որ նրանց թիվը փոքր է, և նրանք իրենց պատիժը հաճախ կրում են կանանց համար նախատեսված բանտերում:

Գոյություն ունեն հատկապես իգական սեռի բանտարկյալներին վերաբերող միջազգային ստանդարտներ: Պեկինյան կանոնների թիվ 26.4 կանոնը սահմանում է.

Փակ հիմնարկներում պահվող իրավախախտ աղջիկները պետք է հատուկ ուշադրության արժանանան՝ հաշվի առնելով նրանց անձնական կարիքներն ու խնդիրները: Նրանք պետք է ապահովվեն նույնպիսի խնամքով, օգնությամբ, պրոֆեսիոնալ պատրաստությամբ, ինչպիսին տրամադրվում է արական սեռի երիտասարդ իրավախախտներին…

Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի վերաբերյալ Բանգկոկյան կանոնները սահմանում են, որ «Իգական սեռի անչափահաս բանտարկյալները պետք է կարողանան օգտվել կրթական և մասնագիտական ուսուցման նույն հնարավորություններից, ինչ արական սեռի անչափահաս բանտարկյալները»[149]: Առավել ընդհանրական առումով դրանցով նաև ճանաչվում է իգական սեռի անչափահաս բանտարկյալների՝ հատկապես իրենց տարիքի և սեռի բանտարկյալներին հարմարեցված ծրագրերից և ծառայություններից օգտվելու իրավունքը, այդ թվում այնպիսի միջոցառումներից, որոնք «բավարարում են նրանց կարիքներին»[150]: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են, որ «Արական և իգական սեռի բանտարկյալները պետք է պահվեն առանձին հիմնարկներում կամ միևնույն հիմնարկի տարբեր բաժանմունքներում…», սակայն «…նրանց հարկավոր է թույլատրել համատեղ մասնակցել կազմակերպվող միջոցառումներին»[151]:

---

[145] Տե՛ս, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 10.3 (1978թ.) և Բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքի նվազագույն ստանդարտ կանոններ, կանոն թիվ 8 (1955թ.).

[146] Կանոն թիվ 11.1.

[147] Կանոն թիվ 11.2.

[148] Կանոն թիվ 59.1.

[149] Կանոն 37, Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և իրավախախտում կատարած կանանց նկատմամբ նշանակվող ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 2010/16 բանաձև.

[150] 38-րդ և 36-րդ կանոններ.

[151] Կանոն 60.

Խորհուրդ է տրվում Օրենսգրքով ընդունել, որ ազատազրկման դատապարտված իգական սեռի բանտարկյալները պատիժը պետք է կրեն կանանց համար նախատեսված բանտում, ինչպես նաև սահմանել որոշ ստանդարտներ՝ ապահովելու համար նրանց հատուկ կարիքների ու իրավունքների ճանաչումն ու պաշտպանությունը: Հարկավոր է, օրինակ, նկատի առնել կանանց բանտում անչափահասներին առանձնացնելու համապատասխան կանոններին, չարաշահումներից կամ բացասական ներգործությունից պաշտպանելուն, նրանց հատուկ կարիքներին համապատասխանեցված կրթությունից և այլ ծրագրերից ու ծառայություններից օգտվելու իրավունքին, և վերջապես՝ իրավախախտում կատարած արական սեռի անչափահասների հետ միասին միջոցառումների մասնակցելուն:

Օրենսգրքի 67-րդ հոդվածում 109-րդ հոդվածին հղում կատարելը, թերևս, նպատակ ունի ճանաչելու բացառությունն այն կանոնից, որ պատիժ կրող անչափահաս և չափահաս դատապարտյալները պետք է պահվեն տարբեր բանտերում, մասնավորապես, խոսքը գնում է 18 տարին լրացած անչափահաս բանտարկյալներին տրվող այն հնարավորության մասին, որ նրանք կարող են մինչև 21 տարին լրանալը մնալ անչափահասների համար նախատեսված բանտում՝ պայմանով, որ դրսևորեն դրական վարքագիծ:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան սահմանում է, որ ազատությունից զրկված բոլոր երեխաները՝ անկախ դատապարտված լինելու կամ չլինելու հանգամանքից, պետք է չափահասներից անջատ պահվեն, բացառությամբ այն դեպքերի, երբ անջատ պահելը չի բխում *երեխայի* լավագույն շահերից[152]: Անչափահասների գործերով արդարադատության իրականացման վերաբերյալ Պեկինյան կանոնները սահմանում են. «Հարկավոր է ջանքեր գործադրել… Կանոններում տեղ գտած սկզբունքները երիտասարդ դատապարտյալների վրա տարածելու ուղղությամբ», սակայն Կանոններում նշված չէ, որ չափահասության հասած անչափահաս բանտարկյալներին կարող է թույլատրվել մնալ անչափահասների համար նախատեսված հիմնարկներում: Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ Հավանայի կանոնները ևս չեն խոսում ազատազրկումը կրելու ընթացքում չափահաս դարձած դատապարտյալների մասին:

Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններն անդրադառնում են այս պրակտիկային: 17-րդ կանոնն ընդհանուր առմամբ սահմանում է, որ «Չափահասության հասած երիտասարդ իրավախախտներն անհրաժեշտության դեպքում կարող են համարվել անչափահասներ և համապատասխան վերաբերմունքի արժանանալ»: «Երիտասարդ իրավախախտներ» տերմինը վերաբերում է 18-ից 21 տարեկան անձանց[153]: 59.3 կանոնը սահմանում է.

Չափահասության տարիքի հասած անչափահասները և երիտասարդները, որոնց նկատմամբ անհրաժեշտ է անչափահասների համար նախատեսված վերաբերմունք ապահովել, սովորաբար պետք է պահվեն անչափահասների համար նախատեսված հաստատություններում կամ երիտասարդների համար նախատեսված մասնագիտացված հաստատություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց սոցիալական վերաինտեգրմանն առավել բարեհաջող հնարավոր է հասնել չափահասների համար նախատեսված հաստատությունում:

Սկզբունքորեն, Կոնվենցայի 37-րդ կանոնով թույլատրված բացառությունը կարծեք թե կիրառվում է այն դեպքերում, երբ իրավախախտում կատարած՝ չափահասության հասած անձին անչափահասների համար նախատեսված հիմնարկում պահելը բխում է 18 տարին չլրացած այլ բանտարկյալների լավագույն շահերից: Սակայն 37-րդ հոդվածի նման

[152] Հոդված 37(գ) [շեղատառերով ընդգծումը՝ հեղինակի կողմից].
[153] Կանոն 21.2.

տառացի մեկնաբանությունը տեղին չէ: Մի կողմից, գիտակցությունը, որ կարելի է 18 տարին լրանալուց հետո մնալ անչափահասների համար նախատեսված հիմնարկում և խուսափել չափահասների համար նախատեսված բանտ փոխադրվելուց, կարող է բարենպաստ ազդեցություն ունենալ 18 տարին դեռևս չլրացած բանտարկյալների վերականգնման վրա: Ավելին, անչափահաս բանտարկյալին չափահասների համար նախատեսված բանտ փոխադրելը՝ 18 տարին լրանալու պատճառաբանությամբ, կարող է երեխայի լավագույն շահերին հակասող հանգամանք համարվել, եթե նոր միջավայրը կարող է ձախողել անչափահասների համար նախատեսված հիմնարկում գտնվելու ժամանակ արձանագրված դրական փոփոխությունները՝ կապված անչափահասի վարքագծի հետ:

Փորձը ցույց է տալիս, որ ավագ տարիքի անչափահաս բանտարկյալները հաճախ հանցավոր մշակույթ են քարոզում անչափահասների համար նախատեսված բանտերում և շահագործում են իրենցից կրտսեր բանտարկյալներին: Ամենայն խստությամբ կիրառելու դեպքում այն կանոնը, որ բանտարկյալներն անչափահասների բանտում 18 տարին լրանալուց հետո կարող են մնալ միայն դրական վարքագիծ դրսևորելու դեպքում, թերևս կարող է պաշտպանել ավելի փոքրահասակ անչափահասների լավագույն շահերը: Այդուհանդերձ, լավագույն լուծումը կարող է լինել 18-ից 21 տարեկան բանտարկյալների համար հատուկ հիմնարկ նախատեսելը: Դա ոչ միայն համահունչ կլինի Եվրոպական կանոններին՝ 18 տարին լրացած բանտարկյալների առումով, այլև օգտակար կլինի նրանց համար, ովքեր հանցանքը կատարել են երիտասարդ տարիքում:

5. Հոդված 76

Քրեակատարողական օրենսգրքի՝ սննդի և ջրի վերաբերյալ 76-րդ հոդվածի երրորդ մասը սահմանում է. «Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով, որի չափաբաժինները սահմանում է …»: Նույն հոդվածի երկրորդ մասը, որը վերաբերում է բոլոր բանտարկյալներին, արգելում է սննդի քանակի կամ որակի նվազեցումը՝ որպես տույժի միջոց: Չորրորդ մասը, որը ևս վերաբերում է բոլոր բանտարկյալներին, սահմանում է. «Դատապարտյալը պետք է ապահովված լինի խմելու ջրով»:

Հավանայի կանոնները պարունակում են սննդի և ջրի վերաբերյալ հետևյալ հոդվածը.

Ցանկացած բանտ պետք է ապահովի, որ յուրաքանչյուր անչափահաս սնունդ ընդունելու նորմալ ժամերին ստանա պատշաճ պատրաստված և մատուցված, դիետայի, հիգիենայի և առողջության ստանդարտներին, իսկ հնարավորության դեպքում՝ նաև կրոնական և մշակութային պահանջներին համապատասխանող սնունդ: Մաքուր ջուրն անչափահասներին պետք է հասանելի լինի ցանկացած ժամանակ[154]:

Հավանայի կանոնների թիվ 67 կանոնը և Մանդելայի կանոնների թիվ 43.1(դ) կանոնն արգելում են սննդակարգի կրճատումը՝ որպես կարգապահական միջոց:

Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սննդի և ջրի մասով սահմանում են հետևյալը.

68.1. Անչափահասները պետք է ապահովվեն սննդարար կերակրով՝ հաշվի առնելով նրանց տարիքը, առողջական և ֆիզիկական վիճակը, կրոնը, մշակույթը և տվյալ հաստատությունում իրականացվող միջոցառումները:

68.2. Սնունդը պետք է պատրաստվի և մատուցվի հիգիենիկ պայմաններում՝ օրական երեք անգամ՝ ողջամիտ ընդմիջումներով:

68.3. Խմելու ջուրը պետք է ցանկացած ժամանակ հասանելի լինի անչափահասներին:

[154] Կանոն թիվ 37.

Օրենսգրքում արտացոլված մոտեցումը տարբերվում է միջազգային ստանդարտներից, որոնք առաջին հերթին ուշադրություն են դարձնում մատուցման պահին սննդի որակին, ոչ թե քանակին: Միջազգային ստանդարտների հիմքում դրված մոտեցումն առավել պատշաճ է թվում, թեև Օրենսգրքի 76.3 հոդվածը համահունչ է միջազգային ստանդարտների ոգուն: Որպես տույժի միջոց տրամադրվող սննդի պակասեցումն արգելելը միանգամայն համապատասխանում է ՄԱԿ-ի ստանդարտներին: Ցանկալի կլիներ սահմանել ցանկացած ժամանակ ջրից օգտվելու իրավունքը[155]:

6. Հոդված 80

80-րդ հոդվածը վերաբերում է բանտարկյալներին կարճատև արձակումներ թույլատրելուն: Առավել առարկայական դրույթները հետևյալն են.

1. Դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով: Հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը երեխա ունեցող դատապարտյալին կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով:

2. Կարճաժամկետ մեկնում տրամադրվում է մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երեք օրը: Սոցիալական վերականգնման նպատակով բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել մինչև մեկ ամիս տևողությամբ… Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է տարվա ընթացքում երկու անգամից ոչ ավելի:

3. … անչափահաս դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է միայն ազգականի կամ այլ անձի ուղեկցությամբ:

Հավանայի կանոններն ընդհանուր գծերով սահմանում է. «Անչափահասներին պետք է թույլատրվի … տուն կամ ընտանիքին այցելելու համար դուրս գալ բանտից…»[156]: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են.

Նորմալ ռեժիմի պայմաններում անչափահասներին պետք է պարբերաբար որոշակի տևողությամբ արձակումներ տրամադրվեն՝ ուղեկցմամբ կամ առանց դրա: Բացի այդ, անչափահասները պետք է հնարավորություն ունենան լքելու հաստատությունը՝ մարդասիրական նկատառումներից ելնելով[157]:

Մանդելայի կանոնները սահմանում են. «Եթե հանգամանքները թույլ են տալիս, բանտարկյալին հարկավոր է ուղեկցությամբ կամ առանց ուղեկցության թույլատրվի այցելել ծանր հիվանդ մերձավոր ազգականին կամ նշանակալի այլ անձի կամ մասնակցել մերձավոր ազգականի հուղարկավորությանը…»[158]: Կանոններով նաև խորհուրդ է տրվում քայլեր ձեռնարկել բանտարկյալներին հասարակություն վերադառնալուն պատրաստելու

[155] Մանդելայի կանոնների թիվ 22.2 կանոնը ևս ճանաչում է ցանկացած պահի ջրից օգտվելու՝ բոլոր բանտարկյալների իրավունքը:
[156] Կանոն 59.
[157] Կանոն 86.1.
[158] Կանոն 70.

ուղղությամբ, այդ թվում՝ հսկողության ներքո կարճատև արձակումները, եթե անհրաժեշտ է[159]:

Օրենսգրքի 80-րդ հոդվածը թերևս համապատասխանում է արձակումների վերաբերյալ միազգային ստանդարտներին:

7. Հոդված 90

Քրեակատարողական օրենսգրքի՝ մասնագիտական ուսուցման վերաբերյալ 90-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Նախնական մասնագիտական կրթությունն անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է աշխատանքային օրվա տևողության սահմաններում»:

Հավանայի կանոնները սահմանում են, որ «Ցանկացած անչափահաս պետք է իրավունք ունենա անցնելու մասնագիտական ուսուցում այնպիսի մասնագիտությունների գծով, որոնք նրան հետագայում կօգնեն աշխատանք գտնել»[160]: Դրանք նաև սահմանում են.

Որպես համայնք վերադառնալուն պես հարմար աշխատանք գտնելու նպատակով իրականացվող մասնագիտական ուսուցման լրացում՝ անչափահասները հնարավորության սահմաններում պետք է կարողանան կատարել վարձատրվող աշխատանք, և հնարավորության դեպքում՝ տեղի համայնքում: Աշխատանքի բնույթը պետք է լինի այնպիսին, որ անչափահասն անցնի պատշաճ վերապատրաստում, որն ազատվելուց հետո օգտակար կլինի նրա համար: Բանտում առաջարկվող աշխատանքի կազմակերպումը և մեթոդները պետք է հնարավորինս նման լինեն համայնքում նույնանման աշխատանքի պարագայում ենթադրվող մեթոդներին, որպեսզի անչափահասները պատրաստվեն նորմալ աշխատանքային գործունեության պայմաններին[161]:

Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները ևս, մասնագիտական ուսուցումն ընդունում են որպես իրավախախտում կատարած անչափահասների համար կազմակերպվող միջոցառումների էական մաս[162]: Ըստ կանոնների, սկզբունքորեն, մասնագիտական ուսուցումը պետք է կազմակերպվի ուղղիչ հիմնարկից դուրս, կամ մասնագիտական ուսուցման՝ ուղղիչ համակարգի մաս չկազմող կազմակերպության հովանու ներքո[163]: Ավելին, մասնագիտական ուսուցումը պետք է ոչ թե առանց ընտրության պարտադրվի բոլոր անչափահաս բանտարկյալներին, այլ պետք է կազմակերպվի որպես համապարփակ անձնական պլանի մաս, որում հաշվի կառնվեն բանտարկյալի կարողությունները, կարիքներն ու ցանկությունները[164]:

Իրավախախտում կատարած անչափահասների համար մասնագիտական ուսուցում կազմակերպելու սահմանումն Օրենսգրքի դրական կողմերից է, սակայն հարկավոր է քննարկել Օրենսգիրքը փոփոխելու հարցը՝ միջազգային որոշ կամ բոլոր ստանդարտները ներառելու նպատակով, ինչպիսիք են՝ մասնագիտական ուսուցումն աշխատանքի հետ զուգադրելու ուղղությամբ ջանքեր գործադրելը, մասնագիտական ուսուցման կազմակերպումը և անչափահասների բանտում կազմակերպվող մասնագիտական ուսուցման նկատմամբ վերահսկողությունն անկախ կազմակերպությանն հանձնարարելը, մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցությունն ուղղման անհատական պլանների մշակմանը համապատասխանեցնելը:

---

[159] Կանոն 87.
[160] Կանոն 42.
[161] Կանոն 45.
[162] 77-78.5 կանոններ.
[163] 78.2-78.3 կանոններ.
[164] 79.1-79.4 կանոններ.

8. 95-րդ և 97-րդ կանոններ

Քրեակատարողական օրենսգրքի՝ բանտարկյալների նկատմամբ կիրառվող կարգապահական միջոցների վերաբերյալ 95-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է.պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3)պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով:

Կարգապահական ընթացակարգերը կարգավորված են 97-րդ հոդվածով, որը վերաբերում է թե՛ անչափահաս, և թե՛ չափահաս բանտարկյալներին: Այն, մասնավորապես, սահմանում է.

1. Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցները կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը՝ նախքան խախտումը կատարելը: Կիրառվող տույժը պետք է համապատասխանի կատարած խախտման ծանրությանը և բնույթին: Տույժը կիրառվում է բացառապես խախտումը կատարած անձի նկատմամբ այն հայտնաբերելուց հետո ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, և, որպես կանոն, կատարվում է անհապաղ: Մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ:

2.Տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ:

Պատժախուցը խցի տեսակ է, որտեղ բանտարկյալը չի շփվում այլ բանտարկյալների հետ: Միջազգային ստանդարտներով դա կոչվում է «տեղավորել մենախցում» և այն արգելվում է կիրառել անչափահաս բանտարկյալներին պատժելու նպատակով[165]: Անկասկած, անչափահաս բանտարկյալներին մենախցում տեղավորելը համարվում է դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք[166]: Օրենսգիրքը հարկավոր է փոփոխել՝ անչափահաս բանտարկյալների նկատմամբ որպես տույժի միջոց մենախցում տեղավորելու կիրառումը բացառելու, ինչպես նաև, նկատողություններից բացի, տույժի այլ տեսակ կամ տեսակներ սահմանելու նպատակով: Անչափահաս բանտարկյալների նկատմամբ կիրառելն արգելված այլ միջոցներից են՝ սննդի կրճատումը, ընտանեկան տեսակցությունների, վարժանքների արգելումը և հարկադիր աշխատանքը[167]:

Միջազգային ստանդարտները ևս կանոնակարգում են կարգապահական վարույթների ժամանակ կիրառվող ընթացակարգերը: Միջազգային այդ կանոնները կարող են ամփոփվել հետևյալ կերպ.

- Կանոնակարգերը պետք է հստակ սահմանեն կարգապահական խախտում համարվող վարքագիծը, կիրառվելիք կարգապահական տույժերի տեսակները և տևողությունը, նման տույժեր կիրառելու իրավասություն ունեցող մարմինը: Որևէ

---

[165] Հավանայի կանոն թիվ 67. Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 95.3.Մանդելայի կանոն թիվ 45.2 (Մանդելայի թիվ 44 կանոնը մենախցում պահելը սահմանում է հետևյալ կերպ. «առանց կարևոր մարդկային շփումների օրվա ընթացքում 22 ժամ կամ ավելի փակի տակ պահվելը»).

[166] Հավանայի կանոն թիվ 67.

[167] Հավանայի կանոն թիվ 67. Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, 95.6 և 97 կանոններ.

անչափահաս չպետք է ենթարկվի կարգապահական տույժի այլ կերպ, քան գործող օրենքներին և կանոնակարգերին համապատասխան[168].

- Կարգապահական խախտում պետք է համարվի միայն այն վարքագիծը, որը սպառնում է կարգուկանոնին, ապահովությանը կամ անվտանգությանը[169].

- Կարգապահական ընթացակարգերը պետք է վերջին միջոց համարվեն, իսկ կարգապահական վարույթի և տույժերի փոխարեն նախապատվությունն անհրաժեշտ է տալ կոնֆլիկտների վերականգնողական լուծմանը և կրթական միջոցառումներին[170].

- Ֆորմալ կարգապահական ընթացակարգեր կիրառելիս բոլոր բանտարկյալներին հարկավոր է լիարժեք ընկալելի ձևով տեղեկացնել վերագրվող արարքի մասին և տրամադրել պաշտպանությունը կազմակերպելու հնարավորություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան օժանդակությամբ[171]: Հարկավոր է մանրազնին ուսումնասիրել փաստերն ու հանգամանքները և անհապաղ որոշում կայացնել[172]: Կարգապահական տույժերը պետք է ընտրվեն՝ հնարավորինս հաշվի առնելով դրանց կրթական ազդեցությունը: Դրանք չպետք է լինեն ավելի ծանր, քան բխում է խախտման լրջությունից[173]: Հարկավոր է վարել լիարժեք արձանագրություններ, իսկ բանտարկյալը պետք է իրավունք ունենա ցանկացած տույժ բողոքարկելու վերադաս մարմնին[174]:

Օրենսգրքի 97-րդ հոդվածը համապատասխանում է միջազգային որոշ ստանդարտների, ինչպիսիք են՝ խմբային պատիժների արգելումը, համարժեքության սկզբունքը, կարգապահական տույժի հետ կապված հարցերն անհապաղ քննելը: Ցանկալի կլիներ փոփոխել Օրենսգիրքը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին, հատկապես նրանց, որոնք վերաբերում են անչափահաս բանտարկյալների նկատմամբ կարգապահական ընթացակարգեր կիրառելուն՝ ընդունելով վերը թվարկված այլ կարևոր սկզբունքները ևս:

9. Հոդված 102

Օրենսգրքի 99-րդ հոդվածով ճանաչվում է ուղղիչ հիմնարկների հինգ տեսակ. բաց, կիսաբաց, կիսափակ, փակ և բուժական: Կա անչափահասների համար նախատեսված միայն մեկ բանտ, սակայն այն ունի բաց, կիսաբաց, կիսափակ և փակ գոտիներ, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայր[175]: Կախված, թե ինչ տեսակի հիմնարկում է տեղավորվում բանտարկյալը, դրանով է պայմանավորված նաև տվյալ բանտարկյալի խցում կամ հանրակացարանում պահվող բանտարկյալների թիվը, օրվա ընթացքում բանտից դուրս անցկացնելու թույլատրելի ժամանակահատվածը[176]:

Դատապարտված բանտարկյալի համար ուղղիչ հիմնարկի տեսակի ընտրությունը կախված է երեք գործոններից. հանցագործությունը կատարվել է դիտավորությամբ, թե՝ անզգուշությամբ, դատապարտյալն ունի՞ արդյոք նախկին դատվածություններ, որքա՞ն է պատժի տևողությունը: Համաձայն 100-րդ հոդվածի երկրորդ մասի, անզգուշությամբ կատարած հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման

---

[168] Հավանայի թիվ 68 և 70 կանոններ.

[169] Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 94.2.

[170] Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 94.1.

[171] Հավանայի կանոն թիվ 70. Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 94.4.

[172] Հավանայի կանոն թիվ 69.

[173] Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոններ, կանոն թիվ 95.1.

[174] Հավանայի կանոն թիվ 70.

[175] Արդարադատության նախարարի 2012թ. փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրաման.

[176] 103-106 հոդվածներ.

դատապարտվելու դեպքում դատապարտյալները տեղավորվում են բաց ուղղիչ հիմնարկում. դիտավորյալ ոչ մեծ, միջին ծանրության կամ ծանր հանցագործության համար առաջին անգամ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտվելու դեպքում դատապարտյալները տեղավորվում են կիսաբաց ուղղիչ հիմնարկում. առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց պակաս ժամկետով առաջին անգամ դատապարտվելու կամ ռեցիդիվի կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում դատապարտյալները տեղավորվում են կիսափակ ուղղիչ հիմնարկում. առանձնապես ծանր հանցագործության համար 10 տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտվելու, ինչպես նաև առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում դատապարտյալները տեղավորվում են փակ ուղղիչ հիմնարկում[177]: Այս հոդվածը միատեսակ կիրառվում է անչափահասների և չափահասների նկատմամբ, թեև անչափահասները որևէ հանցագործության համար չեն կարող դատապարտվել 10 տարի ժամկետով ազատազրկման[178]:

Քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածը կանոնակարգում է լավ կամ վատ վարքագծից ելնելով՝ բանտարկյալներին մեկ ուղղիչ հիմնարկից մեկ այլ տեսակի ուղղիչ հիմնարկ փոխադրելու հարցը: Նվազ խստության հիմնարկ փոխադրելիս փոխադրում կարող է տեղի ունենալ դեպի մեկուսացվածության միայն մեկ աստիճանով տարբերվող հիմնարկ (օրինակ՝ փակից կիսափակ, կամ կիսաբացից՝ բաց)՝ պատժի որոշակի ժամանակահատվածը կրելուց հետո: Կիսաբաց հիմնարկից բաց հիմնարկ, կամ կիսափակից կիսաբաց հիմնարկ փոխադրումների իրավունք ստանալու համար անչափահասի կողմից պատժի կրման պահանջվող ժամանակահատվածն ավելի ցածր է, քանի չափահասների պարագայում[179]: Անչափահասները չեն կարող վատ վարքագծի պատճառով առավել խիստ հիմնարկ փոխադրվել[180]:

Միջազգային ստանդարտներով ընդունված է, որ բանտային համակարգում պետք է լինեն անվտանգության տարբեր աստիճաններ ունեցող բանտեր, քանի որ «ցանկալի է ունենալ անվտանգության տարբեր աստիճաններ՝ կախված տարբեր խմբերի կարիքներից»[181]: Բանտարկյալներին տարբեր խմբերի բաժանելու և նրանց տարբեր բանտերում տեղավորելու առաջնային պատճառները, թերևս, այլ անձանց վրա բացասական ազդեցության առումով ռիսկային բանտարկյալներին առանձնացնելն է և բանտարկյալներին այնպիսի խմբերի բաժանելը, որ հնարավորինս նպաստավոր պայմաններ լինեն վերականգնման համար[182]: Ավանդաբար, բանտարկյալներին նվազ մեկուսացվածության բանտ փոխադրելը կիրառվել է որպես դրական վարքագծի խրախուսման և վերականգնումը խթանելու եղանակ: Մանդելայի կանոններով խորհուրդ է տրվում յուրաքանչյուր բանտում սահմանել դրական վարքագիծը խրախուսելու համակարգ, սակայն մեկ բանտից մյուսը փոխադրելը չհամարել որպես խրախուսման միջոց[183]:

Հավանայի կանոնների թիվ 28 կանոնը սահմանում է. «Ազատությունից զրկված անչափահասների տարբեր խմբերին միմյանցից տարանջատելու սկզբունքային չափանիշ պետք է հանդիսանա տվյալ անհատին առավել համապատասխան խնամքի տրամադրումը և նրա ֆիզիկական, հոգեկան և բարոյական ապահովությունը և

---

[177] Հոդված 100(2).
[178] Հոդված 90.
[179] 102.1(1)(բ)-(դ) և 102.1(2)(ա)-(գ) հոդվածներ.
[180] Հոդված 102.2.
[181] Մանդելայի կանոն թիվ 89.1.
[182] Մանդելայի կանոն թիվ 93.
[183] Մանդելայի կանոն թիվ 95.

բարեկեցությունը»: Իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները սահմանում են.

Անչափահասների տարբեր խմբերին հաստատություններում տեղավորելիս պետք է հատկապես առաջնորդվել նրանց խնամքի այնպիսի տեսակ տրամադրելու անհրաժեշտությամբ, որը լավագույնս համապատասխանում է նրանց կարիքներին և ապահովում է նրանց ֆիզիկական ու հոգեկան անվնասությունը և բարօրությունը[184]:

Դրանցով նաև սահմանվում է, որ անչափահասները հաստատություններում պետք է տեղավորվեն «նրանց անվնասությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն մեկուսացվածության պայմաններում»:

Այս միջազգային ստանդարտները նշում են, որ հանցագործության բնույթը, նախկին դատվածությունը և պատժի տնողությունն ուղիղ առնչություն չունեն անչափահաս բանտարկյալին այս կամ այն տեսակի հիմնարկում տեղավորելու որոշմանը: Դրանք ընդամենը անուղղակի առնչություն ունեն, այն էլ միայն այնքանով, որ դրանք հուշում են, թե անվտանգության ինչ մակարդակ է հարկավոր՝ փախուստը կանխելու համար, կամ ինչ միջավայր՝ վերականգնումը լավագույնս ապահովելու համար: Հետևաբար, խորհուրդ է տրվում 102-րդ հոդվածը չկիրառել անչափահաս բանտարկյալների վրա, ինչպես նաև ավելացնել հոդված, որով կսահմանվի, որ դատապարտված անչափահասի համար հիմնարկի ռեժիմը որոշելու չափանիշները պետք է լինեն վերականգնման համար ամենաբարենպաստ միջավայրը և փախուստի դիմելու ռիսկը: Նույն չափանիշները պետք է Օրենսգրքով սահմանվեն անչափահաս բանտարկյալներին մեկ ռեժիմից մյուսը փոխադրելու դեպքում:

10. Հոդված 122

122-րդ հոդվածը վերաբերում է բանտից ազատված բանտարկյալներին ցուցաբերվող օժանդակությանը: Առաջին մասը, որը վերաբերում է թե՛ անչափահասներին, և թե՛ չափահասներին, սահմանում է, որ ուղղիչ հիմնարկը պետք է հոգա ազատվող բանտարկյալի տունդարձի հետ կապված ծախսերը, «ինչպես նաև կարող է» միանվագ դրամական օժանդակություն ցուցաբերել: Երկրորդ մասը հավելում է, որ եթե ազատվող բանտարկյալն անչափահաս է, ապա բանտային վարչակազմը «հայտնում է նրա ազգականներին կամ այլ անձանց, իսկ այդպիսիք չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցուցաբերում է ուղղիչ հիմնարկի վարչակազմը»: Երրորդ մասը հավելում է, որ ազատված անչափահասը տուն վերադառնալիս պետք է ուղեկցվի ազգականի կամ ուղղիչ հիմնարկի ծառայողի կողմից:

Միջազգային ստանդարտները լիովին ընդունում են ազատվելուց հետո օժանդակության կարևորությունը, որը կարող է խիստ անհրաժեշտ լինել կրկնահանցավորության կանխարգելման գործում: Հավանայի կանոնները սահմանում են.

79. Բոլոր անչափահասները պետք է օգտվեն ազատվելուց հետո իրենց հասարակություն, ընտանիք վերադարձնելու և կրթության կամ աշխատանքի վերադառնալու համար նախատեսված հնարավորություններից: Այդ նպատակով պետք է սահմանվեն համապատասխան ընթացակարգեր, այդ թվում՝ վաղաժամկետ ազատման կամ հատուկ դասընթացների ձևով:

80. Իրավասու մարմինները պետք է տրամադրեն անչափահասներին հասարակությունում վերականգնելու և նման անչափահասների նկատմամբ կանխակալ կարծիքը նվազագույնի հասցնելու ծառայություններ կամ ապահովեն այդ ծառայությունների տրամադրումը: Այդ ծառայությունները պետք է հնարավորության սահմաններում ապահովեն, որպեսզի անչափահասին տրամադրվեն պատշաճ կացարան,

[184] Կանոն 54.

աշխատանք, հագուստ և ազատվելուց հետո բարեհաջող վերաինտեգրվելու համար անհրաժեշտ այլ միջոցներ: Հարկավոր է խորհրդակցել նման ծառայություններ մատուցող գործակալությունների հետ և վերջիններիս թույլատրել բանտարկության ընթացքում շփվել անչափահասների հետ՝ համայնք վերադառնալու ճանապարհին նրանց աջակցելու նպատակով:

Նմանապես, իրավախախտում կատարած անչափահասների վերաբերյալ եվրոպական կանոնները նշում են, որ ազատվող անչափահասներից ցուցաբերվող օժանդակությունը պետք է ներառի.

- աջակցություն ընտանիք վերադառնալու կամ խնամատար ընտանիք որոնելու հարցերում և օգնություն՝ այլ սոցիալական կապեր հաստատելու հարցում,
- բնակության վայրի որոնումը,
- օժանդակությունը՝ կրթությունն ու վերապատրաստումը շարունակելու գործում,
- աշխատանքի որոնումը,
- նրանց համապատասխան սոցիալական և առողջապահական գերատեսչություններ ուղղորդելը,
- դրամական օժանդակություն ցուցաբերելը[185]:

Դրանցով նաև սահմանվում է, որ ուղղիչ հիմնարկների համար պատասխանատու մարմինները և ազատվող անչափահասների հսկողության ու օժանդակության համար պատասխանատու ծառայություններն ու գերատեսչությունները պետք է աշխատեն միասին, և, մասնավորապես, համայնքահեն ծառայություններին և կազմակերպություններին պետք է թույլատրվի այցելել ուղղիչ հիմնարկներում պահվող անչափահասներին՝ ազատման նախապատրաստվելու հարցում նրանց օգնելու նպատակով, իսկ նրանց վրա պետք է նման օժանդակություն ցուցաբերելու պարտավորություն դրվի[186]:

Օրենսգիրքը հարկավոր է փոփոխել ազատվող անչափահասներին ցուցաբերվող տեսակների հասկացությունն ընդլայնելու նպատակով՝ ի լրումն վերը հիշատակված ստանդարտների: Քանի որ անչափահասների բանտի վարչակազմից դժվար է ակնկալել, թե նրանք կմատուցեն ազատված անչափահասներին անհրաժեշտ ծառայությունները, Օրենսգիրքը պետք է փոփոխվի նաև այնպես, որ սահմանվեն համապատասխան այլ ծառայությունների կամ կազմակերպությունների պարտավորությունները, ինչպես նաև ճանաչվի ուղղիչ հիմնարկների համար պատասխանատու մարմինների և այլ ծառայությունների ու կազմակերպությունների՝ հատկապես ազատման նախապատրաստելու հարցերի շուրջ միասին աշխատելու պարտականությունը:

[185] Կանոն թիվ 102.1.

[186] Կանոն 102.2-102-3.

2.3 «Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) վավերացման դեպքում օրենսդրական և ընթացակարգային հարցերի համապատասխանեցումը միջազգային և Եվրոպական չափորոշիչներին

2016 թվականին իրականացված «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների զոհերով արդարադատության մատչելիության բարելավման*» ծրագրի շրջանակում ներգրավվել է փորձագետ, ում կողմից իրականացվել է վերոնշյալ կոնվեցիայի վերլուծություն.

Բաժին 1. Կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության նախադրյալները

Սույն վերլուծության նպատակն է պարզաբանել Կոնվենցիայի վավերացման դեպքում ՀՀ օրենսդրությունն և ընթացակարգային հարցերը միջազգային և Եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու հնարավորությունները, վերլուծել Կոնվենցիայով կարգավորման առարկային առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ առկա կարգավորումներն ու պարզաբանել հիմնախնդիրների առկայությունը:

Կոնվենցիան ստորագրության համար բացվել է 2007թ հոկտեմբերի 25-ից Լանզարոտեում (Իսպանիա) և ուժի մեջ է մտել 2010թ հուլիսի 1-ից: Այն նաև հայտնի է Լանցարոտեի կոնվենցիա անվամբ:

Կոնվենցիան ներկա պահի դրությամբ Եվրոպայի խորհրդի անդամ 47 պետությունից 42-ը վավերացրել են, իսկ ստորագրել ու դեռ չեն վավերացրել 5 պետություն՝ Հայաստանը, Մեծ Բրիտանիան, Նորվեգիան, Իռլանդիան ու Ադրբեջանը: Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիան ստորագրել է 2010թ. սեպտեմբերի 29-ին:

Կոնվենցիայի նպատակն է ապահովել համաձայնեցված գործողությունները Եվրոպայում և բոլոր երեխաների հավասար պաշտպանվածությունը՝ հաստատելով հստակ ընդհանուր չափորոշիչներ և սահմանումներ, որոնք կիրառելի են բոլոր եվրոպական երկրներում՝ մասնավորապես ներդաշնակեցնելով քրեական օրենսդրությունը և կիրառելով այլ համապատասխան միջոցներ:

Կոնվենցիայի դրույթները նպատակաուղղված են երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելմանը, սեռական հանցագործություններից տուժած երեխաների պաշտպանությանը և ոճրագործների դատական հետապնդմանը:

Կոնվենցիան էապես տարբերվում է Հայաստանի Հանրապետության կողմից մինչ այժմ կնքված մյուս համընդգրկուն և տարածաշրջանային միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից նրանով, որ երեխաների նկատմամբ տարատեսակ ոտնձգությունների համար սահմանում է քրեական պատասխանատվություն, ներառյալ այնպիսի ոտնձգությունների համար, որոնք իրականացվում են տանը կամ ընտանիքում՝ ուժի, ստիպելու կամ սպառնալիքի կիրառմամբ:

Կոնվենցիայում ներկայացված կանխարգելիչ միջոցառումներն ընդգրկում են աշխատանքի բերումով երեխաների հետ կանոնավոր շփում ունեցող անձանց հավաքագրումը, աշխատանքի ընդունումն ու ուսուցումը, երեխաների իրազեկումը ռիսկերի վերաբերյալ ու ինքնապաշտպանության դասավանդումը, ինչպես նաև

հանցագործների ու պոտենցիալ հանցագործների նկատմամբ հսկողության միջոցառումները:

Կոնվենցիան նաև նախատեսում է զոհերի աջակցության ծրագրեր, միջոցառումներ, որոնք ուղղված են աջակցելու, որ մարդիկ հայտնեն սեռական շահագործման կամ ոտնձգությունների վերաբերյալ կասկածների մասին, ինչպես նաև ստեղծելու երեխաների համար հեռախոսի ու ինտերնետի միջոցով օգնության գծեր:

Կոնվենցիան ապահովում է նաև, որ վարքագծի որոշ տեսակներ դիտարկվում են որպես քրեական հանցագործություններ, օրինակ, չափահաս տարիքի չհասած երեխաներին սեռական գործունեության, ինչպես նաև մանկական մարմնավաճառության ու պոռնոգրաֆիայի մեջ ընդգրկելը: Այս Կոնվենցիան նաև նախատեսում է քրեական պատասխանատվություն սեռական նպատակներով երեխաներին գայթակղելու («հոգատարություն») և «սեքս-տուրիզմի» համար:

Երեխաների ընդգրկմամբ սեքս-տուրիզմի դեմ պայքարելու համար Կոնվենցիան նախատեսում է մարդկանց հետապնդում որոշ հանցանքների համար, եթե նույնիսկ դրանք իրականացվել են արտասահմանում: Կոնվենցիան նաև ապահովում է դատաքննության ընթացքում երեխա-զոհերի պաշտպանություն, օրինակ՝ անձնական ու մասնավոր կյանքին վերաբերող դեպքերով:

Երեխաների սեռական շահագործումը, հատկապես մանկական պոռնոգրաֆիան և մարմնավաճառությունը, ինչպես նաև երեխաների նկատմամբ ցանկացած սեռական բռնություն, ներառյալ արտասահմանում կատարված գործողությունները, քայքայուն ազդեցություն են թողնում նրանց առողջության և հոգեբանական ու սոցիալական զարգացման վրա:

Երեխաների նկատմամբ սեռական շահագործումը և սեռական բռնությունը սպառնալից չափեր են ընդունել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում և հատկապես այն փաստը, որ թե՛ երեխաները, թե՛ հանցագործները լայնորեն օգտվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից (ՏՀՏ), ինչպես նաև այն, որ երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության կանխումը և պայքարը դրանց դեմ միջազգային համագործակցություն են պահանջում:

Սույն Կոնվենցիայի վավերացումը չի ազդի այն իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետության կողմից արդեն իսկ վավերացված Երեխայի իրավունքների պաշտպանության մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի և դրան կից Երեխաների առևտրի, մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին հավելյալ արձանագրության դրույթներից, և կոչված է ամրապնդելու տրամադրվող պաշտպանությունը, զարգացնելու և լրացնելու դրանց ստանդարտները:

Կոնվենցիայի վավերացումը չի ազդի այն իրավունքների ու պարտականությունների վրա, որոնք ծագում են այլ միջազգային փաստաթղթերից, որոնց անդամակցում է կամ կանդամակցի Հայաստանի Հանրապետությունը: Դրանք կարող են պարունակել դրույթներ սույն Կոնվենցիայով կարգավորվող խնդիրների վերաբերյալ և ապահովել ավելի բարձր մակարդակի պաշտպանություն և օգնություն սեռական շահագործման կամ սեռական բռնության զոհ դարձած երեխաներին:

Կոնվենցիայում ամրագրված մի շարք դրույթներ անմիջականորեն ամրագրված չեն ՀՀ Սահմանադրության մեջ: Կոնվենցիոն և սահմանադրական նորմերի միջև տարբերությունն ուղղված չէ ՀՀ իրավազորության ներքո գտնվող անձանց իրավունքների և ազատությունների նպատակային սահմանափակմանը:

Կոնվենցիայի վավերացումը ենթադրում է ողջամիտ հարցադրում. արդյոք երեխայի համար ապահովված են բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական

միջոցներ՝ պաշտպանելու երեխային սեռական շահագործումից եւ սեռական բռնությունից:

Որպես առաջնային խնդիր ընդգծելով երեխաների էական շահերի պաշտպանությունը՝ Կոնվենցիան ընդգրկում է հետևյալ հիմնական հարցերը՝

- կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցառումներ,
- աջակցություն տուժած երեխաներին և նրանց ընտանիքներին,
- ծրագրեր կամ միջոցառումներ երեխային սեռական բռնության ենթարկած հանցագործների համար,
- քրեական հանցագործություններ՝ ներառյալ մի քանի ամբողջությամբ նոր հանցագործություններ, ինչպես օրինակ՝ երեխայի նկատմամբ իբր հոգածության դրսևորումը,
- երեխայի նկատմամբ բարյացակամ ընթացակարգեր հետաքննության և դատական հետապնդման ժամանակ,
- տվյալների արձանագրում և պահպանում սեռական բնույթի հանցագործություններ կատարելու համար դատապարտված անձանց մասին,
- միջազգային համագործակցություն,
- մոնիտորինգի մեխանիզմ

Կոնվենցիայի վավերացումից հետո այս հարցերը պետք է օրենսդրական եւ ընթացակարգային փոփոխությունների միջոցով տեղայնացվեն, եթե դեռևս առկա չեն գործող օրենսդրության մեջ ու ընթացակարգերում:

Կոնվենցիան անդամ պետություններին առաջարկում է օրենսդրությամբ ամրագրել նյութական և ընթացակարգային օրենսդրությանն առնչվող որոշակի նորմեր: Հարկ է ընդգծել, որ այդ առաջարկների մի մասը համահունչ է և համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ ամրագրված երեխայի իրավունքների խախտումների կանխմանն ու պաշտպանությանը, մյուս մասը ՀՀ օրենսդրության մեջ ամրագրված է այլ խմբագրությամբ և ձևակերպումներով: Կոնվենցիայով առաջադրվող անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները շատ չեն, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը հիմնականում ընդգրկում է երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող նյութական և ընթացակարգային օրենսդրության կարգավորումներ:

Պետք է նշել, որ Կոնվենցիայով ամրագրված առանձին հասկացությունների բացատրություններն ու որոշ կարգավորումներ, ինչպես նաև ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման հիմքերը ՀՀ օրենսդրությամբ անմիջականորեն նախատեսված չեն: Այս պարագայում անհրաժեշտ է արդյոք կոնվենցիոն բոլոր առաջարկները ներառել ՀՀ օրենսդրության մեջ:

Նման հարցադրումը զրկվում է որևէ հիմքից, եթե ՀՀ ամբողջ օրենսդրական համակարգը և միջազգային պայմանագրային պարտավորությունները դիտվեն որպես փոխկապակցված մեկ միասնական իրավական համակարգ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Հետևաբար, Կոնվենցիայի վավերացումից հետո նույնիսկ ՀՀ օրենսդրության հետ հակասություններ առաջանալու պարագայում Կոնվենցիան գերակա ուժ ունի և անմիջականորեն կկիրառվեն նրա նորմերը:

Միանշանակ է, որ Կոնվենցիայի վավերացումն անհրաժեշտություն է սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու, կանխարգելման մեխանիզմներ ներդնելու և հանցագործությունների արդյունավետ քննություն

իրականացնելու համար: Կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Կոնվենցիայի դրույթների և Հայաստանի Հանրապետության օրենքների կամ այլ նորմատիվ իրավական ակտերի միջև հակասության դեպքում խնդիրը կարգավորվում է ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով:

Հայաստանի Հանրապետության նոր օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունելու կամ գործող օրենքներում կամ այլ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին դիտարկումները, օրենսդրական եւ ընթացակարգային հիմնախնդիրները կներկայացվեն ստորև:

Բաժին 2. Առկա օրենսդրական իրավակարգավորումների և ընթացակարգային բացերի և հիմնախնդիրների համառոտ նկարագիրը

1. Այս բաժնում ներկայացված են երեխաների իրավունքների պաշտպանության և խախտման կանխարգելման օրենսդրական իրավակարգավորումների և ընթացակարգերի բացերն ու հիմնախնդիրները, որոնց լուծումը շատ դեպքերում կանխարգելիչ ու պաշտպանիչ դեր կունենա հնարավոր սեռական շահագործման ու սեռական բռնության դեպքերում:

2. Հայաստանում վերջին տարիներին սոցիալական և մասնավորապես կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների պաշտպանության ոլորտներում էական բարեփոխումներ են տեղի ունենում: Բարեփոխումների վերջնանպատակը երեխայակենտրոն մոտեցումների վրա հիմնված ծառայությունների, ընթացակարգերի և օրենսդրության ներդրումն է սոցիալական պրակտիկայում, որպեսզի երեխաների պաշտ-պանության խնդիրների լուծումը հնարավոր լինի կազմակերպել նրանց լավագույն շահերի տեսանկյունից, ինչը նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների իրագործման վկայությունը կարող է դառնալ:

3. Համաձայն գործող օրենսդրության երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովում են՝

- Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը,
- խնամակալության և հոգաբարձության մարմինները,
- դատախազությունը, դատարանները,
- անչափահաների գործերով ՀՀ ոստիկանության բաժինները,
- ՀՀ օրենսդրությամբ լիազորված այլ հիմնարկություններ, որոնք իրենց գործունեության մեջ առաջնորդվում են երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքներով:

4. Կան երեխաներին և նրանց ընտանիքներին սատարող ավելի քան 236 հասարակական կազմակերպություններ, 23 հիմնադրամներ, 3 ասոցիացիաներ, եկեղեցիների կողմից 8 թեմերում մատուցվող 10 ծառայություններ:[187]

5. Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է երեխայի անձի անձեռնմխելիությունը, ապահովում նրա պաշտպանությունը շահագործման ցանկացած ձևից, ֆիզիկական և հոգեբանական բռնությունից, դաժան և անմարդկային վերաբերմունքից, սեռական բնույթի, ինչպես նաև այլ ոտնձգություններից: Այդ խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը,

[187] Երեխաներին եւ ընտանիքներին աջակցող սոցիալական ծառայությունների շտեմարան, Մ.Անտոնյան, Մ. Պետրոսյան, Ե. Հարությունյան, Ա. Սարգսյան, 2015, էջ 6, 326 էջ
http://www.osce.org/hy/yerevan/157271?download=true

հիմնվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա, ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքը և քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում այդ բնույթի հանցագործություններ և սահմանում է պատժի տեսակներ ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար:[188]

6. Կոնվենցիայի վավերացման գործընթացի տեսանկյունից կարևոր է դիտարկել կարգավորման առարկայի հիմնական հասկացությունների ամրագրման առկայությունը**:**

7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «*երեխայի լավագույն շահեր*» հասկացությունը: ՀՀ ընտանեկան օրենսգրքում սահմանված՝ «*երեխայի օրինական շահեր*» հասկացությունը համարժեք չէ ՄԱԿ-ի 1989թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված՝ «երեխայի լավագույն շահեր» հասկացությանը:

8. «*Երեխայի հանդեպ սեռական բռնություն*» հասկացությունը սահմանված է «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային N 51 որոշմամբ, ընդունված է՝ 04.12.2014:

9. «Երեխայի հանդեպ սեռական բռնություն» հասկացությունը շոշափվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում (Հոդված 4, ՀՕ-474-Ն, ընդունված է՝ 11.12.2002, ուժի մեջ է՝ 07.07.2003);

10. «*Սեռական շահագործում*» հասկացությունն ամրագրված չէ ՀՀ օրենսդրությամբ, սակայն այս հասկացությունը շոշափվում է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքում (Հոդված 4 ՀՕ-212-Ն, ընդունված է՝ 17.12.2014, ուժի մեջ է՝ 30.06.2015):

11. Լսված լինելու, իր կարծիքն արտահայտելու երեխայի իրավունքը ներառված է մի շարք օրենքներում, սակայն երեխաների տեսակետները նրանց վրա ազդող բոլոր գործընթացներում հաշվի չառնելու համար պատասխանատվություն սահմանված չէ:

12. Ծնողի, խնամակալի, հոգաբարձուի, խնամատար ծնողի, որդեգրողի պարտականությունները կատարելուց խուսափելու համար պատասխանատվության ենթարկելու կառուցակարգեր նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ:

13. Հաստատված են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, ըստ որոնց վերոհիշյալ հաստատությունները սահմանված կարգով ապահովում են երեխայի պաշտպանությունը հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, սեռական շահագործումից և այլասերումից, դաժան վերաբերմունքից, անուշադրությունից ու անարդարությունից, առողջությանը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: Պետք է նշել, սակայն, որ կիրառման մեխանիզմների բացակայության պատճառով դեռևս կան չլուծված խնդիրներ:

14. Այդուհանդերձ, ինչպես ընտանիքներում, այնպես էլ կրթական, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում կիրառվում են երեխայի հանդեպ բռնության տարբեր տիպեր: ՀՀ քրեական օրենսգիրքը (Գլուխ 20) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը (հոդված 178) նախատեսում են պատասխանատվության միջոցներ երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործությունների (իրավախախտումների) համար, սակայն սահմանված

[188] ՀՀ կառավարության 2012 թ. հունվարի 19-ի նիստի N 2 արձանագրային որոշում, Հավելված N 1, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտիր արձանագրության 12-րդ հոդվածի առաջին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացվող սկզբնական զեկույց

պատասխանատվության միջոցները համարժեք չեն կատարված արարքներին և անհրաժեշտ է երեխայի հանդեպ կատարված բռնության դեպքերում նախատեսել առավել խիստ պատժամիջոցներ:[189]

15. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունն ապահովում է երեխայի անվտանգությունը և երեխայի պաշտպանությունը՝ հոգեբանական և ֆիզիկական բռնությունից, այդ թվում՝ սեռական շահագործումից և այլասերումից, դաժան վերաբերմունքից, աշխատանքի շահագործումից, հանցագործություններից, անուշադրությունից և անարդարությունից, առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից: (Չափորոշիչ II):[190]

16. Սեռական շահագործման ու սեռական բռնության ենթարկված անչափահասների համար իրավունքների պաշտպանության մեխանիզմների հասանելիությունն ապահովված չէ օրենսդրությամբ:

17. Կոնվենցիայի իմաստով կանխարգելիչ ընթացակարգերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն: Հարկավոր է օրենսդրորեն ամրագրել դրանք՝ օժտելով անհրաժեշտ իրավասություններով:

18. Կանխարգելման ազգային մեխանիզմ կարելի է դիտարկել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը[191], որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է: Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային և մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն աջակցելը:[192]

19. Կանխարգելման մեխանիզմները սահմանված են միջազգային փաստաթղթերով, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Օրինակ, ՄԱԿ-ի անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող մարդկանց, հատկապես

---

[189] «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում N 51, ընդունված է՝ 04.12.2014 (Հավելված 1)

[190] Չափորոշիչները կիրառվում են ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 1324-Ն, ընդունված է՝ 05.08.2004, ուժի մեջ է՝ 23.10.2004

[191] «Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28- ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշում
N 1295-Ն, ընդունված է՝ 28.12.2012, ուժի մեջ է՝ 07.01.2013

[192] Նույն տեղում, Հավելված 1

կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունն (ուժի մեջ է՝ 25.12.2003) ամրագրել է, որ պետություններն ապահովում կամ կատարելագործում են իրավապահ, միգրացիոն և մարդկանց առևտրի կանխարգելման հարցերով մյուս համապատասխան մարմինների աշխատակիցների պատրաստվածությունը: Նշված պատրաստվածությունը պետք է կենտրոնացվի այդպիսի առևտրի կանխարգելման մեթոդների, դրանով զբաղվող անձանց քրեական հետապնդման և զոհերի իրավունքների պաշտպանության վրա, ներառյալ զոհերին այն անձանցից պաշտպանելը, որոնք զբաղվում են այդպիսի առևտրով: Պատրաստման ընթացքում պետք է նաև նկատի առնվի մարդու իրավունքների, երեխաների հիմնախնդիրների և գենդերային հիմնախնդիրների հաշվառման անհրաժեշտությունը. պատրաստումը պետք է նպաստի համագործակցությանը ոչ կառավարական կազմակերպությունների, այլ համապատասխան կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության այլ տարրերի հետ: (Հոդված 10)

20. Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների խախտման կանխարգելման և պաշտպանության առումով գործուն մեխանիզմ է Մարդու իրավունքների պաշտպանը: Աշխատակազմում նախատեսվում է ստեղծել երեխաների իրավունքների պաշտպանության բաժին այժմ գործող մեկ պատասխանատուի հաստիքի փոխարեն:

Բաժին 3. Առաջարկություններ (օրենսդրությունն ու իրավակիրառ պրակտիկան Կոնվենցիային համապատասխանեցնելու ուղղությամբ).

21. Ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ կանխարգելելու համար երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության բոլոր տեսակի դրսևորումները և պաշտպանելու համար երեխաներին: Մասնավորապես, իրավապահ մարմիններին դիմելու անչափահասների իրավունքները, ինչպես նաև անհապաղ, առանց ձգձգումների արձագանքելու և ընթացք տալու այդ մարմինների պարտականություններն ամրագրել օրենսդրությամբ:

22. Պաշտպանության միջոցների առումով օրենսդրական փոփոխությունների կարիք կա «Փաստաբանության մասին» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքներում: Համապատասխան փոփոխությունները պետք է հնարավորություն տան սեռական շահագործման կամ սեռական բռնության զոհին անվարան դիմելու Մարդու իրավունքների պաշտպանին և ՀՀ փաստաբանների պալատին (Հանրային պաշտպանի գրասենյակ)՝ խորհրդատվություն, իրավաբանական օգնություն կամ պաշտպանություն ակնկալելու իմաստով: Կարևոր է նաև ամրագրել այդ մարմինների կողմից գաղտնապահության սկզբունքն ու դրա խախտման հետեւանքով վրա հասնող պատասխանատվությունը:

23. Երեխաներին և ընտանիքներին աջակցող պետական սոցիալական ծառայությունների իրավասությունների վերանայում եւ վերախմբագրում՝ հաշվի առնելով Կոնվենցիայի դրույթներով պետությանն առաջադրված պարտավորությունների շրջանակը: Այդ ծառայությունների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ խտրական դրսևորումների բացառման շեշտադրմամբ:

24. Խնամակալության ու հոգաբարձության մարմինների իրավասությունների եւ պարտականությունների վերանայում և վերախմբագրում՝ հիմք ընդունելով Կոնվենցիայի վավերացումից հետո կանխարգելման, բացահայտման ու պաշտպանության միջոցառումների կարևորությունը տեղական մակարդակներում:

25. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների լիցենզավորման կամ հավատարմագրման համար անհրաժեշտ օրենսդրության մշակում և ընդունում:

26. ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել «մանկական մարմնավաճառություն», «մանկական պոռնոգրաֆիա» հասկացությունը:

27. ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն սահմանել հետևյալ միտումնավոր գործողությունների համար. մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը, երեխային հարկադրելը զբաղվելու մարմնավաճառությամբ կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելը, մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելը: ՀՀ քրեական օրենսգիրքը լիարժեք չի սահմանում այս արարքների համար պատասխանատվություն:

28. ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն սահմանել ապօրինի կերպով հետևյալ միտումնավոր գործողությունների համար. մանկական պոռնոգրաֆիայի արտադրությունը, մանկական պոռնոգրաֆիայի առաջարկը կամ տրամադրումը, մանկական պոռնոգրաֆիայի տարածումը կամ փոխանցումը, մանկական պոռնոգրաֆիայի ձեռքբերումն իր կամ մեկ այլ անձի համար, մանկական պոռնոգրաֆիա ունենալը, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով միտումնավոր կերպով մանկական պոռնոգրաֆիա մուտք ստանալը:

29. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսել քրեական պատասխանատվություն հետևյալ միտումնավոր գործողությունների համար. պոռնոգրաֆիկ ներկայացումների մեջ երեխային ներգրավելը կամ նրան դրդելը մասնակցել նման ներկայացումներին, երեխային հարկադրելը մասնակցել պոռնոգրաֆիկ ներկայացումներին կամ դրանից օգուտ քաղելը կամ այդ նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը, երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ ներկայացումներին գիտակցաբար ներկայանալը:

30. ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել քրեական պատասխանատվություն, սահմանել միտումնավոր կերպով և սեռական նպատակներով՝ երեխային դրդելու ներկա գտնվել սեռական բռնության կամ սեռական բնույթի գործողության դրսևորումներին, անգամ եթե երեխան չի մասնակցում դրանցում:

31. ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրել քրեական պատասխանատվություն միտումնավոր կերպով չափահաս անձի կողմից երեխային տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով հանդիպման առաջարկության համար, նրա նկատմամբ սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետին և 20-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետին համապատասխան սահմանված որևէ հանցագործություն կատարելու նպատակով, երբ նման առաջարկությանը հետևել են գործնական քայլեր հանդիպումն իրականացնելու համար:

32. Քրեական օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարել՝ վերանայելով չափահասների պատասխանատվությունը երեխաների նկատմամբ՝ դաժան վերաբերմունքի և նվաստացման համար:

33. Քրեական օրենսգրքում կատարել լրացում՝ սահմանելով պատասխանատվություն սեռական բնույթի բռնի գործողությունների համար, եթե չարաշահվում է երեխայի սահմանափակ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների կամ կախվածության մեջ գտնվելու հանգամանքը:

34. Օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել համացանցային տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով սեռական շահագործման եւ սեռական բռնության, ինչպես նաեւ մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ նյութերի ներակայացման, տարածման ու առաքման դեպքերում կայքերի մուտքի կասեցման կամ արգելման հիմքերը, ինչպես նաև պատասխանատվություն սահմանել այդ դեպքերում:

Անհրաժեշտ է ոլորտը կարգավորել համացանցով հրապարակումների կանոնակարգման և համացանցում կատարված խախտումների դեմ պայքարի վերաբերյալ առանձին օրենքով:

Այս առումով Եվրոպական երկրների օրենսդրություններով նախատեսված մոտեցումները բազմազան են՝ սկսած ինտերնետի մուտքի անհատական կասեցումից մինչև կոնկրետ կայքի արգելափակում, այդ թվում՝ նաև հակաօրինական բովանդակության վերացում: Խնդրին անդրադարձել է նաեւ ՄԻԵԴ-ը (*Ահմետ Յլդրիմ ընդդեմ Թուրքիայի, վճիռը՝ 18.12.2012թ.*) ազատ խոսքի արտահայտման համատեքստում վճռում համեմատական իրավունքի տեսանկյունից վերլուծելով Եվրոպայի խորհրդի անդամ երկրների օրենսդրական եւ իրավակիրառ պրակտիկայի մոտեցումները: Վճռում ՄԻԵԴ-ը մասնավորապես նշել է.

33. …..Սկզբունքորեն, անչափահասների իրավունքների պաշտպանությունը և նրանց սեռական շահագործման դեմ պայքարը հանդիսանում են այն հիմքը, որի հիման վրա եվրոպական երկրների մեծամասնությունն իրականացնում է համապատասխան միջոցառումներ համացանցային կոնկրետ կայքերի մուտքը սահմանափակելու համար (Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Շվեյցարիա և Ֆրանսիա): Ինչ վերաբերում է ընդհանուր առմամբ նույն հանցագործությունների տեսակին, մուտքի սահմանափակման միջոցառումները տարբեր են և պակաս խիստ վեց երկրներում (Ավստրիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Իտալիա, Լիտվա, Նիդերլանդներ):

34. ….. համացանց մուտքի արգելափակման վերաբերյալ չկան ընդհանուր օրենսդրական դրույթներ Ավստրիայում, Գերմանիայում, Լեհաստանում և Չեխիայում: Արգելափակման վերաբերյալ ընդհանուր դրույթների բացակայության պարագայում, հինգ երկրներ ունեն հատուկ օրենդսրական դրույթներ, որոնք նախատեսում են արգելափակումներ խախտումների որոշ տեսակների դեպքում (Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն, Ֆինլանդիա, Նիդերլանդներ, Մեծ Բրիտանիա): Այս խախտումները ներառում են սկսած մանկական պոռնոգրաֆիայի դեպքերից մինչև ատելության կոչեր, ահաբեկչության հրահրում կամ զրպարտում:

35. Ռուսաստանում, եթե նույնիսկ համացանց մուտքը հնարավոր չէ արգելել ընդհանուր մակարդակով, դաշնային օրենքները կարող են թույլատրել մուտքի սահմանափակումներ հատուկ պատճառներով՝ ընդհուպ սահմանադրական կարգի, բարոյականության, առողջության, երրորդ անձանց օրինական շահերի ու իրավունքների պաշտպանության կամ ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման նպատակով (դաշնային օրենք no 149-FZ).

36. Իսկ այն երկրների դեպքում, որոնք չունեն կայքերի փակման և/կամ մուտքի արգելափակման վերաբերյալ օրենսդրական, ընդհանուր կամ հատուկ դաշտ, չի բացառվում, որ արգելափակման միջոցառումների վերաբերյալ որոշումներ կայացվի դատավորի կողմից կամ կիրառվի կամայական կերպով»:

Այս պարագայում միանշանակ է, որ որոշակի կայքերի արգելափակումը կամ մուտքի սահմանափակումը հարկավոր է առանձին օրենքով կարգավորել, որը կհամապատասխանի իրավունքների հավասարակշռման ու չխախտման սկզբունքին, ՀՀ սահմանադրության պահանջներին, ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերին (օրինակ՝ Կիբերհանցագործությունների վերաբերյալ կոնվենցիան)[193] ու ՄԻԵԴ

[193] Կիբերհանցագործությունների վերաբերյալ կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 12/10/2006թ. եւ ուժի մեջ է մտել 01/02/2007թ., մշակվել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, Կանադայի, Ճապոնիայի, Հարավաֆրիկյան հանրապետության և ԱՄՆ-ի կողմի: Այն ուղղված է կիբերհանցագործությունների տարբեր տեսակներին՝ գաղտնիության խախտում, տվյալների և տեղեկատվական համակարգերի հասանելիություն և անձեռնմխելիություն, համակարգչային խեղումներ և կեղծիքներ, խախտումներ, որոնք վերաբերում են տեղեկատվական բովանդակությանը և մասնավորապես

պրակտիկային, այլապես միջամտությունը կարող է դիտարկվել 10-րդ հոդվածի խախտում, եթե այն «նախատեսված չէ օրենքով», որը հետապնդում է մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակներ՝ համահունչ 10-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, և «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» այս կամ այն նպատակներին հասնելու համար:

Բաժին 4. Իրավակիրառ պրակտիկայի համապատասխանեցում

35. Հայաստանի Հանրապետությունը, որպես Եվրոպայի խորհրդի անդամ, պարտավորվել է ընդունել իրավունքի գերակայության սկզբունքը և այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ պետության իրավազորության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման գանգատները քննության առարկա են դառնում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում (այսուհետ՝ ՄԻԵԴ):

36. ՄԻԵԴ կայացրած վճիռները Հայաստանի Հանրապետության համար ունեն պարտադիր իրավաբանական ուժ եւ իրավակիրառ պրակտիկայի համար առանցքային դեր ունեն: «Սեռական շահագործումից եւ սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» կոնվենցիան կամ դրանում տեղ գտած հասկացությունները ՄԻԵԴ վճիռներում արդեն իսկ քննարկման առարկա են դարձել:

37. Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների դեմ ՄԻԵԴ-ի կայացրած վճիռները կարող են ուղեցույց դառնալ հասկանալու համար բացթողումների հետեւանքները: Օրենսդրական եւ ընթացակարգային բացերի ժամանակին շտկումը, ինչպես նաեւ համարժեք մեխանիզմների ներդրումն ու արդյունավետ կիրառումը կարող է ազատել Հայաստանի Հանրապետությանը ոչ ցանկալի վճիռների կայացումից:

38. Մի շարք վճիռներում ՄԻԵԴ-ը խախտում է դիտարկել օրենսդրության մեջ համապատասխան ձեւակերպումների բացակայությունը:

39. *Մյոդեռմանն ընդդեմ Շվեդիայի* գործով մերկ **երեխային գաղտնի նկարահանելու գործողությունը քրեականացնող հստակ օրենսդրական նորմերի բացակայությունը** ՄԻԵԴ-ը որպես խախտում է գնահատել եւ պետությանը պարտավորեցրել դիմողին վճարել ոչ նյութական վնասի փոխհատուցում 10,000 Եվրոյի չափով:

40. *Օ' Կեեֆեն ընդդեմ Իռլանդիայի* գործով ՄԻԵԴ-ը խախտում է գնահատել Ազգային դպրոցում ուսուցչի սեռական ոտնձգություններից աշակերտին պաշտպանելու համար պետության կողմից համարժեք մեխանիզմի ներդրման ձախողումը: Քննարկելով դիմողին սեռական բռնությունից պաշտպանելու պոզիտիվ պարտավորության պետության չկատարելը՝ ՄԻԵԴ-ը նշել է. «*Կառավարության անքակտելի պարտավորությունն է, ըստ անհրաժեշտության, հատուկ միջոցների և երաշխիքների կիրառման միջոցով երաշխավորելու երեխաների պաշտպանությունը վատ վերաբերմունքից, հատկապես տարրական կրթության համատեքստում: Այս կապակցությամբ երեխայի նկատմամբ նման սեռական բռնության բնույթն այնպիսին է, որ, հատկապես, երբ բռնություն գործադրողը երեխայի նկատմամբ իշխող կարգավիճակով է օժտված, արդյունավետ հայտնաբերման և հաղորդման մեխանիզմների առկայությունը հիմնարար է քրեական իրավունքի իմպլեմենտացման համար, որը կոչված է արգելելու նման բռնությունը*»: Այս

մանկական պոռնոգրաֆիային, ինչպես նաև այլ խախտումներ, որոնք ուղղված են մտավոր սեփականությանը և հարակից այլ իրավունքների դեմ:

գործով ՄԻԵԴ-ը որոշել է, որ պետությունը դիմումատուին ընդհանուր 30,000 եվրո փոխհատուցում պետք է վճարի՝ որպես նյութական և ոչ նյութական վնասի համար:

41. *Յ-ն ընդդեմ Սլովենիայի գործով* ՄԻԵԴ-ը գտել է, որ տեղի է ունեցել *Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում կապված պատասխանող պետության իրավասու մարմինների կողմից դիմողի՝ սեռական բռնության վերաբերյալ բողոքների առիթով պատշաճ քննություն և հետապնդում չիրականացնելու կապակցությամբ: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում պատասխանող պետության իրավասու մարմինների կողմից դիմողի անձնական անձեռնմխելիությունը նրա նկատմամբ սեռական բռնության առիթով քրեական գործի քննության ընթացքում չպաշտպանելու առնչությամբ:*

42. ՄԻԵԴ պրակտիկան հենվում է նաեւ միջազգային կազմակերպությունների կողմից սահմանած սկզբունքների վրա՝ հիշատակելով իր վճիռներում: Այսպես, Միացյալ ազգերի Գլխավոր ասամբլեայի՝ 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/34 որոշմամբ ընդունված՝ «Հանցագործության և լիազորությունների չարաշահումների զոհերի նկատմամբ արդարադատության հիմնարար սկզբունքները» նախատեսում են, որ հանցագործության զոհերը պետք է փոխհատուցում ստանան, ինչպես նաև՝ պետք է հարգանք դրսևորվի նրանց արժանապատվության նկատմամբ (Հավելված, 4-րդ հոդված): Ավելին, դատական և վարչական վարույթի արագ արձագանքը տուժողների կարիքներին պետք է հեշտացված լինի (inter alia) ձեռնարկելով միջոցներ նվազեցնելու համար տուժողների անհարմարությունը, պաշտպանելու համար նրանց առանձնանալն անհրաժեշտության դեպքում և ապահովելու նրանց անվտանգությունը, ինչպես նաև՝ նրանց ընտանիքների և նրանց կողմից ներկայացված վկաների անվտանգությունը սպառնալիքներից և հաշվեհարդարից (Հավելված, հոդված 6(d)):

43. Այսպիսով, ՀՀ իրավակիրառ պրակտիկան Կոնվենցիայի պահանջներին համահունչ զարգացնելու ուղղությամբ պետք է առաջին հերթին ձեռնարկել Կոնվենցիայի, խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային մարմինների փաստաթղթերի եւ ՄԻԵԴ պրակտիկայի վերաբերյալ ուսուցման դասընթացներ իրավակիրառողների համար, ինչպես նաեւ պատրաստել համապատասխան գործնական ձեռնարկներ:

Բաժին 5. Առաջարկություններ. (Կոնվենցիայի նախանշած նպատակների համար ծրագրերի և այլ միջոցառումների իրականացում)

44. Երեխաների տարրական ու միջնակարգ կրթական ծրագրերը լրացնել այնպես, որ տեղեկանան երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության հետ կապված վտանգի հետ, ինչպես նաև իրենց պաշտպանելու միջոցների մասին, համացանցային տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներից (ՏՀՏ) օգտվելու կանոնների մասին:

45. Իրավասու մարմինների միջոցով երեխաների հետ կանոնավոր կերպով շփումներ ունեցող անձանց իրազեկել երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության դրսևորման վերաբերյալ, որպեսզի կարողանան բացահայտել նման իրավախախտումները, տեղյակ լինեն համացանցային տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից (ՏՀՏ) օգտվելու անվտանգ կանոններին:

46. Վիճակագրական հստակ ծրագրերի ներդրում իրավապահ մարմինների, Մարդու իրավունքների պաշտպանի ու Փաստաբանների պալատի համակարգում, ընդ որում դրանք իրար հետ համաժամանակյա կապի մեջ պետք է լինեն՝ բացառելու համընկնումները եւ զոհի նույնականացման դժվարությունները:

47. 12-18 տարեկան դժվար դաստիարակվող, շեղված վարքագծով և հատուկ դաստիարակության կարիք ունեցող, սեռական կամ այլ տիպի շահագործման

ենթարկված անչափահասների համար վերինտեգրման կենտրոնի ստեղծման ու գործունեության գնահատում:[194]

48. Հանրակրթական դպրոցներում, նախադպրոցական հաստատություններում, երեխաների խնամքի կենտրոններում նախատեսվում է բարձրացնել բռնության բոլոր ձևերի մասին իրազեկվածությունը, երեխաների հետ իրականացնել զրույցներ՝ իրենց նկատմամբ հնարավոր բռնության դեպքերը բացահայտելու ուղղությամբ՝ ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունը՝ ինչպես ընտանիքում, այնպես էլ՝ ուսման վայրում և փողոցում:

49. Հատուկ ծրագրերի մշակում բռնության և սեռական շահագործման զոհ դարձած երեխաների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Սեռական կամ այլ տիպի շահագործման և բռնության ենթարկված անչափահասների հայտնաբերում նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնում:

50. Ծրագրեր կամ միջոցառումներ երեխային սեռական բռնության ենթարկած հանցագործների համար՝ նպատակ ունենալով կանխել և նվազագույնի հասցնել երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների կրկնման վտանգը:

51. Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կողմից երեխաների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների պետական կառավարման մարմինների կողմից պատվիրակված ծրագրերի համակարգում:

52. Դասընթացներ կազմակերպել քննիչների, դատախազների, դատավորների ու փաստաբանների համար: Ուղեցույցներ պատրաստել իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով:

53. Վերապատրաստումներ երեխաների իրավունքներին առնչվող համայնքային, կրթական կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաեւ այլ անձանց, ովքեր աշխատանքի բերումով ամենօրյա շփում ունեն երեխաների հետ կամ հաճախակի են շփվում:

54. Տեղական մակարդակներում՝ քաղաքային ու գյուղական համայնքներում, սեռական բռնության և շահագործման զոհերին օգնելու համար խթանել կանխարգելիչ և իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումները: Տեղական և տարածաշրջանային իշխանություններին անհրաժեշտ է կրթել այս ոլորտում գործողության պլանների և ռազմավարությունների մշակման և իրականացման համար: Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մշակել է Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների դաշնագիրը՝ ուղղորդելու համար սեռական շահագործման և բռնության դեմ մղվող պայքարում իշխանությունների գործողությունները: Այն ներառում է տեղական և տարածաշրջանային մակարդակում իրականացվելիք գործնական նախաձեռնությունների և քաղաքականության մի ցուցակ՝ զարգացնելու համար երեխայի հանդեպ բարյացակամ ծառայությունները, պաշտպանելու երեխաներին և օգնելու կանխել սեռական բռնությունը համայնքի շրջանակներում: Այս առաջարկությունները հիմնվում են չորս նպատակների վրա՝ բռնության կանխարգելման, զոհերի պաշտպանության, դատական կարգով ոճրագործների հետապնդման և ողջ ընթացակարգի ժամանակ երեխաների մասնակցության:

55. Խնամակալության ու հոգաբարձության մարմիններում ընդգրկված անձանց, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների,

---

[194] 2007-2015թթ. ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից և միջազգային կազմակերպություններից 10 մլն ՀՀ դրամ (տարեկան) հատկացում է կատարել այդ կենտրոնի ստեղծման համար (ՀՀ կառավարության որոշում 18 դեկտեմբերի 2003 թվականի N 1745-Ն,

մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմերի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատողների, մանկատների, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների, երեխաների խնամքի ցերեկային հաստատությունների աշխատողների վերապատրաստման կազմակերպում:

56. Ավելի դյուրին դարձնել աջակցման ծառայությունների հասանելիությունը:

57. Ստեղծել բազմապրոֆիլ կենտրոններ՝ աջակցելու սեռական շահագործման ու սեռական բռնության զոհերին, նաեւ՝ ընտանիքի անդամներին:

58. Բարձրացնել երեխաների իրազեկվածության աստիճանը դպրոցներում և այլ հաստատություններում, կազմակերպել քննարկումներ և տեղեկատվական հանդիպումներ:

59. Զարգացնել պետական իրավասու մարմինների եւ ոլորտային ՈԿԿ-ների միջեւ համագործակցությունը:

60. Թեմային առնչվող քննարկումներ կազմակերպել համագործակցելով լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ, տարածել տեղեկատվական նյութեր:

3. Հայաստանում անչափահասների արդարադատության տեղեկատվական շտեմարանի ցուցիչներ

Անչափահասների արդարադատության համակարգի զարգացման միտումները գնահատելու և օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա, տուժող երեխաների վերաբերյալ համապարփակ և պարբերական տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտությունից ելնելով՝ 2015 թվականին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից «Երեխաների համար արդարադատության մատչելիությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում միջազգային և ազգային փորձագետների կողմից ուսումնասիրվել և վերլուծվել են ցուցիչներ օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա եւ տուժող երեխաների համար: Համակարգված տվյալների պարբերական հավաքագրման անհրաժեշտությունը կարևոր է նաև անչափահասների իրավազանցության կանխարգելմանն ու արդյունավետ արձագանքմանն ուղղված ծրագրերի և քաղաքականությունների մշակման, իրագործման, գնահատման համար: Որպես միջազգային փորձագետ հանդես է եկել Դանիել Օ՛Դոնելին և ազգային փորձագետ Արշակ Գասպարյանը:

Միջազգային փորձագետի կողմից անչափահասների արդարադատության ցուցանիշների վերաբերյալ ներկայացվել է առաջարկներ և դիտարկումներ, որոնք ազգային փորձագետների կողմից լրամաշկվել և ներկայացվել են թվով 25 ցուցիչներ:

Անչափահասների արդարադատության ցուցիչներ և դետալիզացման բաղադրիչներ[195]

ՄԱԿ-ի Հանցավորության և Թմրամիջոցների գրասենյակը, տարբեր այլ ինստիտուտներ, ինչպես նաև իրավական ակտեր հորդորում են ունենալ անչափահասների արդարադատության[196] հնարավորինս գործուն ցուցիչներ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի նվազագույնը տարեկան կտրվածքով:

Այս ցուցիչներն ու տեղեկատվության հավաքագրումը կօգնեն որոշում կայացնողներին լինել առավել հասցեական ու անաչառ իրենց որոշումներում, կնպաստեն արդյունավետ քաղաքականության մշակմանը, ինչպես նաև, ներգրավելով գիտական ու ակադեմիական ոլորտի մասնագետների, բարելավել անչափահասների արդարադատության ոլորտն ընդհանուր առմամբ:

Վերլուծելով դաշտում առկա խնդիրները՝ փորձագետների կողմից փորձ է արվել մշակել Հայաստանի Հանրապետությունում անչափահասների արդարադատության հնարավորինս կիրառելի ցուցիչներ, որոնցով հնարավոր կլինի նախագծել և ներդնել անչափահասների վերաբերյալ տվյալների միասնական շտեմարան:

Ցուցիչների հիմնական նպատակը

Սույն փաստաթուղթը պատրաստելու հիմնական նպատակն ազգային տվյալների միասնական բանկի համար անչափահասների արդարադատության ցուցիչներ առաջարկելն է: Տվյալների բազան հավաքագրում ու համախմբում է ընտրված ցուցիչների

---

[195] Դետալիզացման բաղադրիչները տվյալ ցուցիչի «բացվածքն են», բաղդատումները կամ մանրամասնեցումները, որոնք հնարավարություն են տալիս ամբողջացնել տվյալ ցուցիչով ստացված տեղեկատվությունը:

[196] «Անչափահասների արդարադատություն» եզրույթը գրականության տարբեր աղբյուրներում հանդիպում է նաև հետևյալ անվանումներով՝ «երեխաների արդարադատություն», «երիտասարդների արդարադատություն» կամ «յուվինալ արդարադատություն»: Շփոթությունից խուսափելու համար, տեքստում, որպես կանոն, կիրառվում է «անչափահասների արդարադատություն» եզրույթը:

տվյալները, որոնք հավաքագրվել են քրեական արդարադատության մարմինների կողմից, ինչպիսիք են ոստիկանությունը, քննչական կոմիտեն, դատախազությունը, դատարանները, քրեակատարողական ծառայությունը և պրոբացիոն ծառայությունը: Ժամանակ առ ժամանակ այս միասնական ազգային տվյալների բանկի կողմից հավաքված տվյալները կարող են տրամադրվել նաև անդրազգային տվյալների բանկերին, ինչպիսին է «Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկը» (TransMonEE)[197]: Այսպիսով, սույն ցուցիչների հիմնական նպատակն է ազգային իրավասու մարմիններին մշտապես տրամադրել տվյալներ, որոնք օգտակար կլինեն երեխաներին վերաբերող իրավապահ և/կամ արդարադատության համակարգի գործունեությունը վերահսկելու և այլ իրավասու ազգային մարմինների, կառույցների և խմբերի կողմից իրագործվելիք ինտեգրացված ազգային քաղաքականությունների և ծրագրերի մշակման գործում:

Ցուցիչների հավաքագրման աղբյուրները

Ցուցիչների հավաքագրման հիմնական աղբյուրներից մեկը ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից մշակված ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի 11 քանակական ցուցիչներն են:

1. «Օրենքի հետ խնդիր ունեցող երեխաներ» (սահմանվում է որպես «ձերբակալված երեխաներ»)
2. Անազատության մեջ գտնվող երեխաներ
3. Նախնական կալանքի տակ գտնվող երեխաներ
4. Նախնական կալանքի տևողություն
5. Ազատազրկման տևողություն (ներառյալ ձերբակալման ժամանակահատվածը)
6. Ազատազրկման ընթացքում երեխաների մահացության դեպքեր
7. Մեծահասակներից անջատ պահվել
8. Ծնողների և ընտանիքի հետ կապ
9. Ազատազրկման դատապարտում
10. Մինչդատական փուլում արտադական լուծում (diversion)
11. Հետազատման խնամք

Վերը ներկայացված ցուցիչներն անչափահասների արդարադատության միակ միջազգային ցուցիչները չեն: Դրանցից է նաև «Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկը» (TransMonEE): Սա ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից 1992 թվականին ստեղծված տարածքային տվյալների բազա է, որի նպատակն է մշտադիտարկել սոցիալ-տնտեսական փոփոխությունները նախկին Սովետական Միության երկրներում և Արևելյան Եվրոպայում: Այն ներկայումս օգտագործում է մոտ 400 ցուցիչներ՝ ներառյալ 9 ցուցիչ «անչափահասների արդարադատությունը և հանցանքները» բաժնում: Այս ցուցիչներն են՝

7.1 Գրանցված հանցագործությունների տոկոսը

7.2 Տարվա ընթացքում երեխաների նկատմամբ իրականացված հանցագործությունները

7.3 Տարվա ընթացքում ոստիկանության հետ առնչություն ունեցած անչափահասները[198]

7.4 Տարվա ընթացքում ձերբակալված անչափահասների թիվը

7.5 Տարվա ընթացքում մեղադրանք հարուցված անչափահասների թիվը

---

[197] http://www.transmonee.org/About.php

[198] Խոսքը վերաբերում է իրենց իրավախախտ վարքի պատճառով Ոստիկանության ուշադրության կենտրոնում հայտնված և/կամ հաշվառված երեխաներ

7.6 Տարվա ընթացքում նախնական կալանքի տակ վերցված անչափահասները
7.7 Տարվա ընթացքում քրեական վարույթում ընդգրկված անչափահասները
7.8 Տարվա ընթացքում անչափահասների դատապարտումները
7.9 Տարվա վերջում կալանավորված անչափահասները

Բոլոր այս ցուցիչները բաղդատվում են ըստ տարիքի, սեռի և այլ գործոնների, որոնք տարբեր են ըստ տարբեր ցուցիչների: Դրանցից երկուսը հատկանշական են: Հանցանքների տոկոսի վերաբերյալ տվյալները, ինչպես և կարելի էր սպասել, պետք է մանրամասնեցվեն, որպեսզի հնարավոր լինի արձանագրել անչափահասների կողմից կատարված հանցագործությունների թիվը: Իսկ քրեական վարույթում ընդգրկված անչափահասների վերաբերյալ տվյալները բաղդատվում, մանրամասնեցվում են, որպեսզի տարբերակում մտցվի իրավախախտում կատարած և որպես վկա ընդգրկված անչափահասների միջև:

Ցուցիչների այս երկու խումբը, ինչպես տեսանք, տարբեր կենտրոնացումներ ունեն: ՅՈՒՆԻՍԵՖ-ի ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի ցուցիչները հիմնականում կենտրոնանում են ազատազրկված անչափահասների վրա: Սոցիալական արդարության ավելի արդյունավետ ապահովման համար փոխակերպվող մոնիթորինգի տարածքային տվյալների բանկի (TransMonEE) ցուցիչներն ավելի լայն ու համապարփակ են: Դրանք սկսում են երեխաների կողմից կատարված հանցանքների վերաբերյալ տվյալներ հավաքելով, մինչդեռ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի ցուցիչները սկսում են կալանավորված երեխաների վերաբերյալ տվյալներ հավաքագրելուց: Դրանք ներառում են հանցանքից տուժած անչափահասների վերաբերյալ երկու ցուցիչներ, որոնք կենտրոնանում են անչափահասների արդարադատության գործընթացի վրա՝ ներառյալ գործ հարուցված անչափահասների, քրեական վարույթում ընդգրկված անչափահասների և դատապարտված անչափահասների թիվը:

Անչափահասների արդարադատության համակարգի վերաբերյալ համապարփակ, օբյեկտիվ պատկերացում կազմելու համար պետք է տեսանելի լինի, թե ինչպես են շատ անչափահասներ «մտնում» համակարգ, և ինչ է պատահում նրանց հետ քրեական արդարադատության հաջորդական փուլերում: Սա մարտահրավեր է, որովհետև տարբեր գերատեսչություններ և կառույցներ պատասխանատվություն են կրում այս գործընթացի տարբեր փուլերի և համակարգի բազմազան բաղադրիչների համար: Հետևաբար, գրեթե միշտ գործընթացի տարբեր փուլերի վերաբերյալ տեղեկատվության և տվյալների միջև բացեր կամ հակասություններ կան:

Հայաստանում անչափահասների արդարադատության վերաբերյալ TransMonEE-ի հրատարակած ամենավերջին տվյալները 2013 թվականի համար են: Տվյալները տրամադրված են 9 ցուցիչներից 6-ի համար.

7.1.2	**անչափահասների կողմից գրանցված հանցանքները**	**418**
7. 2	անչափահասների դեմ հանցանքների թիվը	359
7.3	ոստիկանության հետ առնչություն ունեցող անչափահասները	-
7.4	ձերբակալված անչափահասները	352
7.5	անչափահասները, ում նկատմամբ հարուցվել է քրեական գործ	112
7.6	կալանավորված անչափահասները	-
7.7	քրեական վարույթում գտնվող անչափահասները	-
7.8	դատապարտված անչափահասները	87

7.8.10	ազատազրկման դատապարտված անչափահասները	76
7.9	ազատազրկված անչափահասները, տարվա վերջում	23
7.9.5	բանտում գտնվող անչափահասներ	11

Այս տվյալներն առաջացնում են այնպիսի հարցեր, որ ցույց են տալիս, թե ինչպես է աշխատում համակարգը: Օրինակ՝ եթե 352 անչափահասներ էին ձերբակալվել, ինչու՛ էր նրանցից միայն 112-ի դեմ գործ հարուցվել: Ի՞նչ պատահեց մյուս 240 անչափահասին: Եթե դատապարտվեցին 87 անչափահաս և 76 անչափահաս ազատազրկան վայր ուղարկվեց, ի՞նչ պատժամիջոց է կիրառվել մյուս 11 անչափահասների հանդեպ: TransMonEE-ն պահանջում է, որ դատապարտումների վերաբերյալ տվյալները դետալիզացվեն 8 տեսակի խափանման միջոցներով ու պատժատեսակներով, ներառյալ, «այլ», սակայն Հայաստանի կողմից տրամադրված տվյալները որոշակիացնում են բանտում ազատազրկվածների թիվը, սակայն չեն տրամադրում տեղեկություն այլ պատժամիջոցների և հարկադրանքի միջոցների վերաբերյալ:

Երրորդ օրինակ, եթե տարվա ընթացքում 76 անչափահասներ դատապարտվեցին ազատազրկման, տարվա վերջում ինչու՞ էին միայն 11 անչափահասներ ազատազրկման վայրում: Նրանցից շատերին շատ կարճաժամկետ ազատազրկու՞մ էր տրված: Արդյո՞ք նրանցից ոմանց ուղարկել էին մեծահասակների բանտ, որովհետև դատապարտման ժամանակ նրանք արդեն 18 տարեկան էին և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ փորձագետների կողմից մշակվել են 25 ցուցիչներ, որոնցից 14-ը վերաբերում են իրավախախտում կատարածներին, 11-ը՝ տուժող և վկա անչափահասներին: Հանցանքի զոհ կամ վկա անչափահասներին վերաբերող ցուցիչներից վեցը վերաբերում են միայն հանցանքում տուժող հանդիսացող երեխաներին: Սրա պատճառն այն է, որ հանցանքից տուժող երեխաներն ունեն որոշակի իրավունքներ, որոնք չունեն վկա երեխաները:

Ինչպես նշվեց, ՅՈՒՆԻՍԵՖ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի ցուցիչները հանցանքի վկա և տուժող երեխաների վերաբերյալ ցուցիչներ չեն ներառում, իսկ TransMonEE-ի ցուցիչներն ունեն այսպիսի երկու ցուցիչ: Տուժող անչափահասների իրավունքների և բուժման հարցերը սկսեցին միջազգային կառույցների կողմից ուշադրության արժանանալ ավելի ուշ, քան իրավախախտում կատարած անչափահասների իրավունքների հարցերը: Հետևաբար, մենք լայնացրեցինք մեր որոնումները, որպեսզի ներառենք նյութեր, որոնք ուղղակիորեն ցուցիչներ չեն անվանվում, բայց այնուամենայնիվ բացահայտում են տվյալներ, որոնք իրավասու միջազգային կառույցներն օգտակար են համարում՝ հասկանալու համար, թե ինչպիսի վերաբերմունքի են արժանանում վկաները և տուժողները:

Մշակված և առաջարկված ցուցիչները հիմնված են այն կանխավարկածի վրա, որ բոլոր հանցագործություններից տուժած երեխաները պետք է ունենան միևնույն իրավունքները: Այսպիսով, տուժող և վկա երեխաների վերաբերյալ ցուցիչներ մշակելիս նաև հետևյալ ուղեցույցներն են հաշվի առնվել.

- Երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի կիրառման պարբերական հաշվետվության ուղեցույց՝ մշակված Երեխայի իրավունքների հանձնաժողովի կողմից,[199]
- Երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի կիրառման պարբերաբար ներկայացվելիք հաշվետվությունների ուղեցույց՝ մշակված Երեխայի իրավունքների հանձնաժողովի կողմից[200]

[199] Պայմանագրերին բնորոշ ուղեցույցներ, որոնք վերաբերում են անդամ-պետությունների կողմից ներկայացված պարբերական հաշվետվությունների ձևին և բովանդակությանը՝ համաձայն Երեխայի իրավունքների կոնվենցիայի 1 (բ) գլխի 44 հոդվածի, 2015թ., ՄԱԿ-ի փաստ.. CRC/C/58/Rev.3

 Լանցարոտեի կոնվենցիայի կիրառման վերաբերյալ Ընդհանուր նկարագրության հարցաշար՝ մշակված 2013թ. կոնվենցիայի անդամների հանձնաժողովի կողմից[201]

Ոլորտի իրավակարգավորումներին ուղղված միջազգային փաստաթղթերը ***տե՛ս Հավելված 2***:

Հիմնական ցուցիչների մեկնաբանություններ

Մինչ առաջարկվող դիցուք ցուցիչներին անդրադառնալը, կարևոր երեք դիտարկումներ.

Առաջին դիտարկումը միայն քրեական իրավախախտումների՞ն, թե՞ և՛ քրեական, և՛ վարչական իրավախախտումներին անդրադառնալու հարցն է: Մեր տեսանկյունից, տուժող հանդիսացող երեխաների վարչական իրավախախտումների տվյալները, որքան էլ կարևոր են ընդհանուր արդարադատության տեսակետից, միևնույն է այդքան կարևոր չեն քրեական արդարադատության տեսակետից: Առաջարկված նախնական լուծումը միայն առաջին ցուցիչի վերաբերյալ տվյալներ հավաքագրելն է՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական իրավախախտման համար պատասխանատվության կարող են ենթարկվել ոչ պակաս, քան 16 տարին լրացածները[202]:

Երկրորդ դիտարկումը վերաբերվում է միացյալ տվյալների բանկին՝ շտեմարանին. արդյո՞ք այն պետք է ներառի տեղեկատվություն միայն պետական աղբյուրներից, թե՞ կարող է նաև ոչ պետական աղբյուրներից տվյալներ ներառել: Մեր տեսանկյունն այն է, որ քանի որ հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը համեմատաբար մեծ դերակատարում ունեն որոշակի բնագավառներում, ինչպիսին է տուժողներին աջակցությունը կամ որոշ խմբերի հետ վերականգնողական աշխատանքները, նրանց տրամադրած ծառայությունների տվյալները ևս արժանի են հավաքագրման:

Երրորդ դիտարկումը վերաբերվում է տերմինաբանությանը (օգտագործել ազգայի՞ն, թե՞ միջազգային տերմինաբանություն): Մի կողմից, տվյալների բանկի հիմնական նպատակը կլինի ազգային իրավասու մարմինների կողմից կայացված որոշումներին տեղեկացնելը, և տերմինները պետք է պարզ լինեն այն մարդկանց համար, ովքեր պատասխանատու կլինեն տվյալների հավաքագրման և դրանց կիրառման գործում: Մյուս կողմից, փորձագետների կողմից առաջարկվող ցուցիչները հիմնված են միջազգային ցուցիչների վրա: Ուստի փորձ է կատարվել մեկտեղել միջազգայնորեն օգտագործվող տերմինաբանությունը (որպեսզի միջազգային ցուցիչների հետ կապը հասկանալի լինի), ազգային օրենսդրության և իրավական դաշտում առկա հասկացությունների հետ:

Ցուցիչների դետալիզացիա կամ բաղդատում

Հավաքագրված տվյալները բաղդատելու կամ դետալիզացնելու համար օգտագործվող չափանիշները, որպես այդպիսին, նույնքան կարևոր են:

Անչափահաս իրավախախտների վերաբերյալ ցուցիչների տարիքային խմբերն են՝ 16 կամ 17 տարեկան և 14 կամ 15 տարեկան, իսկ տուժող երեխաների կամ վկաների համար տարիքային խմբերն են 14-17 տարեկան, 10-13 տարեկան և 10-ից ցածր տարիքի:

---

[200] Անդամ-պետությունների կողմից ներկայացվելիք նախնական հաշվետվությունների վերաբերյալ վերանայված ուղեցույցներ՝ համաձայն Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ երեխաների իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրության 1. գլխի 12. հոդվածի, 2006թ., ՄԱԿ-ի փաստ.. CRC/C//OPSC/2

[201] Եվրոպայի Խորհրդի փաստ. T-ES (2013)02

[202] ՀՀ Օրենքը «Վարչական իրավախախտումների մասին», հոդված 12

Շատ ցուցիչներ առաջարկում են, որ իրավախախտի կամ տուժողի վերաբերյալ “այլ չափանիշներ” ևս դետալիզացվեն:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՑՈՒՑԻՉՆԵՐ

Ինչպես արդեն վերը նշվեց, փորձագետների կողմից մշակվել և առաջարկվում է անչափահասների արդարադատության 25 ցուցիչներ՝ իրենց բաղդատումներով: Ցուցիչներն առավել տեսանելի դարձնելու և հետագայում ըստ բաժինների վերլուծություն կատարելու նպատակով, առաջարկվող 25 ցուցիչները բաժանվել են 2 հիմնական խմբի՝ անչափահասների արդարադատության ցուցիչներ և անչափահաս տուժողների և վկաների ցուցիչներ: Այսպես.

ԲԱԺԻՆ 1 - Անչափահասների արդարադատության ցուցիչներ

1. Տարվա ընթացքում անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների թիվը

Դետալիզացման բաղադրիչները

Տրանսմոնէէ-ն (TransMonEE) կոչ չի անում դետալիզացնել այս տվյալները: Այսուհանդերձ, օգտակար կլիներ այս տվյալները դետալիզացնել անչափահասների արդարադատության այլ փուլերը մանրամասնեցնելու համար օգտագործվող չափանիշներին նմանվող չափանիշներով (ձերբակալված, քրեական գործ հարուցված, դատապարտված անչափահասներ և այլն): Հաջորդիվ ներկայացված առաջարկությունները հիմնված են մասամբ Տրանսմոնէէ (TransMonEE) ցուցիչների, մասամբ էլ տարածաշրջանում տարածված և կիրառում գտած ադետալիզացման չափանիշների վրա.

1. Տարվա ընթացքում անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների թիվ				
ա. կասկածյալի սեռը	**բ. կասկածյալի տարիքը** -14-ից 16 տարեկան (այսինքն՝ ավելի փոքր, քան 16 տարեկան) -16-ից 18 տարեկան (այսինքն՝ ավելի փոքր, քան 18 տարեկան)	**գ. բնակության վայրը** - Երևան -մարզ [անունը]	**դ. կասկածյալի այլ բնութագրական հատկանիշները** -ապրում է աղքատության մեջ -ապրում է մեկ ծնողի կամ այլ մեծահասակ ազգականի (ազգականների) հետ -ապրում է ինչ-որ կառույցում -հաճախում է դպրոց -աշխատում է -ոչ աշխատում է, ոչ հաճախում է դպրոց -հանցագործությունը գործել է 18 տարեկանից մեծ հանցակիցների հետ -հանցագործությունը գործել է 18 տարեկանից ցածր հանցակիցների հետ -իրավախախտման ժամանակ գրանցված է եղել ոստիկանության անչափահասների բաժանմունքում - նախկինում իրավախախտում է գործել	**ե. իրավախախտման բնույթը.** -սեփականության դեմ իրավախախտում -սեռական բնույթի հանցագործություն -անձի դեմ կատարված այլ լուրջ բռնություն -այլ հանցանք -վարչական իրավախախտում:

2. Տարվա ընթացքում իրենց պահվածքի պատճառով ոստիկանության հետ առնչված երեխաներ				
ա. սեռը	**բ.տարիքը** -10 տարեկանից փոքր -10-ից 14 տարեկան -14-ից 18 տարեկան	**գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)**	**դ. երեխայի այլ բնութագիր հատկանիշներ** -ապրում է աղքատության մեջ, -ապրում է մեկ ծնողի կամ այլ մեծահասակ ազգականի(ների) հետ, -ապրում է ինչ-որ կառույցում, -հաճախում է դպրոց, -աշխատում է, -ոչ աշխատում է, ոչ հաճախում է դպրոց, - նախկինում իրավախախտում է կատարել,	**ե. «առնչության» պատճառը** -հանցագործության մեջ մասնակցության կասկածի առկայություն, -վարչական իրավախախտման մեջ մասնակցության կասկածի առկայություն, -“հակահասարակական վարքագծում” ենթադրյալ մասնակցություն,

3. Տարվա ընթացքում ձերբակալված անչափահասների թիվը.					
ա. սեռը	**բ. տարիքը (նույնը, ինչ-որ առաջարկված 1. ցուցիչը),**	**գ. բնակության վայրը (նույնը, ինչ-որ առաջարկված 1. ցուցիչը),**	**դ. երեխային բնութագրող այլ հատկանիշներ (նույնը, ինչ-որ առաջարկված 1. ցուցիչը),**	**ե. Իրավախախտման բնույթը.** -սեփականության դեմ իրավախախտում, -սեռական բնույթի հանցագործություն, -անձի դեմ կատարված այլ լուրջ բռնությամբ հանցանք, -այլ հանցանք,	**զ. Ձերբակալության տևողությունը.** -24 ժամից պակաս -24 ժամից ավելի

4. Տարվա ընթացքում քրեական գործի արտադատական լուծման (Diversion) ծրագրում ընդգրկված անչափահաս իրավախախտները					
ա. Ծրագրին ուղղորդված իրավախախտի սեռը,	**բ. Ծրագրին ուղղորդված իրավախախտի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),**	**գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)**	**դ. Երեխայի այլ բնորոշ հատկանիշները (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)**	**ե. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը)**	**զ. ուղղորդման արդյունքը** -ավարտել է գործի արտադատական լուծման ծրագիրը -չի ավարտել ծրագիրը

5. Տարվա ընթացքում քրեական գործ հարուցված անչափահասների թիվը.				
ա. Մեղադրյալի սեռը	բ. Մեղադրյալի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	դ. Մեղադրյալի այլ բնորոշիչ հատկանիշներ (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	ե. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը)

6. Տարվա ընթացքում մինչև դատավարությունը քրեական պատասխանատվությունից ազատված անչափահասները.					
ա. Մեղադրյալի սեռը	բ. Մեղադրյալի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	դ. Մեղադրյալի այլ բնորոշ հատկանիշները (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)	ե. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը)	զ. կարգավորումը -ազատվել է քրեական պատասխանատվությունից ՔԴՕ 36 հոդվածի համաձայն՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով -ազատվել է քրեական պատասխանատվությունից ՔԴՕ 37 հոդվածի 1-ին մասով -ազատվել է քրեական պատասխանատվությունից ՔԴՕ 37 հոդվածի 2-րդ մասով:

7. Տարվա ընթացքում նախնական կալանքի ենթարկված անչափահասները.					
ա.Կալանավորվածի սեռը,	բ. Կալանավորվածի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	դ. Կալանավորվածի այլ բնորոշ հատկանիշները (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	ե. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը),	զ. Կալանքի տևողությունը -2 ամսից քիչ, -2 ամսից շատ

8. Տարվա ընթացքում հանցագործության համար քրեական հետապնդման ենթարկված անչափահասները (սույն ցուցիչը վերաբերվում է այն անչափահասներին, ում գործը մտել է դատարան)				
ա. Մեղադրյալի սեռը	բ. տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	գ. բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	դ. այլ բնորոշ հատկանիշները (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	ե. իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը),

9. Տարվա ընթացքում հանցագործության համար դատապարտված անչափահասները				
ա..Դատապարտյալի սեռը,	բ. դատապարտյալի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	գ. բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	դ. դատապարտյալի այլ բնութագրիչ հատկանիշները (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	ե. իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),

10. Տարվա ընթացքում դատապարտված անչափահասների նկատմամբ կիրառված պատիժներն ու հարկադրանքի միջոցները					
ա.Դատապարտյալի սեռը,	բ. դատապարտյալի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1, ցուցիչը),	գ. Բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	դ. Դատապարտյալի այլ բնութագրակա ն	ե. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),	զ. Կիրառված պատիժը կամ միջոցը -տուգանք, - հանրային աշխատանք -վերահսկողություն՝ համաձայն Քրեական Օրենսգրքի 91 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, -պատճառված վնասը հարթելու պարտադրանք՝ համաձայն Քրեական

			հատկանիշնե ը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),		Օրենսգրքի 91 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի -հատուկ ուսումնադաստիարակչական հաստատությունում տեղավորում, -հատուկ բժշկական դաստիարակչական հաստատությունում տեղավորում, -3 տարուց պակաս ժամկետով ազատազրկման դատապարտում, -3 տարուց ավելի և 7 տարուց պակաս ժամկետով ազատազրկման դատապարտում, -7 տարուց ավելի և 10 տարուց պակաս ժամկետով ազատազրկման դատապարտում, -10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման դատապարտում, -Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ համաձայն քրեական օրենսգրքի 70 հոդվածի

11. Տարվա վերջում ազատազրկված անչափահասներ

ա. Ազատազրկվածի սեռը,	**բ. Ազատազրկվածի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),**	**գ. ազատազրկմանը նախորդող բնակության վայրը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),**	**դ. այլ բնութագրող հատկանիշներ (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),**	**ե. իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը),**	**զ. ազատազրկման վայրը** -ձերբակալվածներին պահելու վայր -կալանավորվածներին պահելու վայր -ուղղիչ հիմնարկ -հատուկ ուսումնադաստիարակչական հաստատություն -մեծահասակների համար նախատեսված ՔԿՀ

12. Տարվա ընթացքում հանցագործությունների և կրկնահանցագործությունների կանխարգելման ռեսուրսները և շահառուները

ա. ցուցակագրված յուրաքանչյուր ծրագրի կամ կենտրոնի համար շահառու երեխաների թիվը, որը կդետալիզացվի նրանց սեռով, տարիքով և ծրագրում մասնակցության հիմքով	**բ. տարիքով դետալիզացման բաղադրիչները պետք է լինեն՝** -մինչև 14 տարեկան -14 -16 տարեկան -16 -18 տարեկան	**գ. Մասնակցության պատճառների դետալացումը պետք է ներառի՝** -քրեական իրավախախտմանը մասնակցությունը (անկախ երեխայի տարիքից) -«հակասոցիալական վարքի» մասնակցությունը

13. Իրավախախտման կրկնակիություն (ռեցիդիվ)

| **ա. Կրկնահանցագործի սեռը** | **բ. Կրկին անգամ հանցանք կատարելու պահին նրա տարիքը**
- 14 -16 տարեկան
-16 -18 տարեկան
18 - 19 տարեկան | **գ. կրկնահանցագործի այլ բնութագրիչ հատկանիշները**
-ապրում է աղքատության մեջ
-ապրում է մեկ ծնողի կամ այլ ազգականի հետ
-ապրում է որոշակի կառույցում
-հաճախում է դպրոց
-աշխատում է
-Ոչ աշխատում է, ոչ դպրոց է հաճախում
-հանցագործություն է կատարել 18 տարեկանից փոքր հանցակիցների հետ
-հանցագործություն է կատարել | **դ. Կրկին անգամ կատարված հանցագործության բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 3. ցուցիչը)** | **ե.Նախկին իրավախախտման բնույթը.**
-սեփականության դեմ իրավախախտում
-սեռական բնույթի հանցագործություն
-մարդու դեմ՝ բռնությամբ ուղեկցված այլ ծանր հանցագործություն
-այլ հանցագործություն | **զ. նախկին և կրկնակի իրավախախտման միջև ժամանակային տարբերությունը.**
-12 ամսից պակաս
-12 ամսից ավել, բայց 24 ամսից քիչ | **է. նախկին իրավախախտման համար կիրառված պատիժը կամ հարկադրանքի միջոցը**
-գործի արտադատական լուծում
-քրեական պատասխանատվությունից ազատում՝ համաձայն ՔԴՕ 37 հոդվածի հիմքերի
-տուգանք կամ հանրային աշխատանքներ
-վերահսկողություն՝ համաձայն քրեական օրենսգրքի 91 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի
-վնասների հարթում՝ համաձայն քրեական օրենսգրքի 91 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի
-հատուկ ուսումնադաստիարակչական հաստատությունում տեղավորում՝ համաձայն քրեական օրենսգրքի 93 հոդվածի
-հատուկ բժշկական դաստիարակչական |

		18 տարեկանից մեծ հանցակցի հետ -առկա է երկու կամ ավելի նախկին իրավախախտումներ				հաստատությունում տեղավորում՝ համաձայն քրեական օրենսգրքի 93 հոդվածի -ազատազրկման դատավճիռը՝ համաձայն քրեական օրենսգրքի 89-90. հոդվածների -պայմանական վաղաժամկետ ազատում՝ համաձայն քրեական օրենսգրքի 94 հոդվածի:

14. Տարվա ընթացքում կասկածյալների, մեղադրյալների, ազատազրկվածների և այլ անչափահաս իրավախախտների իրավունքների ոտնահարման գրանցված դեպքերը

| **ա. Ոտնահարման զոհի սեռը** | **բ. Ոտնահարման զոհի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 1. ցուցիչը)** | **գ. ենթադրյալ զոհի այլ բնութագրիչ հատկանիշները.**
-ապրում է աղքատության մեջ
-ապրում է մեկ ծնողի կամ այլ մեծահասակ ազգականի/ազգականների հետ
-ապրում է որոշակի կառույցում,
-հաճախում է դպրոց
-աշխատում է
-ոչ աշխատում է, ոչ հաճախում է դպրոց
-ունի ֆիզիկական կամ հոգեկան զարգացման խնդիր
- կրկնահանցագործ է | **դ. Ոտնահարման բնույթը.**
- փաստաբանի բացակայությամբ կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունը
-մեծահասակների հետ ազատազրկման վայրում պահելը
-անմարդկային ֆիզիկական պայմաններում պահելը
- խոշտանգումը կամ վատ վերաբերմունքը
-անօրինաբար կամ բռնությամբ ազատությունից զրկումը
-ազատությունից զրկելու վերաբերյալ ծնողներին չզգուշացնելը
- ընթացակարգային ժամկետների խախտումը
-յուրաքանչյուր փակ կառույցում պատշաճ բժշկական խնամքից, ֆիզիկական վարժություններից և ժամանցից, ուսումնական գործունեությունից, կրոնական ծառայություններից կամ խորհրդատվությունից, կամ ընտանիքի այցելություններից զրկումը,
-այլ | **ե. գրանցված ոտնահարմանն իրավասու մարմինների արձագանքը.**
-գործերի թիվը, որտեղ քննությունը կամ վարչական վարույթը ավարտված չէ
- քննված և չապացուցված ենթադրյալ ոտնահարումների թիվը
- ենթադրյալ ոտնահարումների թիվը, որը հանգեցրել է քրեական գործի հարուցման և իրավունքը ոտնահարողների դատապարտման և պատժման
-ենթադրյալ ոտնահարումների թիվը, որոնց արդյունքում ոտնահարողը հեռացվել է աշխատանքից
-ենթադրյալ ոտնահարումները, որոնց հետանքով հանցավորի նկատմամբ այլ վարչական միջոց է կիրառվել (օր.՝ նախազգուշացում, պաշտոնի իջեցում, պաշտոնից ազատում)
-գործերի թիվը, երբ ոտնահարման զոհը ստացել է փոխհատուցում կամ այլ միջոց: |

15. Տարվա ընթացքում երեխաների դեմ գրանցված հանցագործությունների թիվը.

| **ա. զոհի սեռը** | **բ. զոհի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը)** | **գ. հատուկ խոցելիության հետ համատեղվող գործոնները.**
-ապրում է աղքատության մեջ
-ապրում է մեկ ծնողի կամ այլ մեծահասակ ազգականի/ազգականների հետ
-ապրում է որոշակի կառույցում
-ունի ֆիզիկական կամ մտավոր արատ | **դ. իրավախախտման բնույթը.**
-սեփականության դեմ իրավախախտում
-երեխաների մարմնավաճառություն, երեխաների պոռնոգրաֆիա, թրաֆիքինգ կամ վաճառք
-սեռական բնույթի այլ հանցագործություն
-մարդու դեմ բռնությամբ ուղեկցված | **ե. Հանցավորի ինքնությունը.**
-ծնող կամ ընտանիքի կամ տան այլ անդամ
-ոչ հարազատ երեխա
-պետական ծառայող
-իրավաբանական անձ
-ոչ պետական ծառայող, ոչ ազգական մեծահասակ հանցավոր | **զ.Իրավախախտման կատարման վայրը.**
-տուն
-դպրոց
-այլ կառույց
-այլ |

		-օտարերկրացի է այլ	այլ ծանր հանցագործություն -այլ հանցագործություն		

16. Տարվա ընթացքում երեխաների դեմ կատարված հանցագործություններով դատարան ուղարկված գործերի թիվը.

ա. զոհի սեռը	բ. զոհի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը)	գ. Զոհերի հատուկ խոցելիության հետ կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	դ. Հանցագործության բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	ե. Հանցավորի ինքնությունը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	զ. Տարվա վերջում դատավարության արդյունքը կամ կարգավիճակը. -գործը դադարեցվել է դատարանի կողմից -դատավարությունը կասեցվել է կամ գործն ուղարկվել է լրացուցիչ քննության -դատավարությունը շարունակվում է -մեղադրական դատավճիռ է կայացվել -արդարացման դատավճիռ է կայացվել

17. Տարվա ընթացքում երեխաների դեմ հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը և նշանակված պատիժները կամ միջոցները

ա. տուժողի սեռը	բ. տուժողի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը)	գ. տուժողի հատուկ խոցելիության հետ կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	դ. հանցագործության բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	ե. հանցավորի ինքնությունը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	զ. Նշանակված պատիժները կամ այլընտրանքային միջոցները -մինչև երկու տարի ժամկետով ազատազրկում կամ կալանք -2-5 տարի ժամկետով ազատազրկում -5-10 տարի ժամկետով ազատազրկում -10 տարուց ավելի ժամկետով ազատազրկում -պայմանական (կասեցված) ազատազրկման դատավճիռ -տուգանքներ, հասարակական աշխատանք կամ գույքի բռնագրավում -որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում -հատուկ ուսումնական կամ կրթական կառույցում տեղավորում -այլ դաստիարակչական հարկադրանքի միջոցներ

18. Տարվա ընթացքում հարցաքննված անչափահաս տուժողների և վկաների թիվը

ա.Հարցաքննության պատճառը. -երեխան կարող է հանդիսանալ կամ հանդիսանում է հանցագործության տուժող -երեխան կարող է հանդիսանալ կամ հանդիսանում է հանցագործության վկա	բ. Հարցաքննված երեխաների և անցկացված հարցաքննությունների թիվը. -որպես փաստացի կամ հնարավոր զոհեր կամ վկաներ հարցաքննությանը մասնակցած երեխաների թիվը -անչափահասների մասնակցությամբ ընդհանուր հարցաքննությունների թիվը	գ.Հարցաքննության մասնակցած երեխայի սեռը,	դ.Հարցաքննությա ն մասնակցած երեխայի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը),	ե.Հատուկ խոցելիության հետ կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը),	զ. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	է. Հարցաքննությունը վարողը. -ոստիկանության ծառայող -քննիչ -դատախազ -բժշկական ոլորտի փորձագետ հոգեբանասոցիալական ոլորտի փորձագետ	ը. Կասկածյալ կամ մեղադրյալ հանցավորի ինքնությունը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)

19. Տարվա ընթացքում դատաքննության ժամանակ ցուցմունք տված երեխաները

ա.Երեխայի սեռը	բ. Երեխայի տարիքը (նույնն է, ինչ	գ. Երեխայի դերը.	դ. Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15.	ե. Մեղադրյալի ինքնությունը (նույնն է, ինչ

	առաջարկված 2. ցուցիչը)		- տուժող - վկա		ցուցիչը),		առաջարկված 15. ցուցիչը),

20. Տարվա ընթացքում քրեական գործի նախաքննության և վարույթի ընթացքում օգնություն և աջակցություն տրամադրված տուժող կամ վկա անչափահասների թիվը

| ա. աջակցություն տրամադրված երեխայի սեռը | բ. աջակցություն տրամադրված երեխայի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը) | գ. Հատուկ խոցելիության հետ կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը) | դ.Իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը), | ե.Երեխայի դերը (նույնն է, ինչ առաջարկված 19. ցուցիչը), | զ. Օգնություն կամ աջակցություն տրամադրված պահին վարույթի փուլը.
-քրեական գործի նախաքննություն
-քրեական գործի դատաքննություն
-այլ | է. տրամադրված օգնության կամ աջակցության տիպը.
-երեխայի տարիքին համապատասխան տեղեկատվություն, որը կօգնի երեխային հասկանալ նախաքննության կամ վարույթի բնույթը, երեխայի և այլ մասնակիցների դերը, մասնակցության վերաբերյալ երեխայի տարբերակները, ինչպես նաև երեխայի մոտ կստեղծի վստահություն և կնվազեցնի մասնակցության վախը
-հարցաքննության ընթացքում հնչեցված հարցերն ըմբռնելու և դրանց հասկանալու հարցում անկախ օգնություն կամ աջակցություն
-իրավական օգնություն, որը կօգնի երեխային հասկանալ և կայացնել կարևոր իրավական որոշումներ կամ ներկայացել միջնորդություններ կամ ի կատար ածել երեխայի ընթացակարգային իրավունքները
-երեխայի և նրա ծնողի կամ խնամակալի միջև վիճաբանություններ ծագելու դեպքում հատուկ ներկայացուցչի նշանակում | ը. տրամադրված օգնության կամ աջակցության աղբյուրը.
-պետական կառույց կամ ծրագիր
-հասարակական կազմակերպություն կամ այլ քաղաքացիական հասարակության կազմակերպություն |

21. Տարվա ընթացքում հանցագործության հետևանքներից վերականգնվելու համար ֆիզիկական և/կամ հոգեբանական օգնություն կամ աջակցություն տրամադրված տուժող երեխաների թիվը

ա.երեխայի սեռը	բ. երեխայի տարիքը (նույնն է, ինչ առաջարկված 2. ցուցիչը)	գ.հատուկ խոցելիության հետ կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	դ. իրավախախտման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	ե. օգնության կամ աջակցության տրամադրման պահին վարույթի փուլը. -քրեական վարույթից առաջ և/ կամ ընթացքում (եթե վարույթ կա) -քրեական գործի վարույթից հետո -տրամադրվել են, նույնիսկ եթե քրեական գործի վարույթ չի եղել	զ. տրամադրված օգնության կամ աջակցության տեսակը. -մարմնական վնասվածքից կամ այլ ֆիզիկական հետևանքներից ապաքինվելու համար բժշկական օգնության տրամադրում -հոգեբանական հետևանքներից ապաքինման համար մասնագիտական օգնություն -ընտանիք վերաինտեգրման համար մասնագիտական և ոչ մասնագիտական օգնություն -դպրոցում, աշխատավայրում կամ հասարակության մեջ վերաինտեգրման համար օգնություն, (նույնն է, ինչ առաջարկված 20. ցուցիչը)

22. Տարվա ընթացքում փոխհատուցում կամ այլ միջոցներ տրամադրված հանցագործության տուժող երեխաների թիվը

ա. երեխայի սեռը	բ. երեխայի տարիքը (նույնն է,	գ. հատուկ խոցելիության հետ	դ. իրավախախտ	ե. ստացված փոխհատուցման կամ	զ.փոխհատուցման ստացման	է. տրամադրված օգնության կամ աջակցության աղբյուրը. -դատարանի կողմից նշանակված և անհատապես հանցավորների կողմից

	ինչ առաջարկված 2. ցուցիչը)	կապված գործոնները (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	ման բնույթը (նույնն է, ինչ առաջարկված 15. ցուցիչը)	միջոցի տեսակը. -կորուստների կամ ծախսերի դրամական փոխհատուցում -բարոյական կամ ոչ նյութական վնասների կամ տառապանքի դիմաց դրամական փոխհատուցում -խորհրդանշական հատուցում -այլ	ժամանակ վարույթի փուլը. -քրեական գործի վարույթից առաջ կամ դրա ընթացքում -քրեական գործի վարույթից հետո -քրեական գործի վարույթից անկախ	վճարվող քաղաքացիական վնասներ -դատարանի կողմից նշանակված և պատասխանատու իրավաբանական անձի կողմից վճարվող քաղաքացիական վնասներ -դատարանի կողմից նշանակված և պետության կողմից վճարվող քաղաքացիական վնասներ -միջնորդության կամ հաշտեցման շնորհիվ վճարված փոխհատուցում -այլ

23. Երեխա զոհերի և վկաների գործերով մասնագիտացած իրավապահ մարմինների և արդարադատության աշխատակիցների թիվը

ա. քննիչների, դատախազների և դատավորների թիվը, ովքեր բացառապես կամ հիմնականում զբաղվում են անչափահաս տուժող ներառող քրեական գործերով	բ. ոստիկանության ծառայողների թիվը, ովքեր ավարտել են վերևում նկարագրված թեմաներով հաստատված վերապատրաստման դասընթաց	գ. քննիչների թիվը, ովքեր ավարտել են վերևում նկարագրված թեմաներով հաստատված վերապատրաստման դասընթաց	դ. դատախազների թիվը, ովքեր ավարտել են վերևում նկարագրված թեմաներով հաստատված վերապատրաստման դասընթաց	ե. դատավորների թիվը, ովքեր ավարտել են վերևում նկարագրված թեմաներով հաստատված վերապատրաստման դասընթաց	զ. երեխայի հոգեբանության և զարգացման ոլորտում վերապատրաստված հոգեբանների, պրոֆեսիոնալ սոցիալական աշխատողների և այլ մասնագետների կամ ոչ մասնագետների թիվը, ովքեր քրեական գործի վարույթի ընթացքում կարող են տուժող և վկա երեխաների համար պարբերաբար աջակցող անձինք հանդիսանալ:

24. Տուժող և վկա անչափահասներին աջակցող ծրագրերի թիվը, նրանց բյուջեն, աշխատակազմն ու շահառուները

ա. ծրագրերի թիվը, որոնք հանցագործության տուժող և/կամ վկա երեխաներին որոշակի ծառայություններ են տրամադրում, և գործակալությունները կամ կազմակերպությունները, որոնք այսպիսի ծառայությունները տրամադրում են պարբերաբար. -պետական ծրագրեր, մարմիններ կամ գործակալություններ -ոչ պետական ծրագրեր, խմբեր կամ կազմակերպություններ, որոնք պետական ֆինանսավորմամբ այսպիսի ծրագրեր են իրականացնում -ոչ պետական/քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, որոնք երեխաներին այսպիսի ծառայություններն անկախ են	բ. գործակալությունների, վարչությունների, կազմակերպությունների, խմբերի կամ ծրագրերի թիվը, ովքեր պարբերաբար հանցանքի զոհ և/ կամ վկա երեխաներին տրամադրում են՝ -իրավական օգնություն -հոգեբանասոցիալական օգնություն -ապաստարան կամ այլ նյութական օգնություն -այլ օգնություն	գ. աշխատակազմի թիվը -յուրաքանչյուր կառավարական գործակալության, վարչության կամ ծրագրի, որոնք հանցանքի զոհ երեխաներին և/ կամ վկաներին տրամադրում են վերևում նկարագրված մեկ կամ ավելի տեսակի օգնությունը -յուրաքանչյուր ոչ կառավարական/քաղաքացիական հասարակության կազմակերպության, որ հանցանքի զոհ երեխաներին և/կամ վկաներին պարբերաբար տրամադրում է վերևում նկարագրված մեկ	դ. տարեկան բյուջեն -յուրաքանչյուր կառավարական գործակալության, վարչության կամ ծրագրի, որ հանցանքի զոհ երեխաներին և/ կամ վկաներին տրամադրում է ծառայություններ -պետության կողմից մասնավորապես հանցանքի զոհ և/կամ վկա երեխաներին տրամադրված ծառայությունների համար մասնավոր կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հատկացված ֆինանսական միջոցների չափը -ոչ կառավարական/ քաղաքացիական կազմակերպությունների, որոնք	ե. հանցանքի զոհ/վկա երեխաների թիվը, ովքեր տարվա ընթացքում ստացել են վերոհիշյալ օգնության տեսակներից մեկը կամ մի քանիսը. -յուրաքանչյուր կառավարական ծառայության տրամադրողի կողմից սպասարկված շահառուների թիվը -պետական ֆինանսավորմամբ ծառայություններ տրամադրող յուրաքանչյուր մասնավոր/ քաղաքացիական հասարակության կազմակերպության, խմբի կամ ծրագրի շահառուների թիվը -ոչ պետական ֆինանսավորմամբ ծառայություններ տրամադրող յուրաքանչյուր մասնավոր/ քաղաքացիական հասարակության կազմակերպության, խմբի կամ ծրագրի շահառուների թիվը:

տրամադրում, առանց պետության ֆինանսական աջակցության		կամ ավելի տեսակի օգնություն (առկայության դեպքում)	պարբերաբար հանցանքի զոհ և/կամ վկա երեխաներին տրամադրում են ծառայություններ (եթե հայտնի է)	

25. Տարվա ընթացքում երեխաների դեմ գործված անդրազգային (միջսահմանային) բնույթ ունեցող հանցանքների քրեական գործերի թիվը

ա. երեխաների դեմ գործված հանցանքների վերաբերյալ իրավական փոխօգնության պահանջների թիվը	**բ. երեխաների հանցանքների հետ կապված էքստրադիցիայի (արտահանձնման) պահանջների թիվը**	**գ. Հայաստանի տարածքից դուրս գործված երեխաների դեմ հանցանքի համար Հայաստանում քրեորեն հետապնդված անձանց թիվը**	**դ. Տարվա ընթացքում Հայաստանում գտնվող օտարերկյա երեխաների դեմ գործված, հաշվառված հանցանքների թիվը.**	**ե. Իրավախախտման բնույթը (վերևում տրամադրված տվյալների վերաբերյալ)**	**զ. Տարվա ընթացքում Հայաստանից երեխայի ապօրինի հեռացումն ընդգրկող հաշվառված հանցանքների թիվը.**
-տարվա ընթացքում ստացված հայկական իշխանությունների կողմից -տարվա ընթացքում արված հայկական իշխանությունների կողմից օտարերկյա իշխանություններին -քրեական գործերը, երբ օտարերկյա իշխանությունը տրամադրել է պահանջվող օգնությունը -քրեական գործերը, երբ հայկական իշխանությունները տրամադրել են պահանջվող օգնությունը	-ստացված հայկական իշխանությունների կողմից տարվա ընթացքում -արված հայկական իշխանությունների կողմից տարվա ընթացքում -Հայաստան արտահանձնված մեղադրյալների թիվը -հայկական իշխանությունների կողմից արտահանձնված մեղադրյալների թիվը	-քրեորեն հետապնդված հայերը -քրեորեն հետապնդված օտարերկրացիները	-դեպքերը, երբ զոհ երեխան հայրենադարձվել է և վերամիավորվել իր ընտանիքի կամ խնամակալի հետ -դեպքերը, երբ զոհ երեխային թույլ է տրվել մնալ Հայաստանում՝ ելնելով մարդասիրական կամ նմանատիպ պատճառներից	-երեխայի մարմնավաճառություն -երեխայի պոռնոգրաֆիա -թրաֆիքինգ -առևանգում -անձի դեմ ուղղված այլ բռնի հանցագործություն -այլ	-քրեական գործերի թիվը, երբ երեխան վերադարձվել է Հայաստան և վերամիավորվել է իր ընտանիքի հետ -քրեական գործերի թիվը, որոնք դեռ շարունակվում են -առանց երեխայի ներկայության լուծված քրեական գործերի թիվը:

4. Անչափահասների արդարադատություն խորհրդի գործունեություն

2015 թվականին ՀՀ Արդարադատության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված *«Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում»* ծրագրի շրջանակում անչափահասների արդարադատության ոլորտում խնդիրների, նախատեսվող ծրագրերի, ռազմավարական պլանների համապարփակ, միասնական, համատեղ դիտարկման և մշակման համար ձևավորվել է Անչափահասների արդարադատության միջգերատեսչական խորհուրդ, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 30 -ի N633-Ա հրամանով:

4.1 Անչափահասների արդադատության խորհրդի նիստեր

Նիստ 1-ին, 07.07.2015թ.

2015 թվականի հուլիսի 7-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, տեղի ունեցավ Խորհրդի առաջին նիստը, որով ՀՀ արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ սկիզբ դրվեց Հայաստանում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված մի նոր նախաձեռնության, որը կարտացոլի անչափահասների արդարադատության համակարգում Հայաստանի Հանրապետության քաղաքականության ուղղությունները՝ բխելով համատեղ հաստատված գործողությունների պլանից: Նպատակն էր շահագրգիռ պետական, միջազգային և հասարակական կազմակերպություններին իրազեկել իրականացվող ծրագրի, անչափահասների արդարադատության ոլորտում ՀՀ արդարադատության նախարարության առաջնահերթությունների վերաբերյալ, ինչպես նաև հայտարարել Խորհրդի ստեղծման մասին:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը, փոխնախարար Սուրեն Քրմոյանը, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ Հենրիետ Արենսը, ներկայացուցչի տեղակալ Ռադոսլավ Ժեհակը, Երեխաների պաշտպանության ծրագրերի պատասխանատու Ջորջ Աբաջյանը, պետական գերատեսչությունների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում ՀՀ արդարադատության նախարարի կողմից կարևորվեց նախաձեռնությունը, քանի որ այն կնպաստի ոլորտում օրենսդրական երաշխիքների ձևավորմանը, մասնավորապես՝ օրենքին առնչվող երեխաների վերաբերյալ միասնական տեղեկատվության համակարգի ստեղծման, արդարադատության ոլորտում տարբեր մարմինների կարողությունների բարձրացման, երեխաների հետ վարվելակերպի նոր մոտեցումների ամրագրմանն ու դրանց կիրառման խթանմանը՝ ընդգծելով ոլորտում բոլոր մարմինների համատեղ և համագործակցված աշխատանքի կարևորությունը:

Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցչի կողմից կարևորվեց արդարադատության համակարգի հետ առնչվող երեխաների իրավունքների, բարոյական և հոգեբանական պաշտպանվածության հարցը:

Քննարկումների հիմնական առանցքն էր.

✓ *Անչափահասների արդարադատության ոլորտում գործող օրենսդրության կիրառման, օրենսդրական դաշտի կատարելագործումը,*

✓ *Օրենքին առնչվող անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման բարելավումը,*

✓ *Օրենքին առնչվող անչափահասների համար համապատասխան ծառայությունների զարգացումը,*

✓ *Շահագրգիռ կառույցների միջև արդյունավետ համագործակցության ձևավորումը:*

Հաշվի առնելով տարբեր գերատեսչությունների դերակատարության և համագործակցության կարևորությունն անչափահասների արդարադատության համակարգի կայացման գործում՝ միջոցառման ընթացքում քննարկվեց նաև անչափահասների արդարադատության հարցերով խորհրդի ստեղծման անհրաժեշտության հարցը՝ հիմք դնելով Խորհրդի ստեղծմանը:

Հանդիպումն ամփոփվեց հետագա գործողությունների պլանավորմամբ:

Նիստ 2-րդ, 08.12.2015թ.

Թեման էր «*Անչափահասների արդարադատության տեղեկատվական շտեմարանի ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությունը*», որի նպատակն էր բարելավել անչափահասների արդարադատության ոլորտի վերաբերյալ համապարփակ ցուցիչներ ձևակերպելու և այն տրամադրելու գործընթացը: Հայաստանում օրենքի հետ առնչվող երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է մի քանի գերատեսչությունների կողմից՝ Ոստիկանության, Դատական դեպարտամենտի, Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, Գլխավոր դատախազության, Քննչական կոմիտեի: Անհրաժեշտություն կա ստացված տվյալների համադրմամբ ամբողջականացնել և ձևավորել անչափահասների արդարադատության միասնական շտեմարան:

Նիստի ընթացքում ներկայացվեց ծրագրի փորձագետների կողմից մշակված օրենքին առնչվող անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ցուցիչները, ինչպես նաև վիճակագրական տվյալներ /*Ցուցիչներ օրենքի հետ խնդիրներ ունեցող, վկա եւ տուժող երեխաների համար*/: Քննարկվեցին ցուցիչներն առաձին-առանձին, խորհրդի անդամները ներկայացրեցին առաջարկները և դիտարկումները դրանց լրամշակման նպատակով: (Ամբողջական ցուցիչները տե՛ս սույն տեղեկագրի 70-րդ էջում)

Նիստ 3-րդ, 16.12.2016թ.

Թեման էր «*Միջգերատեսչական համագործակցության կարևորությունը երեխաների համար արդարադատության մատչելիության խնդիրների հասցեագրման հարցում*»: Նիստի ընթացքում վեր հանվեցին անչափահասների արդարադատության ոլորտի առաջնային խնդիրները: Պլանավորվեց հաջորդիվ նիստերի ընթացքում դրանց

դիտարկումը, ինչպես նաև ամփոփվեց 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքները:

Նիստին ներկա էին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, փոխնախարար Սուրեն Քրմոյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Տանյա Ռադոչայ, Երեխաների պաշտպանության ծրագրերի պատասխանատու Ջորջ Աբաջյանը, պետական գերատեսչությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ արդարադատության նախարարը կարևորեց խորհրդի առաջ դրված նպատակները, միջգերատեսչական համատեղ արդյունավետ համագործակցությունը և ոլորտի ամբողջական կայունացումը 2016-2020 թվականների ընթացքում:

Ելնելով խորհրդի նպատակներից՝ եղան բազմաթիվ ելույթներ, առաջարկներ և հարցեր: Քննարկվեց միջգերատեսչական համագործակցության կարևորությունը, խորհրդի նպատակները, գործունեության կարգը և հանդիպումների ձևաչափը:

Նիստի ընթացքում առաջադրվեցին հետևյալ հարցերը և առաջարկները.

✓ Ստեղծել ուղղորդման մեխանիզմներ՝ հայտնաբերում, վերականգնում, ինտեգրում, բազմամասնագիտական մոտեցում, համագործակցության ապահովում և փոխադարձ վստահություն միջգերատեսչական կառույցների միջև,

✓ Համակարգի բարելավում օրենքի հետ խնդիրներ ունեցող զոհ, վկա, տուժող, երեխաների հետ աշխատանքում՝ հանուն երեխայի բարօրության,

✓ Անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացում,

✓ Տեղեկատվության ապահովում երեխայի ճակատագրի մասին՝ որդեգրելուց հետո,

✓ Համայնքային վերականգնողական կենտրոնների գործունեության վերականգնում և զարգացում,

✓ Անչափահասների արդարադատության ոլորտում պատժողական մոտեցումից անցում դեպի կանխարգելում և վերականգնում,

✓ Հանրության իրազեկման բարձրացում,

✓ Արդարադատությանն առնչվող երեխաների տեղեկատվական շտեմարանի ստեղծում:

Հանդիպման ավարտին ներկաները մեկ անգամ ևս փաստեցին, որ Խորհրդի կայունացումը, միջգերատեսչությունների դերակատարությունը և համագործակցությունը անչափահասների արդարադատության ոլորտում կնպաստի համակարգի ամբողջական կայացմանը:

2016 թվականին Խորհրդի աշխատանքները շարունակվեցին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման» ծրագրի շրջանակում:

Նիստ 4-րդ, 08.07.2016թ.

Թեման էր «*Շահագրգիռ կառույցների անչափահասների արդարադատության ոլորտի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքները և կառույցներում առկա*

ռեսուրսները»: Նպատակն էր՝ Խորհրդի անդամներին ներկայացնել 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքները և առկա հանձնարարականները, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների կողմից իրականացված ծրագրերը և տարբեր կառույցների կողմից անչափահասների արդարա-դատության զարգացմանն ուղղված առկա ռեսուրսները:

Նիստին ներկայացվեց 2015թ.-ի ընթացքում Խորհրդի գործունեությունը, ծրագրի շրջանակում իրականացված օրենսդրության վերլուծությունը և առաջարկությունները՝ երեխայի շահերի կամ իրավունքների պաշտպանության տեսանկյունից և ոլորտի վիճակագրությունը, ԵԻԿ (Երեխաների իրավունքների կոմիտե) առաջարկությունները և հանձնարարականները՝ անչափահասների արդարադատության ոլորտի վերաբերյալ, ինչպես նաև, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված Անչափահասների Հանցագործության կանխարգելման ռազմավարության նախագիծը:

Անչափահասներին վերաբերող օրենսդրության վերլուծությունն ուղղված էր հստակեցնելու երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ գործող օրենսդրության բացթողումները: Ըստ նախնական արդյունքների, օրենսդրության մեջ առկա են մի շարք բացթողումներ և ներկայացվեցին դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ:

Նիստի ընթացքում ևս մեկ անգամ կարևորվեց Խորհրդի գործունեությունը՝ ելնելով հետևյալ հանգամանքներից.

- ✓ *Երեխաների արդարադատությանը վերաբերող իրավահարաբերությունների պատշաճ կարգավորում, իրավական բազայի առկայությունը և օրենսդրությամբ ամրագրված մեխանիզմների ստեղծում և կիրառում,*
- ✓ *Անչափահասների հետ առնչություն ունեցող մասնագետների համար կրթական ծրագրերի առկայություն,*
- ✓ *Անչափահասների արդարադատություն՝ մատչելի, զգայուն ընթացակարգերի և կառուցակարգերի ապահովում,*
- ✓ *Երեխաների համար հավասար և անհրաժեշտ միջոցների ստեղծում, խտրականության բացառում, իրավունքի վրա հիմնված հնարավորության ստեղծում:*

Հանդիպման ավարտին կողմերը նախնական պայմանավորվածություն ձեռք բերեցին ակտիվացնելու միջգերատեսչական համագործակցությունը և պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցությունը անչափահասների արդարադատության ոլորտին առնչվող հարցերի շուրջ:

Նիստ 5-րդ /արտագնա/

Խորհրդի գործունեության շրջանակում 2016թ. հոկտեմբերի 27-29-ը տեղի ունեցավ հերթական նիստը: Թեման էր «*Հանցավորության կանխարգելումը, երեխաների համար արդարադատության և ծառայությունների մատչելիությունը երեխայակենտրոն արդարադատությունը*»:

Նպատակն էր համատեղ դիտարկել ոլորտի խնդիրները, մշակել գործողությունների ծրագիր՝ անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման և երեխաների համար արդարադատության և ծառայությունների մատչելիության ապահովման տեսանկյունից: Նիստի ընթացքում ներկայացվեցին Խորհրդի գործունեության ձեռքբերումները, հաջողությունները, ինչպես նաև հետագա ծրագրերը և պլանները:

Արդարադատության փոխնախարար Ս. Քրմոյանը կարևորելով անչափահասն-երի արդարադատության հարցերը՝ նշեց, որ Խորհուրդը ստեղծել է մի հարթակ, որի գլխավոր նպատակն է համատեղ ջանքերի օգնությամբ Անչափահասների արդարադատությունը դարձնել առավել արդյունավետ՝ ներդնելով միջազգային փորձի որոշակի տարրեր, համադրելով Հայաստանի փորձին:

Արդարադատության համակարգի հետ առնչվող երեխաները կարիք ունեն առավելագույնս պաշտպանված լինելու, հակառակ դեպքում այդ երեխաները կարող են բարոյական և հոգեբանական ազդեցություն կրել: Կարևորվեց նաև մասնագետների վերապատրաստումները և դպրոցում անչափահասների ոստիկանության տեսուչների դերը:

Նիստը ներառում էր հետևյալ թեմաների ներկայացումները և դրանց շուրջ իրականացված քննարկումները.

✓ Անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված ռազմավարական ծրագրի նախագիծը,

✓ «Եվրասիա համագործակցության հիմնադրամ»-ի կողմից իրականացված «Հայաստանում երեխաների համար արդարադատության մատչելիությանը նվիրված հետազոտության» արդյունքները,

✓ 2015 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում անչափահասների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների վերաբերյալ ուսումնասիրությունները՝ կարևորելով արդյունավետ սոցիալական ծրագրերի առկայությունը երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստումների, պաշտպանական միջոցների և տուժողներին աջակցելու անհրաժեշտությունը,

✓ 2015 թվականի ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ իրականացված ծրագրի ընթացքում երեխաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման ցուցիչների լրամշակված տարբերակը,

✓ Երեխայի իրավունքների պաշտպանության մոնիթորինգի համակարգի խնդիրները և առաջարկվող լուծումները,

✓ Արդարադատությանն առնչվելու դեպքում երեխաներին տրամադրվող ծառայությունների զարգացման ուղղությամբ դիտարկվեցին նաև միջազգային փորձում արդեն իսկ հաջողված մոդելները, մասնավորապես՝ «Բարնահուսի մոդելը»[203]:

Նիստին հրավիրված էր նաև Վրաստանի փորձագետ Մայա Չոչույան, ով ներկայացրեց Վրաստանում վերջին տարիներին արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները, արտադատական լուծումները՝ մեդիացիայի միջոցով, մասնագետների վերապատրաստումներին ուղղված աշխատանքները, անչափահասների արդարադատության ոլորտում գրանցված հաջողությունները:

Հայաստանում անչափահասների արդարադատության ոլորտի վերաբերյալ նախապես իրականացված հարցումների հիման վրա վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ նիստի ընթացքում Խորհրդի անդամների կողմից առաջարկվել է յուրաքանչյուր խնդրին համապատասխան գործողություն: Աշխատանքները կազմակերպվել են փոքր խմբային քննարկումների տարբերակով, այնուհետև յուրաքանչյուր խմբի կողմից խորհրդի մյուս անդամներին ներկայացվել է խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ, ամբողջականացման նպատակով՝ համատեղ քննարկվել և դիտարկվել են: Ներկայացված գործողությունները հիմք են հանդիսացել սույն տեղեկագրում տեղ գտած Գործողությունների ծրագրի լրամշակման համար (Տե՛ս՝ 98 էջ)

Եռօրյա հանդիպման ավարտին ամփոփվեցին ելույթները, զեկույցները, խմբային քննարկումները, որոնք կնպաստեն անչափահասների իրավունքների պաշտպանության բարելավման գործընթացին, միջոլորտային մոտեցմամբ հայեցակարգային ուղիներ գտնելուն:

Նիստ 6-րդ, 02.12.2016

Թեման էր *«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացման նպատակահարմարությունը:*

Նպատակն էր համատեղ քննարկել «Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» կոնվենցիայի վավերացման դեպքում համապատասխան իրավական կարգավորումների և ծառայությունների ապահովման անհրաժեշտությունը:

---

[203] «Բարնահուս»-ը (բառացիորեն նշանակում է մանկական կենտրոն) երեխայանպաստ, միջդիստիպլինար, միջգերատեսչական կենտրոն է, որը մեկ հարկի տակ համախմբում է տարբեր մասնագետների, ովքեր զբաղվում են երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների դեպքերի հետաքննությամբ և տուժած երեխաներին տրամադրում են համապատասխան աջակցություն: Կենտրոնն իր գործունեությունն ապահովում է ոստիկանության, դատախազության, համալսարանական հիվանդանոցի և երեխաների իրավունքների պաշտպանության տեղական ծառայությունների, ինչպես նաև կենտրոնի գործունեության համար պատասխանատու՝ երեխաների իրավունքների պաշտպանության պետական կառույցների հետ համագործակցության հիման վրա: «Բարնահուս»-ի հիմնական նպատակն է խուսափել երեխայի հետ տարբեր կառույցների կողմից տարբեր վայրերում հարցազրույցներ վարելուց:

Հաշվի առնելով սեռական բռնությունից տուժող երեխաների պաշտպանության հարցը՝ քննարկման ընթացքում մասնակիցների կողմից առաջարկվեց փոփոխություններ և լրացումներ կատարել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, որոնք հնարավորություն կտան բռնությունից տուժող երեխաներին տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:

Արծարծվեցին նաև տուժող երեխաների հետ առնչվող մասնագետների կարողությունների բարձրացման, համայնքահեն ծառայությունների զարգացման, համապատասխան ուղղորդման մեխանիզմների և ընթացակարգի իրավական կարգավորումների հարցերը:

Նիստ 7-րդ, 10.12.2016

2016 թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ «Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման» ծրագրի և խորհրդի 2016 թվականի գործունեության ամփոփիչ միջոցառումը: Այն նպատակ ուներ ներկայացնելու իրականացված ծրագրի հաշվետվողական ամփոփիչ զեկույցը և 2015 թվականից մինչ այդ կատարված աշխատանքներն այդ ուղղությամբ՝ կարևորելով Խորհրդի ստեղծումը, ոլորտում 2017 թվականի ընթացքում նախատեսվող ծրագրերի, ռազմավարական պլանների համատեղ մշակումը:

Նիստի ժամանակ կարևորվեց այն փաստը, որ հնարավոր չէ լիարժեք համարել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ներդրած ջանքերը՝ դրանցում չներառելով երեխաների իրավունքների պաշտպանության հարցը: Այս համատեքստում բարձր գնահատվեց երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ արդարադատության նախարարության և գործընկեր միջազգային կազմակերպությունների միջև առկա սերտ համագործակցությունը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի այդ ուղղությամբ ներդրած ջանքերը:

Հանդիպման ընթացքում ամփոփ ներկայացվեց երկու տարվա ընթացքում անչափահասների արդարադատության խորհրդի գործունեությունը:

Եղան բազմաթիվ առաջարկներ, որոնցից առաջնային համարվեցին հետևյալները.

✓ *Տպագրել ձեռնարկ՝ նախատեսված օրենքին առնչվող երեխաների հետ աշխատանքի, ինչպես նաև որպես օգնություն հատուկ գործերի վարման հեշտացման նպատակով,*

✓ *Ստեղծել հստակ չափորոշիչներ, էթիկական նորմեր ԶԼՄ-ներով երեխաների վերաբերյալ և երեխաների մասնակցությամբ հաղորդումների և լուսաբանումների վերաբերյալ,*

✓ *Ապահովել տուժած երեխաներին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը,*

✓ *Մատչելի դարձնել երեխաների արդարադատության ոլորտում առանցքային դերակատարում ունեցող կայքերի էջերը (ՀՀ փաստաբանական պալատի հանրային պաշտպանի գրասենյակ, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և այլն),*

✓ *Ապահովել օրենքի հետ առնչություն ունեցող երեխաների իրավունքների իրացումը և անհրաժեշտ ծառայությունների տրամադրումը:*

4.2 Երեխաների մասնակցությամբ միջոցառումներ

2016 թվականին սեպտեմբերի 7-ին «*Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման*» ծրագրի շրջանակում իրականացվել է Խորհրդի անդամների հետ երեխաների մասնակցությամբ «Իրավունքների պաշտպանությունը երեխաների աչքերով» խորագրով միջոցառում: Նպատակն էր երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ապահովել երեխաների մասնակցությունը և հնարավորություն տալ երեխաներին ներկայացնելու իրենց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներն իրենց իսկ տեսանկյունից: Միջոցառման նախապատրաստական աշխատանքների շրջանակում նախապես երեխաների հետ կազմակերպվել է խմբային քննարկումներ, որի ընթացքում երեխաների կողմից վեր են հանվել երեխաների իրավունքների պաշտպանության կարիքները, քննարկվել և նախագծվել է նախատեսվող միջոցառման ձևաչափը և օրակարգը: Երեխաները ներգրավվել են տարբեր հաստատություններից, կենտրոնի հետ համագործակցող կառույցներից, ՀԿ-ներից, խնամքի հաստատություններից, մանկատներից, ինչպես նաև՝ Պրոբացիայի ծառայությունից:

Միջոցառման ընթացքում երեխաների կողմից Անչափահասների արդարադատության խորհրդի անդամներին և ներկա հյուրերին ներկայացվեցին երեխայի իրավունքների պաշտպանության և կարիքների թեմաներով ներկայացումներ, եղան քննարկումներ անչափահասների արդարադատության խորհրդի անդամների հետ, ցուցադրվեցին երեխաների կողմից նկարված երեխաների իրավունքների թեմայով նկարներ:

Մասնակցեցին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը, «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գայանե Հովակիմյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երեխաների պաշտպանության բաժնի ղեկավար Հայկ Խեմչյանը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Լիվ Էլին Ինդրեյտենը, Անչափահասների արդարադատության խորհրդի անդամները, այլոք:

Ներկաները կարևորեցին երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված այս նախաձեռնությունը, նրանց ակտիվ ներգրավվածությունը նման աշխատանքներում: Միջոցառումը նշանակալից էր նաև նրանով, որ երեխաներն իրենք են բարձրաձայնում իրենց իրավունքների և խնդիրների մասին:

Միջոցառման ընթացքում երեխաների և պետական տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների միջև հնչեցին հարցուպատասխաններ: Պլանավորվեց երեխաների մասնակցությամբ երեխաների համար հաճախակի կազմակերպել միջոցառումներ:

Երեխաների մասնակցությամբ 2016թ. դեկտեմբերի 10-ին Անչափահասների հարցերով արդարադատության խորհրդի ամփոփիչ նիստից հետո, Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ, «Մուղդուսյան արվեստի կենտրոնի» հետ համատեղ կազմակերպվեց նաև «Իրավունք և հնարավորություն բոլոր երեխաներին» խորագիրը կրող ցուցահանդես: Միջոցառման ժամանակ ցուցադրվեցին կենտրոնի սաների աշխատանքները՝ գեղանկար, խեցեգործություն, քանդակագործություն, կարպետագործություն:

4.3 Կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ

2015 թվականի ընթացքում իրականացված «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի կարևոր բաղադրիչներից էր անչափահասների հետ առնչվող մասնագետների կարողությունների զարգացումը: Այն բխում է երեխաների լավագույն շահից, օրենքին առնչվող երեխաների հետ աշխատանքում զգայուն, տարիքին բնորոշ առանձնահատուկ մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտությունից, ինչն իր հերթին կբերի օրենքին առնչվող երեխաների օբյեկտիվ և շրջահայաց հարցաքննության՝ չվնասելով երեխային:

Այդ նպատակով կազմվել է աշխատանքային խումբ՝ միջազգային փորձագետ Քրիստոֆեր Դեվիդ Գրավեսոնի և ազգային փորձագետ Դավիթ Թումասյանի ներգրավմամբ: Վերջիններիս համահեղինակությամբ մշակվել է նաև «Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները» ձեռնարկը՝ նախատեսված քննիչների, ինչպես նաև օրենքին առնչված երեխաների հետ աշխատող իրավապահ այլ մարմինների աշխատակիցների համար: Ձեռնարկում ներկայացված է միջազգային լավագույն փորձն օրենքի հետ առնչվող երեխաների հետ վարվեցողության վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող (տուժող, վկա, կասկածյալ կամ մեղադրյալ) երեխաների առանձնահատկություններին: Այն նախատեսված է օրենքի հետ առնչվող երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքում երեխաների նկատմամբ զգայուն մոտեցման ձևավորմանը:

Քննիչների վերապատրաստման վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվել ՀՀ Քննչական Կոմիտեի հետ, որի արդյունքում 2015 թվականի դեկտեմբերի 17-ին միջազգային և ազգային փորձագետների՝ Ք. Գրավեսոնի և Դ. Թումասյանի կողմից իրականացվել է 20 քննիչների վերապատրաստում: Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև հարցաքննության ընթացքում ուշադրության կենտրոնում երեխային պահելու կարևորությունը, անչափահասի կարիքների գնահատման հմտություններին տիրապետելու, հետագա քայլերը պլանավորելու, երեխայի լավագույն շահերի և անվտանգության ապահովման մեխանիզմները:

Մասնակիցների կողմից կարևորվեց օրենքին առնչվող երեխաների հետ աշխատողների, այդ թվում քննիչների կարողությունների զարգացման շարունակականության ապահովման անհրաժեշտությունը:

4.4 Հանրային իրազեկում

2016 թվականի «Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման» ծրագրի շրջանակում անչափահասների արդարադատության վերաբերյալ իրականացվել է իրազեկվածության բարձրացում երիտասարդ մասնագետների, ուսանողների շրջանում: Այդ նպատակով Հայաստանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպվել է երեք հանրային դասախոսություն, որպես բանախոսներ հանդես են եկել Խորհրդի անդամները: Միջոցառումներն իրականացվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Հայաստանի պետական համալսարանում, Հայաստանի Հանրապետության փաստաբանների դպրոցում:

Հանրային դասախոսություն 1-ին, 18.10.2016թ.

Փաստաբանական դպրոցում տեղի ունեցավ հանրային դասախոսություն, որի թեման էր՝ «Երեխաների նկատմամբ բռնությունը ընտանիքում. քրեաիրավական և հոգեբանական պաշտպանության խնդիրները»:

Բանախոսներն էին՝ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրական վարչության պետ Դավիթ Թումասյանն ու «Սոցիալական

արդարություն» ՀԿ-ի նախագահ Արշակ Գասպարյանը: Հանդիպմանը մասնակցում էին տարբեր ոլորտների երիտասարդ մասնագետներ, ուսանողներ և փաստաբաններ:

Թեմայի շրջանակներում ներկայացվեց ընտանեկան բռնության տեսակները և օրենքը՝ իրավական տեսանկյունից, բռնության հետևանքը երեխայի հոգեկանի վրա:

Հանդիպման ընթացքում կատարվեց իրական դեպքերի վերլուծություն, առաջադրվեցին գործնական լուծումներ:

Հանրային դասախոսություն 2-րդ, 23.11.2016

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կազմակերպվեց հանրային դասախոսություն «Անչափահասների հանցավորության կանխարգելումը. վերականգնողական արդարադատության մոտեցումներ» թեմայով: Բանախոսներն էին՝ ՀՀ Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արթուր Վարդանյանը և «Փի-էյչ ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Մարիամ Մարտիրոսյանը:

Ներկայացվեցին ավագ դպրոցներում դպրոցական տեսուչների աշխատանքները, «Փի-էյչ ինթերնեշնլ» միջազգային կազմակերպության կողմից իրականացված ծրագրերը, համայնքային վերականգնողական կենտրոնների և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությունը որպես անչափահասների հանցավորության կանխարգելման կարևոր նախապայման:

Հանրային դասախոսություն 3-րդ, 07.12.2016թ.

2016 թվականի ընթացքում Երևանի պետական համալսարանում կազմակերպվեց «Ի՞նչ է սոցիալական ներառականությունը և ո՞րտեղից սկսել» թեմայով հանրային դասախոսություն, որն ուղղված էր սոցիալական ներառականության կարևորությանը:

Բանախոսն էր «Մանկական զարգացման հիմնադրամի» տնօրեն Լուսինե Սիմոնյանը, ով ներկայացրեց, թե ի՞նչ է սոցիալական ներառականությունը, ե՞րբ, ինչո՞ւ և որտեղի՞ց ի հայտ եկավ դրա գաղափարը, ինչպես նաև՝ ովքեր ունեն ներառվելու կարիք:

Սոցիալական ներառականության իրականացման համատեքստում կարևորվեց, մանրամասն նկարագրվեց և ներկայացվեց սոցիալական աշխատողի

մասնագիտական գործունեության, ազդեցության ներուժն ու անհրաժեշտությունը:

Լսարանի կողմից բարձրաձայնվեցին և քննարկվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ օրենքի հետ առնչություն ունեցող երեխաների ներառման քաղաքականության, երեխաների պիտակավորման, խտրականության դրսևորման հիմնախնդիրները:

5. Կարիքների գնահատում և գործողությունների ծրագիր

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Արդյունավետ համակարգում, համագործակցություն և հանրային իրազեկում հանուն երեխաների գործերով արդարադատության մատչելիության բարելավման» ծրագրի շրջանակում իրականացվել է անչափահասների արդարադատության ոլորտի կարիքների գնահատում: Այդ նպատակով անցկացված հարցումներին մասնակցել է Խորհրդի 22 անդամ: Հարցումների միջոցով վեր են հանվել ոլորտում առկա կարիքները, առաջարկվելեն լուծումներ: Խորհրդի արտագնա նիստի ընթացքում մասնակիցների կողմից ևս մեկ անգամ դիտարկվել են առանձնացված կարիքները որպես խնդիր և խմբային աշխատանքի ընթացքում առաջարկվել են դրանց լուծման համար համապատասխան գործողություններ:

N	Խնդիր	Գործողություն	Ակնկալվող արդյունք	Կատարող
1	Իրավապահ համակարգում անչափահասների գործերով մասնակից մարմինների մոտ զգայուն, երեխայակենտրոն մոտեցումների բարելավման անհրաժեշտություն	Ապահովել մասնագիտացում, իրականացնել կարողությունների զարգացման դասընթացներ, վերապատրաստումներ	Իրավապահ համակարգում աշխատողների մոտ անչափահասների հետ աշխատանքում զգայուն, երեխայակենտրոն մոտեցումների ձևավորում, զարգացում	ՀՀ արդարադատության նախարարություն
2	Միասնական մոտեցումների բարելավման անհրաժեշտություն օրենքին առնչվող երեխաների (վկա, տուժող, իրավախախտ) իրավունքների պաշտպանության, երեխայի տարբեր կարիքների և իրավունքների վերաբերյալ	Երեխայի կարիքների գնահատման համար միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում, օրենքին առնչվող երեխաների հետ աշխատող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ապահովում,	Միասնական տեղեկատվական շտեմարանի առկայություն, տեղեկատվության փոխանակման մեխանիզմների բարելավում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, շահագրգիռ այլ կառույցներ
3	Տուժող երեխաների վերաբերյալ տեղեկատվության, վիճակագրական տվյալների համալրման անհրաժեշտություն	Կատարել վարույթ իրականացնող մարմնի կողմից հաշվառման ձևաչափի փոփոխություն և հավաքագրել տուժող երեխաների վերաբերյալ տեղեկատվություններ	Ազգային վիճակագրական ծառայությունում տուժող երեխաների վերաբերյալ տեղեկատվության, վիճակագրական տվյալների առկայություն	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Շահագրգիռ այլ կառույցներ
4	Օրենքին առնչվող երեխաների	Մշակել չափորոշիչներ և իրականացնել	Վիճակագրական տվյալների և	ՀՀ արդարադատության

	կարիքների գնահատման, ուսումնասիրության, վիճակագրական տվյալների կայուն ապահովման անհրաժեշտություն	հարցումներ շահառու անչափահասների շրջանում	անչափահասների խնդիրների վերաբերյալ կոնկրետ և հստակ տեղեկատվության առկայություն, որը կնպաստի մշակվող ծրագրերի արդյունավետության բարձրացմանը	նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
5	Հանրային քաղաքականության մեջ երեխաների մասնակցությամբ հարթակների բարելավման անհրաժեշտություն	Կազմակերպել հանրային քննարկումներ երեխաների մասնակցությամբ	Երեխաների մասնակցության իրավունքի իրացման ապահովում, երեխաների կողմից իրենց վերաբերող հարցերի շուրջ տեսակետներ ներկայացնելու հնարավորություն	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6	Օրենքին առնչվող երեխաների համար մասնագիտացված հոգեբանական ծառայությունների մատչելիության և հասանելիության ապահովում	- Բարելավել ծառայությունների որակն ու մատչելիությունը -Ստեղծել օրենքին առնչվող երեխաներին հոգեբանական ծառայություններ ուղղորդելու մեխանիզմներ	- Օրենքին առնչող երեխաների ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավում, հստակ մեխանիզմների ներդրում - Երեխաների հոգեկանի վրա հոգեբանական ճնշման և տրավմաների ազդեցության կանխում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտե
7	Երեխաների խնդիրներին առաջնային արձագանքման ծառայությունների զարգացման անհրաժեշտություն	- Ստեղծել խորհրդատվական ծառայություններ, թեժ գիծ - Իրականացնել թեժ գծի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ զանգվածային լրատվամիջոցներով	Երեխաների բռնության ենթարկման դեպքերի նվազում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ոստիկանություն
8	Օրենքին առնչվող երեխաների իրավունքների իրացման վերաբերյալ կայուն մոնիթորինգի անհրաժեշտություն	-Լիազորել ՄԻՊ-ին՝ որպես անկախ գերատեսչության, իրականացնելու այդ գործառույթը	Երեխաների իրավունքների իրացման վերաբերյալ հստակ գնահատականների և առաջարկությունների առկայություն	ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
9	Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության	Իրականացնել վերլուծություն և հանրային քննարկումներ «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից	«Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության	ՀՀ արդարադատության նախարարություն

	մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի /Լանցարոտեի / վավերացման անհրաժեշտություն	երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի» կոնվենցիայի վավերցման նպատակահարմարության վերաբերյալ	մասին Եվրոպայի խորհրդի» կոնվենցիայի վարվերացման դեպքում կոնվենցիայով նախանշված նպատակների համար ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման վերաբերյալ հստակ առաջարկությունների առկայություն	
10	Երեխաների միջազգային առևանգման հետ կապված խնդիրների առկայություն, հատկապես ծնողներից մեկի կողմից առևանգումը մյուս ծնողից/Հաագայի կոնվենցիա/	Քննարկել երեխաների միջազգային առևանգման հետ կապված խնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների ձևավորման և կիրառման հարցը	Ծնողների իրավահավասարության ապահովում, ծնողների կողմից երեխաների հոգեբանական տրավմաների ենթարկման դեպքերի նվազում	ՀՀ արդարադատության նախարարություն
11	Արդարադատության ոլորտում հատուկ կարիքով երեխաների համար առանձնահատուկ մոտեցման և ընթացակարգերի ձևավորման անհրաժեշտություն	Մեխանիզմների և ընթացակարգերի ձևավորում, որոնք կապահովեն արդարադատությանն առնչվող երեխաների լրացուցիչ պաշտպանության և աջակցության երաշխիքներ, առանձնահատուկ մոտեցումներ	Հատուկ կարիքներով երեխաների համար հստակ ընթացակարգերի և մոտեցումների ձևավորում՝ ապահովելով երեխայի իրավունքների իրացման հնարավորությունները	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
12	Երեխայի պաշտպանության եռաստիճան համակարգի գործողությունների բարելավման անհրաժեշտություն	Երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի գործունեության բարելավում, ուղղորդելու մեխանիզմների ձևավորում և գործառույթների հստակեցում	Երեխաների պաշտպանության համակարգի գործունեության բարելավում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13	Իրավախախտ անչափահասների համար մասնագիտացված, վերասոցիալականացման ծրագրերի, կրթական միջոցառումների ընդլայնման անհրաժեշտություն	-Մշակել ծրագրեր -Իրականացնել այլ երկրների հետ փորձի փոխանակում -Ապահովել կրթության և զբաղվածությանն ուղղված ծրագրերի իրականացումը, իրականացնել դասընթացներ, անձի վերականգնմանն ուղղված միջոցառումներ	- Քրեակատարողական հիմնարկում անչափահասների համար կրթություն ստանալու իրավունքի իրացման, անձի զարգացման ապահովում, որը կբերի կրկնահանցագործությունների թվի կրճատման - Հստակ փորձարկված ծրագրերի ներդրում, վերասոցիալականացման	ՀՀ արդարադատության նախարարություն, Շահագրգիռ այլ կառույցներ

			ծրագրերի արդյունավետության բարձրացում	
14	Քրեական արդարադատության համակարգում արտադատական լուծումների այլընտրանքի ընդլայնման անհրաժեշտություն երեխաների համար	- Ներդնել մեդիացիայի մեխանիզմ - Ներդնել արտադատական լուծման կիրառումն ընդլայնելու մեխանիզմներ /diversion/	- Անչափահասների արտադատական լուծումների կիրառման ընդլայնում, - կրկնահանցագործու թյունների թվի կրճատում	ՀՀ արդարադատության նախարարություն
15	Պրոբացիայի ծառայողների շրջանում հոգեբանների, սոցիալական աշխատողների և համապատասխան մասնագետների անհրաժեշտություն	Ներգրավել համապատասխան մասնագետներ, զարգացնել պրոբացիայի ծառայողների կարողությունները	Պրոբացիայի ծառայության աշխատակիցների կարողությունների զարգացում,	ՀՀ արդարադատության նախարարություն, Շահագրգիռ այլ կառույցներ
16	Զանգվածային լրատվամիջոցներով հակասոցիալական վարքի գովազդման միջոցով անձի բարոյական արժեհամակարգի վրա բացասական ազդեցության առկայություն	Կրթական սոցիալական գովազդների պատրաստում և ցուցադրում, հեռուստատեսության գործիքների կիրառում՝ ի նպաստ երեխայի առողջ սոցիալականացմանը և զարգացմանը	- հանցավորության կանխարգելում զանգվածային լրատվության միջոցով - իրավական դաստիարակություն և արժեքների բարձրացում	Մշակույթի նախարարություն, Զանգվածային լրատվամիջոցներ, մեդիա կենտրոններ
17	Ընտանեկան բռնության դեպքերով հանցագործությունների դեպքում երեխաների համար մասնագիտացված ծառայությունների մատչելիության ապահովման անհրաժեշտություն	- համայնքում ստեղծել հոգեբանական կենտրոններ համապատասխան մասնագետների առկայությամբ, որոնք հնարավորություն կտան կանխել ընտանեկան բռնությունները	Անչափահասների շրջանում հանցագործությունների թվի կրճատում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, քաղաքացիական հասարակություն
18	Միջոլորտային կայուն համագործակցություն ապահովելու անհրաժեշտություն	- Ուղղորդումների իրականացում, - Շահագրգիռ կառույցների մասնակցությամբ համատեղ հանդիպում քննարկումների կազմակերպում - Անչափահասների արդարադատության Խորհրդի գործունեության շարունակականության ապահովում	Արդարադատության ոլորտում երեխաների համար մատչելիության ապահովում, համակարգված և արդյունավետ իրականացում օրենքին առնչված յուրաքանչյուր երեխայի համար	ՀՀ արդարադատության նախարարություն

19	Երեխայի անձնական տվյալների պաշտպանության մեխանիզմների անհրաժեշտություն	- Անձնական տվյալների պաշպանության մեխանիզմների բարելավում և կանոնակարգում՝ հիմնվելով երեխայի լավագույն շահի վրա - բարեվարքության դասընթացների իրականացում օրենքին առնչվող երեխաների հետ աշխատողների համար	Երեխային անձնական կյանքի և իրավունքների պաշտպանության ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՁԼՄ-ներ
20	Տուժող երեխաների համար անվճար, մատչելի իրավաբանական օգնության տրամադրման անհրաժեշտություն	- Քննարկել և վերլուծել տուժող երեխաների համար անվճար, մատչելի իրավաբանական օգնության ապահովման տեսանկյունից գործող օրենսդրությունը	Առաջարկությունների առկայություն՝ ուղղված տուժող երեխաների համար իրավաբանական օգնության ապահովմանը	ՀՀ արդարադատության նախարարություն
21	Անչափահասների արդարադատության առանձին օրենսգրքի նախատեսման նպատակահարմարության որոշում	Կատարել համապատասխան ուսումնասիրություն ՀՀ-ում Անչափահասների արդարադատության վերաբերյալ առանձին օրենսգիրք ունենալու անհրաժեշտության վերաբերյալ	Ուսումնասիրության արդյունքում համապատասխան առաջարկության ներկայացում	ՀՀ արդարադատության նախարարություն
22	Արդարադատության ոլորտում 18-21 տարեկան երեխաների՝ որպես առանձին խմբի, մոտեցման բացակայություն	«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում (փոփոխություններ 109-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում)	Անչափահասները մինչև նրանց 21 տարեկան դառնալը կպահվեն միևնույն քրեակատարողական հիմնարկում բացառապես այն դեպքում, եթե ցուցաբերել են դրական վարքագիծ	ՀՀ արդարադատության նախարարություն
23	Անչափահասների գործերով մասնագիտացված դատարանների, դատավորների օրենսդրորեն նախատեսում	«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում (փոփոխություններ 16-րդ հոդվածում և 2.1 գլխում)	Օրենքով կնախատեսվի անչափահասների մասնակցությամբ գործերի բաշխումն անչափահասների գործերով մասնագիտացված դատավորներին	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ
24	Մինչդատական և դատական վարույթներում երեխաների հետ աշխատող մասնագետների կարիք	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	Օրենքի հետ առնչություն ունեցող երեխաների հետ աշխատող մասնագիտացված մասնագետների մասնակցության ապահովում	ՀՀ արդարադատության նախարարություն

25	Անչափահաս տարիքում կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատման հնարավորության ընդլայնում	ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում՝ հիմք ընդունելով Պեկինյան կանոնների 17 կետի գ. Ենթակետը (փոփոխություններ 14-րդ գլխում)	Երեխաների կրկնազոհացման դեպքերի նվազեցում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն
26	Ամուսնալուծության դեպքում դատական գործընթացի բարելավում՝ ի շահ երեխայի	ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում (ընտանեկան գործերով վարույթների առանձնահատկությունների նախատեսում)	Երեխայի լավագույն շահը որոշելու համար դատարանին իր նախաձեռնությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու հնարավորության նախատեսում (ապացույցներ, տեղեկություններ պահանջելու, փորձաքննություն նշանակելու, պատասխանողի կամ նրա գույքի հետախուզում հայտարարելու	ՀՀ արդարադատության նախարարություն

Հավելված 1

ՀՀ արդարադատության նախարարի
2016 թվականի դեկտեմբերի
30 -ի N633-Ա հրաման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Կ Ա Զ Մ

ՍՈՒՐԵՆ ՔՐՄՈՅԱՆ	Խորհրդի նախագահ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
ՌԱԴԿԱ ՌՈՒԲԻԼԻՆԱ	ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Մարդու իրավունքների հարցերով պատասխանատու
ՆԵԼԼԻ ԴՈՒՐՅԱՆ	ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության պետ, ոստիկանության գնդապետ
ԱՍՏՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության վարչության պետ
ԳԵՂԱՆՈՒՇ ԳՅՈՒՆԱՇՅԱՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
ՄՀԵՐ ՀԱԿՈԲՅԱՆ	ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպչավերահսկողական և իրավական վարչության պետի տեղակալ
ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ՀՀ դատական դեպարտամենտի իրավական վերլուծության, ՀՀ դատական իշխանության ինքնակառավարման մարմինների բաժնի պետ
ՆՈՒՆԵ ՓԱՇԱՅԱՆ	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման վարչության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ
ՀԱՅԿ ՔՈՉԻՆՅԱՆ	ՀՀ արդարադատության նախարարության ՔԿՎ Կազմ-վերլուծական և միջազգային համագործակցության բաժնի պետ, արդարադատության գնդապետ
ՆԵԼԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության սոցիալական ոլորտի և բնապահպանության

	վիճակագրության բաժնի պետ
ԷԴՈՒԱՐԴ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
ՌՈՒԶԱՆՆԱ ՂԼԵՉՅԱՆ	ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ծրագրերի և մոնիտորինգի վարչության գլխավոր մասնագետ
ԶԻՆԱՎՈՐ ՄԵՂՐՅԱՆ	ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ծրագրերի գծով խորհրդական
ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ	Հայաստանի արդարադատության ակադեմիայի գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ
ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Միջազգային կազմակերպությունների վարչություն, Մարդու իրավունքների և հումանիտար համագործակցության բաժին, ատաշե
ՄԱՐԻՑԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության Իրավապահ մարմինների համագործակցության ծրագրի պատասխանատու
ԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ	Եվրասիա համագործակցության հիմնադրամի «Կրոնական հանդուրժողականության և խտրականության դեմ պայքարի խթանումը Հայաստանում» նախագծի ղեկավար
ՄԱՐԻԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	«Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հայկական մասնաճյուղի տնօրեն
ՆԵԼԼԻ ԹՈՒՄԱՍՅԱՆ	Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի հայաստանյան ծրագրերի համակարգող
ՄԻՐԱ ԱՆՏՈՆՅԱՆ	Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն»-ի տնօրեն
ԱՐՏԱԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի նախագահ
ԵՆՈՔ ՇԱՏՎՈՐՅԱՆ	«Հույս և օգնություն» ՀԿ-ի նախագահ
ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ	Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն
ԱԻԴԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ	«Վորլդ Վիժն զարգացման և բարեգործության» միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի Երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար
ԱՐՇԱԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ	«Սոցիալական Արդարություն» ՀԿ-ի նախագահ
ԱՐՍԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ	Փորձագետ
ԳԱՅԱՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ	Խորհրդի քարտուղար

Հավելված 2

Ոլորտի իրավակարգավորումներին ուղղված միջազգային փաստաթղթերը
(Միջազգային պայմանագրեր, հանձնարարագրեր, գործողությունների պլաններ)

1. Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների Երրորդ գագաթնաժողովում ընդունված Գործողությունների պլանը (Վարշավա, 16-17-ը մայիսի 2005թ.):

2. Նախարարների կոմիտեի Rec(91)11 հանձնարարականը՝ երեխաների և երիտասարդ չափահասների սեռական շահագործման, պոռնոգրաֆիայի, մարմնավաճառության, ինչպես նաև նրանց թրաֆիքինգի մասին;

3. Նախարարների կոմիտեի Rec(2001)16 հանձնարարականը՝ սեռական շահագործումից երեխաներին պաշտպանելու մասին;

4. Կիբերտարածության մեջ կատարվող հանցագործությունների մասին կոնվենցիան (ETS N185);

5. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (CETS N197);

6. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիան (1950թ. ETS N5);

7. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996թ. ETS N163) ;

8. Երեխաների իրավունքների իրականացման մասին եվրոպական կոնվենցիան (1996թ. ETS N160);

9. Միավորված ազգերի կազմակերպության
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, մասնավորապես դրա 34-րդ հոդվածը;
- Երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի մասին հավելյալ արձանագրությունը;
- Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու և պատժելու մասին արձանագրությունը;
- Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը,

- Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիան Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացման անհապաղ միջոցառումների մասին:

10. Եվրոպական միության Խորհրդի Երեխաների սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի շրջանակային որոշումը (2004/68/JHA), Եվրոպական միության Խորհրդի Քրեական դատավարություններում տուժածների կարգավիճակի մասին շրջանակային որոշումը (2001/220/JHA) և Եվրոպական միության Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին շրջանակային որոշումը (2002/629/JHA);

11. Ստոկհոլմյան հայտարարությունը և գործողությունների պլանը՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 1-ին Համաշխարհային կոնգրեսում (27-31-ը օգոստոսի 1996թ.), Յոկոհամյան միջազգային պարտավորությունները՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 2-րդ Համաշխարհային կոնգրեսում (17-20-ը դեկտեմբերի 2001թ.), Բուդապեշտյան պարտավորությունները և գործողությունների պլանը՝ ընդունված Երեխաների կոմերցիոն նպատակով սեռական շահագործման դեմ 2-րդ Համաշխարհային կոնգրեսի նախապատրաստական կոնֆերանսում (20-21 նոյեմբերի 2001թ.), Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի S-27/2 բանաձևը՝ «Երեխաների համար պատշաճ աշխարհ» և «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ» եռամյա ծրագիրը, ընդունված Երրորդ գագաթնաժողովի արդյունքում և մեկնարկած Մոնակոյի կոնֆերանսում (4-5-ը ապրիլի 2006թ.):

12. Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին ընդունված է՝ 20.11.1989, ուժի մեջ է՝ 22.07.1993. «Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցները պաշտպանելու երեխային ծնողների, օրինական խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող ցանկացած այլ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից, ներառյալ՝ սեռական չարաշահումը: Պաշտպանության այդպիսի միջոցներն անհրաժեշտության դեպքում ներառում են սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին, ինչպես նաև երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ վերը նշված դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու, բուժելու, և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության՝ դատական գործ հարուցելու համար:» (Հոդված 19), «Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր

անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:» (Հոդված 34), «Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային պաշտպանել սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից: Այդ նպատակով մասնակից պետությունները, մասնավորապես, ներպետական, երկկողմ և բազմակողմ մակարդակներով ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխարգելեն երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնկության մեջ կամ այլ ապօրինի սեռական պրակտիկայում օգտագործելը, շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը:» (Հոդված 34)

13. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտրական արձանագրություն ուժի մեջ է՝ 30.07.2005

14. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, 2005թ.:

Տպաքանակը՝ 100
Տպագրությունը՝ լազերային-թվային, ֆորմատ A4

«Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ

375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
հեռախոս 574406, ֆաքս 574453
էլ. հասցե՝ info@lawinstitute.am

Կազմի լուսանկարը՝ Դանիլա Ասլանյան, 5 տ.,
հաճախում է նախադպրոցական հաստատություն
© UNICEF/Armenia 2016/Pirozzi